

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԿՆՅԱՓՅԱՆ

ԼԵԶԱԿԱՆ ԵՎ
ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ
ԽՈՍՈՒՅԹՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ՏԱՐԻԵԼԻ ԿՆՅԱԶՅԱՆ

**ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022**

ՀՏԴ 811.111:81'27:81'23
ԳՄԴ 81.432.1+81.006.2
Կ 624

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Խմբագիր՝ ՀՀ ԳԱ թղթակից անդամ, ր.գ.դ.,
պրոֆեսոր Ս. Գասպարյան
Գրախոսներ՝ ր.գ.դ., պրոֆեսոր Ն. Հարությունյան
ր.գ.դ., պրոֆեսոր Գ. Մուրադյան

Կնյազյան Ա.

Կ 624 Լեզվական և հանրամշակութային գենդերային դրսևորումները
անգլիական երգիծական խոսույթում / Ա. Կնյազյան.- Եր.:
ԵՊՀ հրատ., 2022.- 238 էջ:

Աշխատանքի արդյունքները հետաքրքրություն են ներկայացնում հանրամշակութաբանության, հանրալեզվաբանության, գործաբանության, հոգելեզվաբանության, կոնֆլիկտաբանության համար: Դրանք հնարավորություն են ընձեռում առավել ճշգրիտ պատկերացնելու ժամանակակից լեզվագիտության նոր ուղղության՝ գենդերային լեզվաբանության բավականին խայտաբղետ պատկերը և կարող են լայն կիրառություն գտնել տարբեր գիտահետազոտական ուսումնասիրություններում, այս թեմային առնչվող ավարտական և մագիստրոսական աշխատանքներում: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել նաև ընդհանուր լեզվաբանության, հոգեբանության, միջմշակութային հաղորդակցության, քրեագիտության, գենդերային հետազոտությունների հատուկ դասընթացներում: Հետազոտությունը կարող է օգտակար լինել հասկանալու հաղորդակիրների գենդերային պատկանելությունից կախված աշխարհընկալման հուզարտահայտչական տարբերությունները և դրանց դրսևորումներն անգլիական երգիծական խոսույթում:

ՀՏԴ 811.111:81'27:81'23
ԳՄԴ 81.432.1+81.006.2

ISBN 978-5-8084-2542-2

© ԵՊՀ հրատ., 2022
© Կնյազյան Ա., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
Գլուխ առաջին	
Աշխարհի պատկերի լեզվամշակութային առանձնահատկությունները կարծրատիպային պատկերացումներում.....	11
1.1. Լեզուն որպես մշակույթի բացառիկ երևույթ	11
1.2. Աշխարհի լեզվական և ազգային պատկերը	16
1.3. Արժեհամակարգի լեզվական արտահայտությունը.....	23
Ծանոթագրություն.....	27
Գլուխ երկրորդ	
Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները.....	34
2.1. Անեկդոտի ժանրը. Նրա կառուցվածքի և բովանդակության առանձնահատկությունները.....	34
2.2. Երգիծական գործառույթների իրացումը անեկդոտի ժանրում.....	44
Ծանոթագրություն.....	47
Գլուխ երրորդ	
Գենդերային կարծրատիպերի արտացոլումն անգլիական «կենցաղային» անեկդոտներում	52
3.1. Անգլիական «կենցաղային» անեկդոտների գենդերային կարծրատիպերի հանրամշակութային բնութագիրը.....	52
3.2. Գենդերային ագրեսիան անգլիական «կենցաղային» անեկդոտներում.....	97
Ծանոթագրություն.....	113

Գլուխ չորրորդ	
Գենդերային անհատի հուզազգացական խոսքի	
շարահյուսական առանձնահատկությունները.....	120
Ծանոթագրություն.....	165
Գլուխ հինգերորդ	
Ոչ խոսքային և հարախոսքային հաղորդակցության	
գենդերային հայեցակերպը երգիծական խոսույթում.....	166
5.1. Տղամարդկանց և կանանց հուզազգացական	
հաղորդակցության ոչ խոսքային միջոցները	166
5.2. Տղամարդկանց և կանանց հուզազգացական	
հաղորդակցության հարախոսքային միջոցները	191
Ծանոթագրություն.....	206
Օգտագործված գրականության ցանկ.....	210

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում կարելի է փաստել գենդերային հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության աճը և գիտական ինքնուրույն ուղղության ձևավորումը, որի առանցքում լեզվի և հաղորդակցության գենդերային տեսանկյուններն են:

Գենդերային հետազոտություններ իրականացվում են ինչպես լեզվի մակարդակում՝ բառապաշար, դարձվաձաբանություն, անվանաբանություն (Телия 1991; Артемова 2000; Фатыхова 2001; Слышкин 2004; Григорян 2004; Брутян 2008), այնպես էլ զանազան խոսույթներում՝ գրականություն և բանահյուսություն, քաղաքականություն (Lakoff 1975; Табурова 1999; Исцепс 2002; Footitt 2002; Гриценко 2003), ոչ պաշտոնական շփումներ (West 1984; West & Zimmerman 1987; Holmes 1995; Tannen 1994; Coates 2004; West, Michelle, Kramarae 1997) գիտական հաղորդակցություն (Kotthoff 2001):

Գենդերը (սոցիալական կամ հանրամշակութային սեռը) լեզվաբանական կարգ չէ, սակայն դրա բովանդակությունը կարելի է բացահայտել լեզվական կառույցների վերլուծության միջոցով: Գենդերային ուսումնասիրությունների միջգիտակարգային բնույթը (հանրամշակութային, լեզվամշակութաբանական) չի նշանակում հետազոտության լեզվաբանական մեթոդներից հրաժարում:

Ավանդաբար լեզվի և այն կրողների սեռի փոխադարձ կապի հիմնախնդիրը համարվել է այն գիտակարգերի մենաշնորհը, որոնք կողմնորոշված են նաև կենդանի խոսքի վերլուծությանը՝ հանրա- և հոգելեզվաբանությունը (Горошко 1995; Холод 1997; Грошев 2000; Стернин 2002; Кирилина 2002 և այլն), արտասահմանյան ֆեմինիստական լեզվաբանությունը (Bem 1993;

Cameron 1996 և այլն): Առանձնակի կարևորություն է ձեռք բերում գեղարվեստական տեքստում «գենդերային անհատի» ուսումնասիրությունը (Герознак 1999; Степанова 2000):

Լեզուն՝ որպես հասարակական գիտակցության արդյունք, արտացոլում է տվյալ մշակույթի համար հատկանշական գենդերային հարաբերությունները և ամրագրում դրանք լեզվական կարծրատիպերի տեսքով, որոնք էլ իրենց կնիքն են դնում անհատի վարքագծի և նրա լեզվական հանրայնացման գործընթացների վրա: Ըստ այդմ էլ՝ մենք գենդերային կարծրատիպերը վերլուծել ենք լեզվական կառուցվածքի միջոցով: Նման մոտեցումը, մեր համոզմամբ, առավելագույնս համապատասխանում է լեզվաբանական գենդերաբանության խնդիրներին, որը զբաղվում է լեզվի և գենդերի փոխադարձ կապի ուսումնասիրմամբ:

Հանրույթի բաժանումը երկու խմբի՝ տղամարդկանց և կանանց, մշտապես գոյություն է ունեցել մարդկային հասարակության մեջ, յուրաքանչյուր անհատի համար ամրագրվել է տղամարդու կամ կնոջ գենդերային դեր: Հետագայում դրա հիման վրա ձևավորվել են տղամարդկանց և կանանց վարքագծային առանձնահատկությունների, նրանցից ակնկալվող արձագանքների և գործողությունների՝ միայն տղամարդկանց կամ միայն կանանց համար ընդունելի գործունեության տեսակների վերաբերյալ որոշ ընդհանրական պատկերացումներ, որոնք հասարակական գիտակցության մեջ ամրակայվել են որպես գենդերային կարծրատիպեր և կարևոր դեր են խաղում հանրույթի և դրանում մարդու գործունեության ընթացքում:

Գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունների հետազոտության **լեզվական նյութը** կենցաղային թեմատիկայով անգլիական անեկդոտներն են: Անեկդոտների տեքստերի բովանդակության վերլուծության հիման

վրա վեր են հանվել թեմաներ, որոնցում արտացոլված են կանանց և տղամարդկանց բնորոշ գծերի կամ գործողությունների վերաբերյալ ամենատարածված կարծրատիպային պատկերացումները, ինչպես նաև անգլիական «կենցաղային» անեկդոտներում խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային մակարդակներում առանձնացվել են հուզարտահայտչական նշույթները: Վերլուծության են ենթարկվել ավելի քան 1000 անգլիական «կենցաղային» անեկդոտներ: Նյութի ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել հույզեր արտահայտող այն տարրերը, որոնք համապատասխանում են մեր հետազոտության մեջ բարձրացվող հիմնախնդիրներին:

Հաշվի առնելով ձևավորվող գիտական ուղղության բազմաթիվ տեսական հարցերի ոչ բավարար մշակվածությունը և ֆեմինիստական գաղափարախոսության աճող ազդեցությունը՝ մեր հետազոտությունում դիտարկվել են լեզվաբանության մեջ գենդերի ուսումնասիրման մեթոդաբանական հիմնախնդիրներ, քննարկվել են բանավիճային դրույթներ: Բացահայտվել են ֆեմինիստական լեզվաբանության մեթոդաբանական մոլորությունները, և մշակվել է արականության և իգականության՝ որպես լեզվամշակութային հասկացությունների համալիրի հետազոտման մեթոդիկա՝ հիմնված լեզվի ուսումնասիրման հանրալեզվաբանական սկզբունքների և լեզվամշակութաբանական մոտեցման վրա: Մշակված մեթոդաբանության կիրառմամբ հետազոտվել և բացահայտվել են գենդերային տարբերությունների գործառության առանձնահատկությունները երգիծական խոսույթում:

Գենդերային տարբերությունների վերհանման կարելի է հասնել հիմնախնդրի նկատմամբ տարբեր մոտեցումներ զուգակցող այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են՝ նյութի

որակական և քանակական վերլուծությունը, հետազոտվող միավորների, դրանց զուգահեռ կապերի հաճախականության ուսումնասիրությունը հանրամշակութային և լեզվական գիտակցության հետազոտման լեզվաբանական և հանրալեզվաբանական մեթոդների համադրմամբ:

Հասարակության հանրամշակութային առանձնահատկությունները, ազգային խառնվածքի և հոգեկերտվածքի յուրահատկությունները, էթնոմշակութային և գենդերային կարծրատիպերը անխուսափելիորեն դրսևորվում են հաղորդակցվող տղամարդկանց և կանանց խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային վարքագծերում՝ դրանով իսկ հաստատելով ոչ միայն հանրույթի ավանդական բաժանումը երկու տարածքների՝ տղամարդկանց և կանանց, այլև դրանցում սեռադերային այն կարծրատիպերի արտացոլումը, որոնք բավականին հաստատուն ամրագրված են հասարակական և լեզվական գիտակցության մեջ: Ընդ որում, խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային հուզարտահայտչական որոշարկիչների քանակը, որն ըստ էության արտահայտում է հաղորդակցվողների հուզավիճակը, գլխավորապես պայմանավորված է զայրույթի հույզի առկայությամբ, որը գերակայում է տղամարդկանց խոսքային վարքագծում, և ուրախության հույզի առկայությամբ՝ կանանց խոսքային վարքագծում:

Հետազոտվող տեսագործնական նյութի քննական վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ գենդերային հայեցակարգի դիտարկման շրջանակներում հիմնական շեշտը դրվում է տղամարդու և կնոջ ոչ թե բնական, կենսաբանական տարբերությունների վրա, որոնք ի սկզբանե կանխատեսված են նրանց ֆիզիոլոգիական յուրահատկություններով, այլև նրանց սոցիալական հետաքրքրությունների, պահանջմունքների և վարքագծի

վրա՝ չանտեսելով նաև գենդերային հատկանիշների սերտ կապը հանրամշակութային յուրահատկությունների հետ:

Վերլուծության արդյունքում պարզաբանվում է, որ տղամարդկանց խոսքը աչքի է ընկնում ագրեսիվություն, հակիրճություն և գերազանցության զգացում արտահայտող լեզվական միավորների կիրառությամբ: Սակայն կարելի է նաև նկատել, որ տղամարդիկ հաճախ անկարող են արտահայտել և նկարագրել իրենց հուզավիճակը, մասնավորապես՝ ջերմ վերաբերմունքը, հոգատարությունը, թախիժը կամ ցավը: Նրանք գլխավորապես վերբալացնում են միայն մեկ հույզ՝ զայրույթը, մինչդեռ կանանց խոսքը առանձնանում է մեղմություն, զիջողություն և զգացմունքայնություն արտահայտող լեզվական միավորների առատությամբ:

Հետազոտությունը մի կողմից վերաբերում է գենդերային լեզվաբանությանը, որի արդիականությունը նախ և առաջ որոշվում է կյանքում և հասարակության մեջ գենդերային հարաբերությունների փոփոխություններով, ինչպես նաև այս կամ այն ձևով այդ հարաբերությունների լեզվական առկայացման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից սույն ուսումնասիրությունը ընդգրկում է խոսույթի տեսության ոլորտը, որը նույնպես գտնվում է ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների հետաքրքրության շրջանակներում: Լեզվաբանության մեջ «կենցաղային» անեկդոտը հիմնականում ուսումնասիրվել է ժանրային յուրահատկությունների և լեզվական միջոցների կիրառման տեսանկյունից, սակայն ուսումնասիրությունից մինչև այժմ դուրս են մնացել գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունները: Ժամանակակից լեզվագենդերաբանության մեջ անգլիական երգիծական խոսույթի նյութի հիման

վրա լեզվական գենդերային տարբերական ոլորտում մինչև այժմ ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Համալիր մոտեցման մշակումն ու իրականացումը թույլ է տալիս աշխատանքում ձևակերպել լեզվում գենդերային գործոնն ուսումնասիրող գիտական ուղղության ընդհանուր տեսական հիմունքները և առաջարկել գենդերային տարբերությունների լեզվաբանական ուսումնասիրության նոր մեթոդաբանություն, որը կարող է հիմք դառնալ ոչ միայն երգիծական խոսքի գենդերային լեզվաբանական հետազոտության, այլև տարաբնույթ խոսույթների քննության համար գենդերային տեսանկյունից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԾՐԱՏԻՊԱՅԻՆ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

1.1. ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵՎՈՒՅԹ

Մշակույթը, լինելով հոգևոր և նյութական արժեքների ամբողջություն, արտահայտում է մարդու և հասարակության պատմական զարգացման մակարդակը: Մշակույթը ներառում է ոչ միայն սովորույթները, ավանդույթները, լեզուն, այլև կարծրատիպերը, որոնք իրենց արտահայտությունն են գտնում մարդկանց կյանքի կազմակերպման ձևերում, նրանց գենդերային փոխհարաբերություններում, ինչպես նաև նրանց կողմից ստեղծվող հոգևոր արժեքներում: Ինչպես արդեն վերը նշվել է, կարծրատիպերը կարևոր են և համարվում են մշակույթի արդյունք, քանի որ հենց դրանք են պայմանավորում մշակութային սպասելիքները:

Հետազոտողները կարծրատիպականացման մեջ ավանդույթի մեխանիզմի միջուկն ու մշակույթի ազգային ինքնատիպությունն են տեսնում, քանի որ կարծրատիպերի միջոցով կարելի է հասկանալ մարդկային ցանկացած վարք (տե՛ս Hoffman, Hurst 1990; Williams, Best 1990 և այլն):

Կարծրատիպերը հանդես են գալիս որոշակի լեզվամշակութային հանրույթի կամ մշակույթի միասնության հետ կապված ամբողջական միջավայրի համար էական իրողությունների չհիմնավորված հատկությունների պահապանների դերում: Այլ կերպ ասած՝ իրողությունների այս կամ այն հատկության մշակութային

աղբյուրը (հավատալիքներ, բանահյուսություն, պատմական ավանդույթներ) կարող է և հայտնի չլինել լեզվակիրներին:

Լեզվամշակութաբանությունն¹ օգտագործում է հումանիտար այլ գիտությունների ազգային բարոյամշակութային փորձի և ազգային հոգեկերտվածքի ճշգրիտ բնութագրման համար համեմատական դիտանկյունից անհրաժեշտ տվյալները, որոնք լեզվական մակարդակում ներկայացվում են որպես լեզվական իրողություններ և կարծրատիպեր: Լինելով բանասիրական գիտակարգ, որը որոշակի համագործակցություն է իրականացնում հումանիտար տարբեր գիտակարգերի հետ (մշակութաբանություն, փիլիսոփայություն և այլն), լեզվամշակութաբանությունը նախ և առաջ կողմնորոշված է դեպի մարդը՝ որպես լեզվակիր, լեզվական անհատականություն, որն իր մեջ կրում է ազգային մտածողության, կարծրատիպերի, աշխարհայացքի, հոգեկերտվածքի առանձնահատկությունները, որոնք բխում են ժողովրդի բարոյամշակութային փորձից: Լեզվամշակութաբանության՝ մարդկության բարոյամշակութային, հոգևոր փորձին դիմելը նրա հետազոտության առարկան կապում է փիլիսոփայական և հոգեբանական կարգերի հետ, որոնք միաժամանակ պատկանում են հումանիտար այլ գիտակարգերի հետազոտության ոլորտներին:

Լեզվամշակութաբանությունը համադրական բնույթի բանասիրական գիտակարգ է, որը համեմատաբար երիտասարդ է, առաջացել է լեզվաբանության և մշակութաբանության սահմանագծում և կարող է դիտարկել կարծրատիպերը լեզվում՝ որպես մշակույթի մարմնավորում:

Է. Սեպիրը հետազոտում է լեզվի և մշակույթի փոխհարաբերությունները, ընդ որում, մշակույթ ասելով՝ նա հասկանում է «սերնդեսերունդ փոխանցվող սոցիալական հմտությունների ամ-

բողջությունը» (Сенир 1993:26-28) կամ այլ կերպ՝ «կենսակերպը բնութագրող սոցիալապես ժառանգված գործնական հմտությունների և գաղափարների ամբողջություն» (Сенир 1993:185): Այսպիսով՝ ընդգծվում է մշակույթի հանրային տեսանկյունը, որը բնորոշ է նաև լեզվամշակութաբանությանը: Ընդունելով, որ լեզուն և մշակույթը փոխկապակցված են, Է. Սեպիրը ճշգրտում է, որ այդ ասելով՝ նկատի է առնվում լեզվի բովանդակությունը կամ լեզվի բառային կազմը (Сенир 1993:194), իսկ մշակույթի և ձևաբանական կամ շարահյուսական համակարգերի զարգացման միջև կապ չկա (Сенир 1993:276): Լինելով «մշակույթի պահպանման միջոց» (Сенир 1993:233)՝ լեզուն կարող է ծառայել որպես խորհրդանշանային ուղեցույց՝ մշակույթը ըմբռնելու համար (Сенир 1993:262)²:

Ռուս լեզվաբանության մեջ լեզվամշակութաբանական հիմնախնդիրն առաջին անգամ քննարկման նյութ դարձավ դարձվածաբանների շրջանում, որոնց կարծիքով լեզվամշակութաբանության աղբյուրը էթնոլեզվաբանությունն³ է, ուստի այն մասնավորապես կարող է համարվել նրա բաղկացուցիչ մասը: Վ. Ն. Տելիան առաջարկում է բացահայտել «մշակույթի կողը» (Телия 1999:20), որը ներկայացնում է հանրույթի՝ կարծրատիպերի մասին մշակութայնացված պատկերացումների այս կամ այն համախումբը:

Հետազոտողներից ոմանք լեզուն և խոսքը ներկայացնում են հավասար հարթության վրա, որտեղ մշակույթն ամենալայն իմաստով ընկալվում է որպես բովանդակություն, իսկ լեզուն՝ նշյալ բովանդակության գոյության ձև: Մասնավորապես ընդգծվում է այն, որ մշակույթը գիտելիքների, կարծրատիպերի որոշակի ծավալ է, որոնք մարդկությունն է մշակում՝ համարժեքորեն մեկնաբանելու այն ամենը, ինչ խոսում և անում են մարդիկ: Ընդ

որում, այդ կարծրատիպերը այս կամ այն ձևով դրսևորվում են հաղորդակցության մեջ: Մշակույթի այսօրինակ ընկալման դեպքում լեզվամշակութաբանության խնդիրն է մի կողմից պարզաբանել, թե ինչ է իրենից ներկայացնում նշյալ տեղեկատվությունը (տվյալ դեպքում՝ կարծրատիպը), որի օգնությամբ տեղի է ունենում հասարակության շփումն աշխարհի հետ, մյուս կողմից՝ թե ինչպես է նշյալ տեղեկատվությունը (կարծրատիպը) նյութակա-նանում, այսինքն՝ արձանագրվում և ձեռք բերում փոխանցվելու կարողություն⁴:

Տարբեր մշակույթների համեմատությամբ զբաղվող լեզվաբանները առաջարկում են տիպաբանական-բնութագրական մոտեցման շրջանակներում իրականացնել լեզվամշակութաբանական հետազոտություններ, որոնք ըստ էության պետք է լինեն տիպաբանական, քանի որ այս կամ այն լեզվամշակույթի բնութագրական նկարագրությունն անհնար է առանց տիպաբանության⁵: Լայնածավալ հարցադրումներ կատարելով՝ հեղինակները պնդում են, որ լեզվամշակույթների տվյալների հաշվառումը կարևոր է ինչպես լեզուների, այնպես էլ մշակույթների ուսումնասիրությունների բնագավառում (Снитко 1999)⁶:

Բազմաթիվ հետազոտողներ, փորձելով բացահայտել լեզվի և մշակույթի միջև գոյություն ունեցող էական կապը, դիմում են մշակութաբանության բնագավառում շրջանառվող «հասկացույթ» երևույթին⁷:

Ինչպես երևում է վերոնշյալ մոտեցումներից, կախված լուծվող խնդիրների շրջանակից՝ լեզվամշակութաբանությունն իր բովանդակությամբ ներկայանում է տարաբնույթ: Սակայն կարևոր է նշել, որ լեզվամշակութաբանությունը, անկասկած, իր գլխավոր խնդիրն է համարում լեզուն և մշակույթը փոխկախվածության մեջ դիտարկելը: Ընդ որում, եթե լեզվի և մշակույթի

փոխհարաբերությունների դիտարկումը ավանդաբար կատարվում էր տարանջատ՝ մեկ լեզվաբանության, մեկ էլ մշակութաբանության բնագավառում, ապա նոր գիտակարգի ի հայտ գալը նշանակում է, որ նորաստեղծ գիտական առարկայի շրջանակներում պետք է միասնաբար օգտագործվեն ինչպես լեզվաբանական, այնպես էլ մշակութաբանական մոտեցումները: Լեզվի և մշակույթի փոխհարաբերության այդօրինակ քննության համար հիմք է ծառայում դրանց գոյաբանական (օնթոլոգիական) միասնությունը:

Նշված մոտեցումները լույս են սփռում լեզվի, կարծրատիպերի և մշակույթի հարաբերակցության հիմնախնդրի տարբերկողմերի վրա, միևնույն ժամանակ նախանշում հիմնախնդրի լուծմանը հասնելու որակական նոր ուղիներ հանրամշակութաբանության, լեզվամշակութաբանության և գենդերաբանության բնագավառներում:

1.2. ԱՇԽԱՐՀԻ ԼԵՁՎԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Կարծրատիպը հիմնվում է անհատի գլխում ձևավորված աշխարհի պատկերի վրա, ըստ էության, այդ պատկերի անբաժանելի մասն է. այն ներառում է նաև նրա օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականները: *Կարծրատիպ* եզրույթը վերաբերում է լեզվի և մշակույթի բովանդակային կողմին, այսինքն՝ երևույթ է, որը կապվում է «աշխարհի պարզունակ պատկերի» հետ: Լեզուն և մշակույթը կարևոր դեր են խաղում անձի ձևավորման հարցում:

Կարծրատիպերի լեզվաբանական արժևորման համար գիտնականները հաճախ կարևորում են աշխարհի գիտական և պարզունակ պատկերների հակադրությունը և շեշտադրում այն գաղափարը, որ պատկերն ըստ էության բազմեզր հոգեկան երևույթ է, որը լեզուն շաղկապում է մտածողությանը, շրջապատող աշխարհին, մշակութային-գեղագիտական իրողություններին և լեզվում գործառնվող բարդագույն վերացական հասկացությունների ու կարգերի բովանդակությանը: Աշխարհի գիտական պատկերը կապված է այնպիսի աշխարհընկալման հետ, որը միջնորդավորված է գիտական գիտելիքով, մինչդեռ աշխարհի պարզունակ պատկերը լեզվակիրների գիտակցության մեջ ձևավորվում է անմիջականորեն իրական աշխարհի ճանաչողության ընթացքում և իր վրա է կրում ազգային, լեզվական, պատմամշակութային փորձի ազդեցությունը (Зайнгуллин 2005:103):

Աշխարհի լեզվական պատկերի⁸ հետազոտությունը նպաստում է լեզվի և մշակույթի, լեզվի և մտածողության, լեզվի և կարծրատիպերի հիմնախնդիրների լուծմանը: Դա պայմանավորված է ինչպես այն գործառնություններով, որոնք լեզուն իրականացնում է մարդու և հասարակության կենսագործունեության ընթացքում, այնպես էլ աշխարհի լեզվական պատկերի ձևավոր-

մանը նպաստող գործոններով, որոնք կարող են բաժանվել առնվազն երեք խմբի՝ միջավայրը, մարդու հոգեկանը (ներառյալ գիտակցականն ու ենթագիտակցականը) և լեզվի զարգացման օրենքները:

Այսպիսով՝ աշխարհի լեզվական պատկերի ձևավորմանը մասնակցում են օբյեկտիվ աշխարհը, մտավոր աշխարհը և ինքնին լեզվական աշխարհը (Колшанский 1990), որոնց միջև կապող օղակն է լեզվական անհատը (Караулов 1987): Աշխարհի լեզվական պատկերը, բացի իր լեզվական յուրատեսակությունից, պարունակում է զանազան կարծրատիպեր, որոնք մարդկային էությունը հասկանալու համար կարևոր դեր են խաղում:

Աշխարհի լեզվական պատկերի ուսումնասիրությունը կապված է տարատեսակ կարծրատիպերի, ենթադրույթների, եզրահանգումային գիտելիքների ու իմաստների բացահայտման հետ: Սույն հետազոտության մեջ մենք առաջնորդվում ենք աշխարհի պատկերի մասին այն սահմանումով, որ այն մարդու աշխարհընկալման հիմքում ընկած աշխարհի նախնական համապարփակ պատկերն է, որն աշխարհի էական հատկությունները ի ցույց է դնում այդ կրողների ընկալման մեջ և մարդու ամբողջ հոգևոր ակտիվության արդյունքն է, այսինքն՝ աշխարհի պատկերը օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ ընկալումն է (Постовалова 1988:21)⁹:

Գիտնականների մեծ մասը ընդունում է աշխարհի ազգային յուրահատուկ պատկերների և կարծրատիպերի գոյությունը: Սակայն հանդիպում են նաև համընդհանուր կարծիքին հակադրվողներ: Այսպես՝ Գ.Վ. Կոլշանսկին կտրականապես ժխտում է առանձին ժողովուրդների կողմից աշխարհի յուրահատուկ ընկալման հնարավորությունը: Ընդ որում, որպես գլխավոր փաստարկ բերում է մտածողության՝ բոլոր մարդկանց համար ընդ-

հանուր բնույթի վերաբերյալ դրույթը, իսկ ժողովուրդների՝ գոյություն ունեցող աշխատանքային և սոցիալական փորձի տարբերությունները, նրա համոզմամբ, որևէ կերպ չեն կապվում աշխարհի պատկերի հետ (Колшанский 1990):

Հարցի տեսության քննական ուսումնասիրության արդյունքում մենք հակվում ենք ընդունելու Յու. Ն. Կարաուլովի տեսակետն այն մասին, որ աշխարհի լեզվական պատկերը կազմված է կայուն և փոփոխական մասերից (Karaylov 1987), և գալիս ենք այն եզրակացության, որ համաժամանակյա նկարագրության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել զարգացման նախընթաց գործոնները, որոնք նպաստում են ի հայտ եկած փաստերի և կարծրատիպերի բացատրությանը:

Գիտական, այդ թվում նաև լեզվաբանական գրականության մեջ աշխարհի լեզվական և հասկացութային պատկերների հարաբերակցության հարցի վերաբերյալ նույնպես կարելի է հանդիպել տարբեր տեսակետների: Օրինակ՝ Գ. Վ. Կոլշանսկու կարծիքով, աշխարհի լեզվական պատկերը՝ որպես աշխարհի մասին մարդու գիտելիքների ամբողջություն, լեզվում առանձին գոյություն չունի: «Աշխարհի պատկեր» եզրույթը բացառապես մտավոր գործունեության հատկանիշ է և կիրառելի է միայն մտածողության առնչությամբ (Колшанский 1990:37)¹⁰: Աշխարհի հասկացութային պատկերը աշխարհի լեզվական պատկերից հարուստ է, քանի որ դրա ստեղծմանը մասնակցում են մտածողության տարբեր տիպեր, այդ թվում՝ ոչ խոսքային (Серебрянников 1988:6): Այսպիսով՝ աշխարհի լեզվական և հասկացութային պատկերների հարաբերակցության հիմնախնդրի մասին աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հարցի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր դիրքորոշումներ: Այսքան տարբեր կարծիքների միավորման հնարավորությունը նախ

և առաջ բխում է աշխարհի լեզվական և հասկացութային պատկերների հարաբերակցությունն ընդունելու անխուսափելիությունից, և ապա՝ աշխարհի պատկերների «համընկման» գոտու առկայությունից: Դա հնարավորություն է ընձեռում աշխարհի լեզվական և հասկացութային պատկերների վերլուծման եղանակով հետազոտել զանազան կարծրատիպեր (տվյալ դեպքում գենդերային կարծրատիպեր): Սակայն չպետք է մոռանալ, որ աշխարհի լեզվական և հասկացութային պատկերների բացարձակ համընկնումը հնարավոր չէ: Ավելի շուտ դա նրանց որոշակի համեմատելիությունն է, քանի որ լեզուն և մտածողությունը միատեսակ երևույթներ չեն: Լեզուն բովանդակությամբ ավելի աղքատ է, քան մտածողությունը: Ինչպես նաև այն պակաս շարժունակ է, որի հետևանքով աշխարհի լեզվական պատկերը կարող է կեղծ պատկերացումներ, կարծրատիպեր պահպանել, որոնք տվյալ պահին գոյություն չունեն աշխարհի հասկացութային պատկերում: Տարբեր է աշխարհի այդ պատկերներն ըմբռնելու աստիճանը: Աշխարհի լեզվական պատկերում այն զգալիորեն ցածր է: Աշխարհի լեզվական պատկերը համապատասխան լեզվամշակութային հանրույթի շրջանակներում չի առանձնանում խորը ինքնատիպությամբ, քանի որ հազիվ թե տեղին է խոսել միևնույն լեզվին տիրապետող առանձին անհատների շրջանում աշխարհի լեզվական պատկերների բազմազանության մասին: Ավելի շուտ դա աշխարհի լեզվական պատկերի ամբողջ ծավալին բազմակողմանիորեն տիրապետելն է: Աշխարհի հասկացութային պատկերը, ընդհակառակը, չափազանց բազմատեսակ է, այդ թվում՝ մեկ լեզվամշակութային հանրույթի ներկայացուցիչների շրջանում (տե՛ս Котлаанский 1990): Լեզուն, հանդես գալով որպես աշխարհի հասկացութային պատկերի առարկայացման ձևերից մեկը, իր միջոցներով է արտահայտում որոշ տիպական

տարբերակներ, այսինքն՝ կարծրատիպեր, որոնք բնորոշ են սուբյեկտների առավել մեծաթիվ խմբերի ներկայացուցիչներին: Դրա հետևանքը աշխարհի լեզվական պատկերում հակասական կարծիքների, կարծրատիպերի հակոտնյա գնահատականների, պատկերացումների առկայությունն է:

Ինչ վերաբերում է աշխարհի լեզվական և հասկացութային պատկերների հարաբերակցությանը, մեր կարծիքով, սխալ է աշխարհի պատկերի տվյալներն իրար հավասարեցնել, քանի որ դա հակասում է լեզվի և մտածողության սահմանազատման մասին մեթոդաբանական սկզբունքներին: Մյուս կողմից, կարծում ենք, հնարավոր է նաև խնդրի լուծման այլ տարբերակ: Ըստ այդմ՝ աշխարհի լեզվական ու հասկացութային պատկերներում ի հայտ են գալիս ինչպես բանավոր մտածողության հետ փոխկապակցված «համընկնումներ», այնպես էլ միայն լեզվին կամ բացառապես մտածողությանը ենթակա ոլորտներ: Սակայն այս դեպքում էլ լեզուն հաճախ հանդես է գալիս որպես գիտակցության մեջ համապատասխան կերպարների, պատկերացումների, գուգորությունների, կարծրատիպերի առաջացման միջոց:

Ըստ Վ. ֆոն Հումբոլդտի և նրա հետևորդների՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի լեզվի հետազոտությունը՝ որպես ճանաչողության միջոց: Կարևորվում է նաև լեզվի՝ շրջապատող իրականությունն արտացոլելու (Гумбольдт 1985:349) և մտածողության ու ընկալման ձևերն ամրագրելու ունակությունը (Баһрепдер 1993)¹¹: Լեզուն դիտվում է որպես «անհատական-ժողովրդական կյանքի հոգևոր մարմնավորում» (Гумбольдт 1984:92): Այս շրջանում ուշադրություն է դարձվում նաև աշխարհընկալման ձևին, որը ներկայացված է լեզվում: Շեշտադրվում է նաև լեզվի ակտիվ ազդեցության հնարավորությունը լեզվակիրների վրա¹²: Վ. ֆոն Հումբոլդտը և Յ. Լ. Վայսգերբերը, լեզվի

անմիջական ազդեցությունը կապում են լեզվակիրների շրջանում աշխարհի պատկերի ձևավորման հետ¹³:

Աշխարհի միասնական պատկերի մեջ լեզուն թույլ է տալիս մարդուն միավորել իր ամբողջ փորձը, որի արդյունքում լեզվական հանրույթի անդամներին փոխանցվում են զանազան պատկերացումներ և կարծրատիպեր¹⁴:

Աշխարհի լեզվական ընկալման տարբեր տիպեր ցուցադրում են տրամաբանության տարբեր տեսակներ: Այսպես՝ առաջ է քաշվում աշխարհի հասկացության պատկերի, մարդու վարքագծի վրա աշխարհի լեզվական պատկերի ազդեցության հնարավորության հարցը: Աշխարհի պատկերը ստեղծվում է ոչ միայն լեզվի ազդեցությամբ, այլև աշխարհը յուրացնելու արտալեզվական գործոնների ներգործությամբ, օրինակ՝ մարդկանց կենսափորձով: Աշխարհի պատկերի հասկացությունը պատկանում է այն հիմնական հասկացությունների թվին, որոնք արտահայտում են մարդու և նրա կեցության առանձնահատկությունները, նրա փոխհարաբերությունը աշխարհի հետ՝ ներկայացնելով աշխարհի նախնական համընդհանուր պատկերը, որն ընկած է մարդու աշխարհընկալման հիմքում, ներկայացնում է աշխարհի էական հատկությունները: Կարծրատիպերը այն կրողների ընկալման մեջ են և մարդու ամբողջ հոգևոր ակտիվության արդյունք:

Լեզվական համակարգում է դրսևորվում մարդու, սոցիալական, ազգային և համամարդկային էությունը: Ուստի աշխարհի ազգային պատկերների ձևավորումը օրինաչափորեն կապված է լեզուների կողմից ո՛չ միայն ժողովուրդների յուրօրինակ փորձն ամրագրելու, այլև ամբողջ մարդկության մշակութային ու հանրային փորձի հետ:

Սույն հետազոտության մեջ առանձնահատուկ շեշտվում է աշխարհի լեզվական պատկերի արժևորման տեսանկյունը: Մեր կարծիքով, արժեքային մոտեցման առանձնահատկությունը հիմնարար դեր է խաղում աշխարհի ազգային պատկերի ձևավորման մեջ: Դա պայմանավորված է նրանով, որ աշխարհի պատկերը հենվում է արժևորման սկզբունքի վրա, որը հանդես է գալիս որպես դրանում առարկաների ստորակարգման գլխավոր սկզբունք: Արժեհամակարգի գնահատումը մեծ տեղ է զբաղեցնում մարդու կենսագործունեության մեջ: Գնահատումը ճանաչողության հետ մեկտեղ աշխարհի արտացոլման միջոց է գիտակցության մեջ (Постовалова 1988:55): Որպես կանոն՝ ընդգծվում է ճանաչողական և գնահատողական հարաբերությունների հավասարաչափ անհրաժեշտությունը, իսկ հիմնական տարբերությունը համարվում է դրանց առանձնահատուկ դերը: Աշխարհի արժեքային պատկերի հետազոտությունը հնարավոր է գնահատական պարունակող լեզվական կառույցներն ուսումնասիրելու օգնությամբ: Ընդ որում, մենք ելնում ենք գիտնականների մեծ մասի կողմից ընդունված այն դրույթից, որ արժեքը առարկայացվում է գնահատականի մեջ:

Մշակույթի բովանդակության մեջ արժեքի¹⁵ կարգի առանցքային դերը կանխորոշում է արժեքի հատուկ տեղը նաև աշխարհի լեզվական պատկերում: *Աշխարհի լեզվական պատկերի* հասկացությունը ենթադրում է աշխարհի արժեքային պատկերի ուսումնասիրություն, և եթե երկու համակարգերի փոխգործակցությունը բնութագրելու մեթոդաբանական հիմքը լեզվակիր ու մշակութակիր անհատի աշխարհայացքն է, աշխարհընկալումը, ապա արժեքի հասկացությունը կարող է դառնալ այդ բնութագրության հիմնական կարգ:

1.3. ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Այս ենթագլխում դիտարկվում են աշխարհի արժեքային պատկերի հիմնական բաղադրիչները, հստակեցվում են մոտեցումներ առավել կարևոր արժեքանական հասկացությունների վերաբերյալ, ցույց են տրվում լեզվում արժեհամակարգի արտացոլման ձևերը: Մշակույթը գաղափարների, բարոյական նորմերի, կարծրատիպերի, ավանդույթների, սովորույթների և այլնի ամբողջության մեջ ներառում է մաս կազմող սոցիալական վարքի նորմերը, որոնց հետևելը անվերապահ պայման է՝ հասարակությունը որպես միասնական ամբողջություն պահպանելու համար:

Բազմաթիվ գիտություններ՝ փիլիսոփայությունը¹⁶, տրամաբանությունը, բարոյագիտությունը, գեղագիտությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան զբաղվում են արժեքների ու գնահատականների ուսումնասիրությամբ, առաջարկվում են արժեքների տարբեր դասակարգումներ ու տեսություններ, գնահատականների էությունների և բնույթի վերաբերյալ տեսակետներ: Ընդ որում, հիմնական հասկացությունների մեկնաբանման տարբերություններն ի հայտ են գալիս ոչ միայն առանձին գիտաճյուղերի ներկայացուցիչների դիրքորոշումներում, այլև միևնույն գիտական ուղղության շրջանակներում: Հարցին միանշանակ լուծումներ չի տալիս նաև արժեքանությունը, որում արժեքի հասկացությունը առանցքային դեր է խաղում: Այսպիսով՝ պետք է արձանագրենք, որ չնայած հիմնախնդրի նկատմամբ ակնհայտ հետաքրքրությանն ու ակտիվ քննարկումներին՝ մինչև այժմ գիտությունը «արժեք» և «գնահատական» կարգերի վերաբերյալ, ինչպես նաև դրանց հետ կապ ունեցող հասկացությունները

քննելու հարցում միասնական մոտեցում չի մշակել:

Արժեքանական նշանակությունների շուրջ լեզվաբանական ուսումնասիրություններն սկսել են կատարվել համեմատաբար վերջերս: Գնահատողական իմաստաբանությանն են նվիրված Ն. Դ. Հարությունովայի, Ե. Մ. Վոլֆի, Վ. Ն. Տելիայի և այլոց աշխատությունները (Арутюнова 1998; Вольф 1988; Телия 1996):

Աշխարհի արժեքային պատկերի հետազոտման անհրաժեշտությունը որոշվում է այն գործառույթներով, որոնք մարդու կենսագործունեության մեջ կատարում են արժեքները: Մշակույթը որոշվում է արժեքների միջոցով, իսկ արժեքը իր հերթին՝ պահանջմունքների: Արժեքանական առանցքային հասկացությունը և աշխարհի արժեքային համակարգի հիմնական միավորը «արժեքն» է: Նշյալ հասկացությունը հիմնական է նաև լեզվամշակութաբանության մեջ¹⁷: Արժեքը որպես արժեքային առարկայություն հասկանալուց բացի, ավանդական մոտեցման մեջ շեշտվում է արժեքների կապը մարդկային պահանջմունքները բավարարելու հետ:

Արժեհամակարգը որպես կանոն կարող է նաև արտացոլվել հանրության կողմից ընդունված և սահմանված կարծրատիպերում: Հանրամշակութային կարծրատիպերում հնարավոր է առանձնացնել կոնկրետ և վերացական արժեքներ, որոնք որոշակիորեն փոխկապակցված են:

Գնահատողական սուբյեկտի առումով գոյություն ունեն *անհատական, խմբային, ազգային և համամարդկային արժեքներ*: Լեզուն արտացոլում է ազգային, սոցիալ-խմբային, իրավիճակային-դերային արժեքներ հանրամշակութային կարծրատիպերում: Մշակույթի զարգացման փուլերի տեսանկյունից կարելի է առանձնացնել *համընդհանուր արժեքներ*, որոնք հատուկ են մշակույթի կայացման ամբողջ ընթացքին, *պատմական արժեք-*

ներ, որոնք մշակույթին բնորոշ են միայն որոշակի փուլում (Бабаева 2004:34-35):

Գնահատողականությունը իմաստաբանության լայն ըմբռնման տեսանկյունից պատկանում է իմաստաբանական կարգերին: Բառի կառուցվածքում գնահատողական իմաստային բաղադրիչը փոխգործակցության մեջ է մտնում իմաստաբանական և գործաբանական տարբեր կարգերի հետ (Вольф 1986:106)¹⁸: Գնահատման առարկան շատ լայն ըմբռնում ունի, սակայն այսպես թե այնպես այն կապված է մարդու հետ: Ուստի իրավացի է Ի. Ա. Ստեռնինը՝ պնդելով, որ գնահատման առարկա առավել հաճախ դառնում են անձինք կա՛մ անմիջականորեն, կա՛մ իրենց հատկանիշների, գործողությունների միջոցով, ընդ որում, այս կամ այն հաճախ գնահատողական խոսքը կամ արտահայտությունը, որը նույնիսկ չի վերաբերում որևէ անձի, այնուամենայնիվ անուղղակիորեն բնութագրում է այս կամ այն անձին (Стернин 1979:101):

Գնահատողական կարծրատիպերը կարևոր դեր են խաղում մարդու և հասարակության կյանքում: Որոշակի փուլում հասարակության լեզվագիտակցության մեջ հաստատվում է աշխարհի ազգային-մշակութային ընկալման այն կարծրատիպերի համակարգը, որոնք առօրյա-կենցաղային գիտակցության մեջ յուրովի դառնում են չափման ձև: Միասնական լեզվագիտակցության մեջ կարող են միաժամանակ գոյություն ունենալ տարբեր գնահատողական կարծրատիպեր¹⁹:

Լեզվում արժեհամակարգի արտացոլման հիմնական միջոցը գնահատականի լեզվական կարգն է: Դրանում հատուկ դեր ունի լեզուն, քանի որ խոսքը սոցիալական փորձը անհատներին փոխանցելու միջոց է, և այդ փորձի շրջանակներում հանրային նորմերը, վարքը, լինելով մշակույթի ամենակայուն հատվածնե-

րից, ներկայացնում են մշակույթի բազմակողմանի գործառույթի դրսևորման ազգային յուրահատուկ ձև (Тарасов, Сорокин 1977:18): Յուրաքանչյուր ազգ ունի մտածելակերպի ներքին կառուցվածք և վարքի անկրկնելի կարծրատիպեր, որոնք սերնդեսերունդ կարող են փոփոխվել: Արտաքին աշխարհի հետ համեմատվելը որոշվում է մարդու ինչպես ազգային, այնպես էլ գաղափարական դիրքորոշումներով: Դրանց ամբողջությունը կարող է ձևավորել ամբողջ հանրույթի տրամադրությունը: Այսպիսով՝ կյանքի ու կենցաղի բոլոր ոլորտներում գաղտնի գոյություն ունեցող նորմերը տարբեր արագությամբ փոփոխվում են այնքանով, որքանով տվյալ ազգի կողմից ընդունվում են որպես համակեցության միակ հնարավոր ձև:

Բոլոր ժողովուրդների համար ընդհանուր արժեքները բաշխվում են տարբեր հարաբերակցությամբ: Արժեքների յուրաքանչյուր համակարգ ներկայացնում է կարծրատիպերի սանդղակ, որում առարկաները կանոնակարգված են համապատասխան ձևով: Նախապատվությունների, կարծրատիպերի այդ սանդղակը հասարակության տարբեր անդամների, ինչպես նաև տարբեր մշակույթների շրջանում միանման չէ: Միևնույն գաղափարները, առարկաներն ու կարծրատիպերը կարող են կարևոր տեղ զբաղեցնել որոշ մարդկանց կամ մշակույթների արժեհամակարգում, միջին տեղ՝ մյուսների, և կարող են ընդհանրապես տեղ չգտնել երրորդների արժեհամակարգում՝ համարվելով «ժխտելի արժեքներ» (Арнольд 1993:22):

Արժեքները բազմազան են և հասարակության բոլոր անդամների և տարբեր մշակույթների միջև հավասարաչափ բաշխված չեն: Այդ է վկայում այն փաստը, որ տարբեր ժամանակաշրջանների ու ժողովուրդների տեսանկյունից օրենքները, կարծրատիպերն ու սովորույթները կարող են տարբեր ձևով ընկալ-

վել: Սակայն, չնայած արժեհամակարգերի հնարավոր անհամապատասխանությանը, գոյություն ունի ցանկացած արժեհամակարգի կառուցման միասնական հիմք՝ ընդհանուր բարոյական արժեքներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվամշակութաբանությունը ձևավորվեց 1960-ական թթ. վերջին և 1970-ական թթ. սկզբին: Իր զարգացման ընթացքում այն ընդհանուրից անցել է դեպի բուն լեզվաբանական մշակութաբանություն, ապա՝ 1970-ականների վերջերից՝ համապարփակից դեպի համեմատական լեզվամշակութաբանություն: Լեզվամշակութաբանությունը, որը «լեզու և մշակույթ» հիմնախնդրի մեկնաբանության միակողմանի դետերմինիզմից խույս տալը իր հիմնական խնդիրն է դարձրել, կոչված է երկու երևույթներն էլ դիտարկելու անքակտելի միասնության մեջ: Դա բավականին բարդ խնդիր է, քանի որ երկու երևույթներն էլ՝ թե՛ լեզուն և թե՛ մշակույթը, իրենց բնույթով չափազանց բարդ են:

Լեզվամշակութաբանությունը համադրական տիպի գիտակարգ է, որը մշակույթն ուսումնասիրող գիտությունների և լեզվաբանության սահմանազծում է: Դրա ուսումնասիրության առարկան հասարակության կեցության ազգային ձևերն են, որոնք վերարտադրվում են լեզվական հաղորդակցության և կարծրատիպերի համակարգում և հիմնված են նրա մշակութային արժեքների վրա, այսինքն՝ այն ամենը, ինչը կազմում է «աշխարհի լեզվական պատկերը»: Պատահական չէ, որ լեզվամշակութաբանությունը կողմնորոշված է դեպի մշակութային նոր արժեհամակարգ, որը նոր մտածողության, հասարակության ժամանակակից կյանքի, այդ թվում նաև երկրի մշակութային կյանքի տարբեր ոլորտների մասին փաստերի, երևույթների, կարծրատիպերի և տեղեկատվության լիակատար մեկնաբանման ծնունդ է: Տվյալ ժողովրդի մշակույթի լիարժեք, անկողմնակալ և ամբողջական մեկնաբանումը ենթադրում է մշակույթի և լեզվի սերտ կապի հաշվառում (Бородин 1997):

2. Նշված հայացքները հարաբերակցության մեջ են մշակույթի նկատմամբ ժամանակակից նշանագիտական մոտեցման հետ, որը մասնավորապես զարգացրեց Յու. Մ. Լոտմանը: Մշակույթը ընկալվում է որպես միասնական միտք և միասնական հիշողություն, այսինքն՝ որոշ տեղեկությունների պահպանման ու փոխանցման և նորերի մշակման անհատական մեխանիզմ (Лотман 1992:200):

3. Էթնոլեզվաբանությանը հետաքրքրում է լեզվի և մշակույթի կապը, լեզվական, ազգամշակութային և ազգահոգեբանական գործոնների փոխազդեցությունը լեզվի գործառության և զարգացման ընթացքում, լեզվաբանական մեթոդների միջոցով մշակույթի «բովանդակային պլանի», ժողովրդական հոգեբանության և առասպելաբանության հետազոտության հնարավորությունը՝ անկախ դրանց ներկայացման ձևից (բառ, իր, ծես և այլն) (տե՛ս Вежбицкая 1997; Воробьев 1993; Карасик 1996): Որպես այդպիսին՝ էթնոլեզվաբանությունն առանձնացավ XX դարի առաջին քառորդում՝ Ֆրանց Բոասի և նրա առաջին աշակերտների շնորհիվ: Նախկինում էթնոլեզվաբանական հետազոտություններում իմաստաբանական ուսումնասիրությունները բացառվում էին՝ պայմանավորված այդ ժամանակահատվածում նկարագրական լեզվաբանության առաջացմամբ ու հաստատմամբ: Իմաստաբանական կողմի հանդեպ հետաքրքրությունը վերականգնվեց 1950-ական թթ. սկզբին նեոհումբոլդտականության ամերիկյան տարբերակի շրջանակներում՝ ձևավորվելով Սեպիրի և Բ. Լ. Ուորֆի լեզվաբանական հարաբերականության կանխավարկածի քննարկման հիման վրա, ըստ որի՝ շրջապատող աշխարհի իրողությունների համընկնելու պայմաններում աշխարհի համանման պատկերներ կարող են ստեղծվել միայն լեզվական համակարգերի որոշակի համապատասխանության դեպքում: Լեզվի և մշակույթի փոխհարաբերության հիմնախնդիրը դառնում է նրանց հետազոտությունների գլխավոր խնդիրը և իրականացվում հակադրական (կոնտրաստիվ) լեզվաբանության (եվրոպական լեզուների համեմատությունը ամերիկյան հնդկացիների լեզուների հետ) մեթոդների հիման վրա: Այդ հետազոտությունները ապացուցում են լեզվի որոշիչ դերը մշակույթի ձևավորման, տրամաբանության և քերականության կար-

գերի ձևի և բովանդակության, շրջապատող աշխարհի և մարդկային վարքագծի ընկալման առանձնահատկությունների մեջ (Сенир 1993; Уорф 1960):

4. Օգտվելով Ֆ. դը Սոսյուրի (*langue, parole, langage*) տերմինային բառապաշարից՝ Վ. Տ. Կլոկովը ներկայացնում է լեզվի ու մշակույթի փոխադարձ կապը՝ որպես նշանագիտական փոխկապվածություն: Հետազոտողը նշում է, որ լեզվի և մշակույթի կապը քննելիս առավել կարևորվում են լեզվի այն տեսանկյունները, որոնք իրենց դրսևորումն են գտնում մշակույթի հենց նկարագրական տեսանկյուններում (լեզվում որպես միկրոհամակարգ, այսինքն՝ այնտեղ, որտեղ լեզուն հանդես է գալիս մի կողմից որպես նշանագիտական կոդ (*langue*), և մյուս կողմից՝ որպես խոսքային համակարգ (*parole*), ինչպես նաև լեզվում որպես մակրոհամակարգ, այսինքն՝ այն ոլորտում, որտեղ լեզուն իր գործառական էությանմբ է հանդես գալիս (*langage*): Վ. Տ. Կլոկովն ընդգծում է.

- Մշակույթի կապը լեզվի նշանագիտական կոդի (*langue*) հետ այն է, որ մշակույթի կողմից օգտագործվում է լեզվական համակարգի հարացուցային ու շարույթային կառուցվածքայնությունը, որն ամրագրում, պահպանում ու փոխանցում է հասարակության հայեցակարգային և հուզագնահատողական պատկերացումներն աշխարհի մասին:
- Մշակույթի կապը խոսքի (*parole*) հետ հայտնաբերվում է փաստերի մեջ, որոնք հասարակության անդամների միջև խոսքային հաղորդակցության միջոցով մշակութային տեղեկատվության իրական մարմնավորումն են:
- Մշակույթի կապը լեզվի գործառական էության (*langage*) հետ ի հայտ է գալիս լեզվի ներքին շերտավորման յուրահատկությունների մեջ՝ որպես սեփական ենթալեզուների բարդ համակարգ (Клоков 2000:3-15):

5. Որոշ հեղինակներ հակված են լեզվամշակութաբանության խնդիրները հանգեցնելու, այսպես կոչված, մշակութային մեկնաբանության: Այսպես, Ն. Գ. Բրագինան գալիս է այն տեսակետի, որ մշակու-

թայինը լեզվում գոյություն ունի ինքնուրույն, ուստի պահանջում է ինքնուրույն նկարագրություն, որը կարող է իրականացվել իմաստաբանականին զուգահեռ: Ընդ որում, ենթադրվում է, որ դրա մեկնաբանության ձևը ոչ թե բացատրությունն է, այլ մշակութային մեկնությունը (Брагина 1999:133): Նման դեպքում լեզվամշակութաբանությունը կոչված է մշակութային մեկնաբանությամբ հետազոտելու լեզվի և մշակույթի նշանագիտական համակարգերի փոխգործակցության ձևերը:

6. Պատահական չէ, հետևաբար, որ Տ. Ն. Սնիտկոն «*լեզվամշակույթ*» հասկացությունը սահմանում է որպես լեզվի և մշակույթի հատուկ տիպ, որը դրսևորվում է ինչպես լեզվի, այնպես էլ մշակույթի ոլորտներում (Снитко 1999):

7. «*Հասկացույթ*»-ը լեզվաբանական առումով «կատարյալ» աշխարհի առարկա է, որն ունի անվանում և արտացոլում է մարդու պատկերացումը «իրական» աշխարհի մասին (Вежбицкая 1997):

Ն. Դ. Հարությունովան «*հասկացույթ*»-ը բացատրում է որպես այնպիսի գործոնների փոխգործակցության արդյունք, ինչպիսիք են՝ ազգային ավանդույթներն ու բնահյուսությունը, կրոնն ու գաղափարախոսությունը, կենսափորձն ու արվեստի պատկերները, արժեհամակարգերը (Арутюнова 1993:3): Այս առնչությամբ ուշագրավ է Էմիլ Բեն-վենիստի կարծիքը, ըստ որի՝ նյութական մշակույթի երևույթները մշտապես հարաբերակցվում են, զուգադրվում են հոգևոր մշակույթի երևույթների հետ: Ընդ որում, մշակույթի հոգևոր արժեքները ներկայացնող համապատասխան հասկացույթները ասես «թևածում» են դրանց նյութական և զուտ հոգևոր դրսևորումների վրա՝ լիովին իրացվելով կամ նյութականի, կամ հոգևորի ամբողջության մեջ (Бенвенист 1974):

8. «*Աշխարհի պարկեր*» հասկացությունը, որն առաջացել է ֆիզիկայի շրջանակներում և նախապես զարգացել է լեզվաբանությունից հեռու՝ գիտության բնագավառներում, XX դարում դառնում է լեզվաբանական հետազոտության առարկա: «*Աշխարհի պարկեր*»-ի լեզվաբանական ըմբռնման ձևավորումը տեղի է ունեցել գիտության այլ ոլորտներում՝ ստացված արդյունքների ազդեցությամբ:

9. Աշխարհի պատկերը կատարում է իրեն վերապահված գործառույթներ և զարգանում է օրինաչափորեն: Դրա բաղադրատարրեր են համարվում արտացոլման սուբյեկտը, դրա օբյեկտը և արդյունքը (Постовалова 1988): Աշխարհի պատկերի կարևորագույն հատկություններից է նաև զանազան կարծրատիպերի օգնությամբ առարկաների և երևույթների արժևորումը:

10. Կոլջանսկու կարծիքով ճիշտ կլինի խոսել ոչ թե աշխարհի լեզվական, այլ լեզվամտածողական պատկերի մասին, այսինքն՝ աշխարհի հասկացության պատկերի մասին: Այսպիսով՝ աշխարհի լեզվական և հասկացության պատկերները չեն սահմանազատվում (Колшанский 1990:37):

11. 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին հիմնախնդրի փիլիսոփայական-լեզվաբանական հիմնավորումն առաջին անգամ տվել է Վ. ֆոն Հումբոլդտը, որը պնդում էր, որ լեզուների զանազանությունը ոչ միայն հնչյունների ու նշանների, այլև բուն աշխարհընկալումների տարբերություններն են (Гумбольдт 1984:319): Նշյալ հիմնախնդիրն իրենց աշխատություններում մանրամասնորեն մշակել են նեոհումբոլդտականները (Байцербер 1993; Сенир 1993; Уорф 1960):

12. Մարդու վրա լեզվի ակտիվ ազդեցության իր սահմանման մեջ է. Սեպիրն ավելի հեռուն է գնում, քան իր նախորդները՝ ձևակերպելով հետևյալ սկզբունքը, որ ամեն ինչ գտնվում է այն կոնկրետ լեզվի տիրապետության ներքո, որը տվյալ հասարակությունում դարձել է արտահայտման միջոց (Сенир 1993:261):

13. Վ. ֆոն Հումբոլդտը կարծում է, որ մայրենի լեզուն ժողովրդի համար ստեղծում է աշխարհի պատկերը, և այն անվանում է «ժողովրդի միացյալ հոգևոր էներգիա» (Гумбольдт 1985):

14. Բ. Լ. Ուորֆը, հետազոտելով հյուսիսամերիկյան հնդկացիների լեզուները, հանգում է ավելի վճռական ու կտրուկ եզրակացությունների: Նա պնդում է, որ յուրաքանչյուր լեզվի քերականություն ոչ միայն վերարտադրողական միջոց է մտքերն արտահայտելու համար, այլև ինքն էլ մասնակցում է դրանց ձևավորմանը: Ավելին՝ այն ծրագրավորում է առանձին մարդու հոգևոր գործունեությունը, տպավորությունների վերլուծությունը, հոգևոր հարստության համադրությունը: Բ. Լ. Ուորֆը այդ-

պիստվ հանգում է լեզվաբանական հարաբերականության սկզբունքին՝ պնդելով, որ մեր լեզուն է ստիպում մեզ մտածել մեր բառերին համապատասխան, այսինքն՝ հանգում է մտածողության, կարծրատիպերի, շրջապատի ընկալման և մարդկանց վարքագծի լեզվաբանական պայմանավորվածությանը, դրանց կախվածությանը լեզվից: Ավելի հեռուն գնալով՝ Բ. Լ. Ուորֆը եվրոպացիների՝ ժամանակի և տարածության մասին պատկերացումները կախվածության մեջ է դնում հնդգերմանական լեզուների համակարգից (Յօրփ 1960):

15. Ըստ սոցիոլոգիական հանրագիտական բառարանի՝ **արժեք** եզրույթը մեկնաբանվում է որպես բոլոր մարդկանց կողմից ընդունելի համոզմունք, որը վերաբերում է իրենց նպատակներին հասնելու միջոցներին (Осипов 1998): Իսկ, օրինակ, Ս. Ի. Օժեգովի բառարանում **արժեքը** սահմանվում է որպես արժեքավոր առարկա, երևույթ (Ожегов 1972:802):

Փիլիսոփայական հանրագիտական բառարանում **արժեքը** սահմանվում է որպես եզրույթ, որը լայնորեն գործածվում է՝ ցույց տալու իրականության որոշակի երևույթների մարդկային, սոցիալական և մշակութային նշանակությունը (Философский энциклопедический словарь 1983:765):

16. Փիլիսոփայությանը բնորոշ է արժեքանական ու նշանագիտական տեսանկյունների ավելի վերացական կիրառությունն ու կապը:

17. Լ. Ն. Մուրզինը նշում է, որ մշակութաբանական լեզվաբանությունը լեզուն դիտարկում է որպես մշակութային արժեքները մարմնավորելու համակարգ (Мурзин 1996:10):

18. Տրամաբանական բառարան-տեղեկատուում սահմանված է **գնահատականի** լայն ըմբռնումը՝ որպես ինչ-որ բանի մասին կարծիք (Кондаков 1975:426): Փիլիսոփայության մեջ տարածված է այն կարծիքը, որ գնահատականը դիտարկվում է որպես անմիջականորեն մտավոր գործողություն (Неновски 1987:26-27): Կա նաև կարծիք, երբ գնահատական ասելով՝ հասկացվում է գնահատման արդյունքը, այսինքն՝ մարդկային գիտակցության ակտը, որն ամրագրվում է գնահատողական դատողության տեսքով (Анисимова 1989:40): Սակայն, որպես կանոն, ի նկատի են առնվում հենց գնահատողական նշանակությունները,

որոնք կարող են արտահայտվել «լավ է», «վատ է», «միևնույն է» (բացարձակ գնահատականների դեպքում, երբ խոսքը մեկ օբյեկտի մասին է) և «ավելի լավ է», «ավելի վատ է», «հավասարազոր է» (համեմատական գնահատականների դեպքում, երբ համեմատվում է երկու օբյեկտ կամ մեկ օբյեկտի երկու վիճակ) գնահատողական գործիքներով:

Մեր հետազոտության մեջ, հետևելով ընդունված բացատրությանը, գնահատական ասելով ի նկատի ենք ունենում լեզվակիրների՝ հասարակայնորեն ամրագրված վերաբերմունքը («լավ է» - «վատ է», «լավ» - «վատ») առարկայի, փաստերի նկատմամբ:

19. Գնահատականն անբաժանելի է համեմատությունից: **Համեմատության** հասկացությունը ներառում է այնպիսի բաղադրիչ, ինչպիսին չափանմուշն է, այսինքն՝ այն, ինչի հետ համեմատվում է: Համեմատության համար չափանմուշային կարող է լինել այլ առարկա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

2.1. ԱՆԵԿԴՈՏԻ ԺԱՆՐԸ. ՆՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երգիծական խոսույթը¹ դիտարկվում է որպես հաղորդակցային բարդ երևույթ, որը պատկերացում է տալիս հաղորդակցության մասնակիցների և նրանց բնութագրերի վերաբերյալ: Այն բնութագրվում է իրականության նկատմամբ առանձնահատուկ երգիծական վերաբերմունքով²:

Երգիծական խոսույթի հիմնական ժանրը «կատակաբանությունն» է: Սովորաբար երգիծական հաղորդագրություն ուղարկողն ակնկալում է, որ խոսակիցը կճանաչի տվյալ խոսքային ժանրը, կառանձնացնի ակնկալվող տեղեկատվությունը և իր ըմբռնումը կդրսևորի ծիծաղով ու ժպիտով: Կոմիկականի, հետևաբար և հումորի հիմնական հատկանիշը ծիծաղն է, որը բնածին արծագանք է և իր հուզական երանգավորմամբ և առաջացման պատճառներով բավականին բազմազան: Տեքստը հասկանալու համար հասցեատերը պետք է ծանոթ լինի այդ ժանրին: Ակնհայտ է, որ կատակը հագիվ թե համապատասխան ձևով ընկալվի ու հասկացվի, եթե հասցեատերը պատկերացում չունի հասարակական կարծրատիպերի և տվյալ ժողովրդի մշակույթում ամրակայված ավանդույթների փոխադարձ սերտ կապի մասին:

Մարդիկ գիտեն հասարակական կարծրատիպերի, ավանդույթների փոխադարձ կապի մասին, որոնցից բխում է կատակը, և առանց որոնց այն չի ընկալվի (տե՛ս Шмелева, Шмелев

1998):

Հումորը, համարվելով խմբային նույնականացման միջոց, թույլ է տալիս կրճատել սոցիալական հեռավորությունը: Այն հաղորդակցության մասնակիցների կողմից իրականացվում է համընդհանուր արժեքներին, կարծրատիպերին դիմելու հաշվին: Հումորն արտացոլում է մշակութային արժեքներ, կարծրատիպեր և նպաստում է ներխմբային համախմբվածությանը³: Հումորի ընկալումը կախված է երեք գործոններից՝ հաղորդակցական իրավիճակից, հաղորդագրություն ուղարկողից և այն ստացողից⁴:

Յու. Վ. Շչուրինան, դիտարկելով երգիծական խոսքային ժանրերը, նրանց մեջ առանձնացնում է **կատակը, անեկդոտը շփման կենցաղային մակարդակում, երգիծական ասացվածքը, երկխոսական մանրապատումը, մակագիրը (էպիգրամ)** (Шурина 1999: 151)⁵: Յուրաքանչյուր կատակ և անեկդոտ հումորի, հեգնանքի կամ երգիծանքի ուղղվածություն ունի, սակայն, ի տարբերություն կատակի, հումորի, հեգնանքի և երգիծանքի, որոնք ասես ցրված են ամբողջ տեքստում, անեկդոտը ստեղծագործության կառուցվածքում պահպանում է ինքնուրույնությունը: Ավելին՝ անեկդոտը սահմանափակ ծավալով ամբողջական տեքստ (կամ տեքստի ինքնուրույն տարր) է՝ կոմիկական բովանդակությամբ (Санников 1999:23)⁶: Կատակը ծնունդ է առնում համատեքստից, իսկ անեկդոտն ինքն է ստեղծում համատեքստ: Հետևաբար ո՛չ բովանդակությունը, ո՛չ սյուժեն, ո՛չ ուղղակի կամ քողարկված իմաստը չեն բնորոշում անեկդոտը որպես կոմիկականի հատուկ ձև, այլ պատասխան ռեակցիա, որը որոշվում է, առաջին հերթին, անեկդոտ պատմելու գործընթացի ներփակ լինելու ամբողջ համատեքստով:

Սույն աշխատանքում քննարկվում է **անեկդոտի** (մասնավոր-

րապես «կենցաղային») ժանրը, քանի որ այն հատուկ հետաքրքրություն է ներկայացնում լեզվաբանության համար՝ որպես հաղորդակցական վարքի նմուշ-օրինակի հետազոտության առանձնահատուկ աղբյուր, որը թույլ է տալիս վեր հանել հանրամշակութային զանազան կարծրատիպեր: Խոսքային այդ ժանրը պատկանում է բանավոր հաղորդակցությանը, որին բնորոշ է իրավիճակային թեմայի և ընթացիկ հաղորդակցական իրավիճակի համատեղումը (Гольдин, Сиротинина 1993:15): Անեկդոտները, անշուշտ, արժանի են հատուկ ուսումնասիրության, քանի որ դրանք տարածված են ցանկացած լեզվամշակույթում:

Անեկդոտի նախապատմությունը հասնում է եվրոպական մշակույթի, բյուզանդական պատմության խորքերը, որտեղից էլ ծագել է այդ բառը՝ հունարեն *“anecdotos”* (ἀνεκδοτον)՝ *չփափած, չհրապարակված, հասարակությանն անհայտ սրբեղծագործություն*, որն առաջին անգամ կիրառվել է լույս ընծայված հնագույն ձեռագրերի առնչությամբ (Пельцер 1899)⁷: Հետագայում անեկդոտը սկսեց նշանակել հեղինակների, առավելապես պատմաբանների կողմից չհիշատակված որևէ բնութագրական փաստ, դեպք: Կամենալով միմյանց զարմացնել իրենց քաջատեղյակությամբ՝ պատմաբանները ճոխացնում էին իրենց աշխատությունները տարբեր մանրամասներով, որոնք ոչ միայն ոչ մի առնչություն չունեին պատմության հետ, այլև հաճախ երևակայության ոլորտից էին: Պատմական մանրամասներին համահավասար այդ եզրույթի ներքո սկսեցին ենթադրվել առհասարակ քիչ թե շատ հետաքրքիր առանձին փաստեր, գլխավորապես սրամիտ պատմություններ, որոնք ապշեցնում էին իրենց անսպասելիությամբ և թեթևությամբ: Անգլիական լեզվամշակույթում համանման հասկացությունը բնութագրվում է *joke, canned joke, funny story* բառամիավորներով: Գոյություն ունեն մի քանի հատուկ

եզրույթներ, որոնք բնորոշում են *“joke”*-ի տարբեր տեսակները՝ *numskull tale, ethnic slurs*⁸: Հայերենում բոլորն էլ (*anecdote, joke, canned joke, funny story, numskull tale, ethnic slurs*) կոչվում են *անեկդոտ*, որը նշանակում է կարճ, զվարճալի, սրամիտ պատմություն ծիծաղաշարժ կամ արտասովոր դեպքի մասին (Աղայան 1976): Ժամանակակից անեկդոտները պատմականորեն ծնունդ են առել նշանավոր և մեծ մարդկանց կյանքի ծիծաղաշարժ պատմություններից: Անեկդոտն իր հերոսներին անդադար հավասարեցնում է սովորական մարդկանց և զրկում նրանց վեհությունից:

Մի կողմից անեկդոտը պարզ, հաճախ նույնիսկ պարզունակ թվացող կարճ պատմություն է առօրյա կյանքի մասին, մյուս կողմից՝ աշխարհի առաջատար մարդաբանների, փիլիսոփաների, բանասերների և հոգեբանների մանրակրկիտ հետազոտությունների առարկա: Ժամանակակից անեկդոտները ներկայանում են որպես բազմակողմանի երևույթներ, որոնք լեզվաբանական, գրականագիտական, սոցիոլոգիական, մշակութաբանական, հոգեբանական և պատմաքաղաքական վերլուծությունների առարկա են դառնում (Терц 1978; Дружинин, Савченко 1996; Карасик 1997; Шмелева, Шмелев 2003): Անեկդոտը ժանր է, որն առանձնակի կարևորություն ունի լեզվամշակույթն ուսումնասիրողների համար: Դրա առանձնահատկությունը պայմանավորված է երկու հանգամանքով: Առաջին՝ անեկդոտը գտնվում է խոսքային և գրական ժանրերի սահմանագծում, այսինքն՝ լինելով բանահյուսական ժանր՝ այն ոչ թե արհեստավարժ ստեղծագործողների, այլ շարքային մշակութակիրների հավաքական փորձն է: Երկրորդ՝ անեկդոտի տեքստերում իրացված աշխարհի պատկերին հատուկ է համընդհանրությունը, քանի որ անեկդոտն արտացոլում է հասարակության կեցության նշանակալի

բոլոր կողմերը՝ կյանքը, մահը, առողջությունը և այլն:

Ի տարբերություն գրական անեկդոտի՝ «կենցաղային» անեկդոտը բացառապես խոսքային (այլ ոչ թե գրական) ժանր է: Պետք է տարանջատել անեկդոտ պատմելը՝ որպես բանավոր խոսքային երևույթ, և անեկդոտի տեքստը՝ այն, ինչ վերարտադրվում է տվյալ խոսքային ժանրը իրացնելիս: Երբ մարդը անեկդոտ է պատմում, ենթադրվում է, որ ինքն է հորինել այդ կատակը⁹: Իհարկե, կարող է այնպես պատահել, որ մարդը կրկնի ուրիշի անեկդոտը՝ այն ներկայացնելով որպես իրենը: Մինչդեռ անեկդոտը, եթե նույնիսկ մարդն ինքն է հորինել, նա պետք է պատմի որպես ուրիշներից լսած: Դրանով իսկ անեկդոտը բնութագրվում է վերարտադրելիությամբ. այն անեկդոտ պատմելու խոսքային ժանրում նոր չի ստեղծվում, այլ վերարտադրվում է (Шмелева, Шмелев 2002): Այդ առումով անեկդոտ պատմելը որոշ չափով հիշեցնում է խոսքային այն ժանրերը, որոնցում օգտագործվում են կաղապարային բանաձևեր: Թեև պատմողն անեկդոտը մատուցում է որպես ուրիշներից լսած, նա միաժամանակ հույս ունի, որ այն լսարանին ծանոթ չէ, որ լսողները (ծայրահեղ դեպքում նրանց մի մասը) նախկինում այն չեն լսել: Այս առումով անեկդոտի տեքստը չի կարող դիտվել որպես լեզվակաղապար բառիս բուն իմաստով: Այն բնութագրվում է ոչ միայն վերարտադրելիությամբ, այլև խոսքային հաղորդակցության մասնակիցներին հայտնի լինելով: Եթե անեկդոտը, պարզվում է, ծանոթ է բոլոր լսողներին, ապա կարելի է համարել, որ անեկդոտ պատմելը կայացել է (և այդ իմաստով ժանրը չի խաթարվել), սակայն եղել է «անհաջող» (Шмелева, Шмелев 1998): Անեկդոտի տեքստի բազմակի վերարտադրելիությունը, որը նաև թույլ է տալիս որոշ չափով տարբերակային փոփոխություններ անել՝ կախված հասցեատիրոջից կամ հաղորդակցական իրավի-

ճակից, մերձեցնում է անեկդոտը խոսքային այնպիսի ժանրերի, ինչպիսիք են՝ գրական անեկդոտն ու առակը: Սակայն այդ ժանրերը տարբերվում են գործող անձանց կազմով և նրանց ներկայացման ձևերով: Հայտնի քաղաքական գործիչները, մարզիկները և հեռուստահաղորդավարները մշտապես մեջբերում են անեկդոտներ, որը թույլ է տալիս խոսել անեկդոտների միջտեքստային ակտիվ կապի մասին:

Անեկդոտը ժողովրդական բանավոր ստեղծագործության հնագույն ժանր է: Անեկդոտի բնորոշ գծերից է անանուն լինելը¹⁰, քանի որ երբեմն անեկդոտի հեղինակի անունը պարզվելու դեպքում անգամ, միևնույն է, չի փոխվում ժանրի բնույթը. չէ՞ որ յուրաքանչյուր մարդ դառնում է տվյալ հեղինակի համահեղինակը. նա իրավունք ունի պատմելու այդ անեկդոտը յուրովի՝ փոփոխության ենթարկելով տեքստը: Անեկդոտում հեղինակային ամրագրված տեքստ գոյություն չունի, ինչպես ժողովրդական երգում է կամ հեքիաթում: Սակայն, ինչպես հեքիաթը, անեկդոտը մեծ թվով տարբերակներ ունի: Անեկդոտի և բանահյուսական ձևերի մյուս ընդհանուր գիծն այն է, որ այն խոսքային արվեստի ձևերի ստեղծագործական համադրության պտուղ է, քանի որ պատմողը ոչ միայն դրա խոսքային տեքստի համահեղինակն է, այլև յուրատեսակ դերասան (Karam 1996): Սա թույլ է տալիս անեկդոտը դիտարկել որպես բանահյուսության վերափոխված տեսակ: Գեղագիտական տեսանկյունից անեկդոտը պատկանում է կոմիկականի ոլորտին. դրա գեղարվեստական արժեքը որոշվում է ժպիտ կամ ծիծաղ առաջացնելու կարողությամբ:

Անեկդոտը, ինչպես և ցանկացած տեքստ, որը պատկանում է այս կամ այն ժանրին, օժտված է կառուցվածքով, ձևով ու բովանդակությամբ: Անեկդոտը կարելի է դասել նախադեպային տեքստերի շարքին, քանի որ դրանցում արտացոլվում են ոչ

միայն զանազան կարծրատիպեր, այլև աշխարհի ազգային պատկերը: Կարծրատիպային հատկանիշների հարաբերակցությունն էլ հենց անեկդոտի ինքնատիպության վկայությունն է՝ որպես խոսքային շփման ժանր, որպես խոսքի մշակույթի երևույթ:

Անեկդոտը, իր ձևերի ողջ առատությամբ ու բազմազանությամբ հանդերձ, ունի ժանրի անփոփոխ կառուցվածք, որը թույլ է տալիս այն տարբերել խոսքարվեստի ժանրային մյուս կազմավորումներից, իսկ դրա շրջանակներում՝ լավ անեկդոտը միջակից կամ վատից: Առաջին հերթին՝ դա հակիրճությունն է: Որքան կարճ է անեկդոտը, այնքան ավելի է համապատասխանում ժանրային բնութագրին: Բացի այդ՝ անեկդոտի սյուժետային կառուցվածքը սովորաբար հնարավորինս հստակ է: Այն ենթադրում է ինտրիգի առաջադրում, անկանխատեսելի ավարտով գործողության ծավալում, անսպասելի հանգուցալուծում: Այսպիսով՝ անեկդոտի տեքստը, ինչպես նախնական բանավոր, այնպես էլ հաջորդող գրավոր ձևով, գրեթե միշտ կառուցվում է երկբաղադրիչ սկզբունքով՝ ունի նախադրություն և հանգուցալուծում կամ սկիզբ և ավարտ: Սկիզբը լսողին ծանոթացնում է բովանդակությանը, թեմային, ինտրիգին, ստեղծում սպասման լարվածություն¹¹: Միևնույն ժամանակ, անեկդոտի հանգուցալուծումը, անկախ ամբողջ տեքստի ծավալից, միշտ պետք է լինի անսպասելի, հաճախ տարօրինակ, որն էլ սովորաբար անեկդոտը դարձնում է ծիծաղելի: Այսպիսով՝ անեկդոտի ժանրային էությունը հանգեցնում է կարճ պատումի անսպասելի սրամիտ ավարտին: Պատումն ինքը կարող է ունենալ ցանկացած խոսքային կառուցվածք: Սակայն իրագործվում է որպես սրամիտ խաղ: Անեկդոտի էությունը կարելի է հանգեցնել համատեքստի անսպասելի փոխարինմանը, որը ոչ խոսքային իրավիճակի լարվածությունը հանում է խոսքային եղանակով:

Հապես կարևոր է նաև անեկդոտի ժանրային սահմանների որոշարկումը: Ակներև է, որ անեկդոտը կարող է ծնունդ առնել ցանկացած բանահյուսական-գրական ժանրից կամ, ընդհակառակը, փոխակերպվել գեղարվեստական ցանկացած ժանրի, որում կոմիկականի էական տարր է բառախաղը կամ իրադրային խաղը: Այլ կերպ ասած՝ անեկդոտը կարող է կիրառել ցանկացած ժանրային ձև՝ դրա հետ մեկտեղ մնալով անեկդոտ: Հատկապես դժվար է հասկանալ, թե անեկդոտի բանահյուսական ժանրերը ինչպես են գոյատևում ժամանակակից զանգվածային հասարակության պարագայում և համագործակցում արվեստի, քաղաքականության, գաղափարախոսության, առօրեականության հետ: Կյանքի ու անեկդոտի միջև տարբերությունն ահռելի է, և դրանք իրար խառնելն անհնարին է: Թերևս այդ է պատճառը, որ այն ընկալվում է որպես նորմից շեղում: Որքան մեծ է անեկդոտի և կյանքի միջև եղած տարբերությունը, այնքան ավելի հավանական է, որ անեկդոտը կապրի և կզարգանա (Карасик 2002): Անեկդոտը նման է ոչինչ չպարտավորեցնող կատակին և բառախաղին, որոնց նշանակությունը (առերևույթ) զուտ գեղագիտական է. ցրել առօրյա տաղտկալի միօրինակությունը կյանքի անսովոր ինչ-որ մանրամասների սրամիտ նկարագրությունով: Ստեղծագործության այս ձևերում կարևոր է նաև այն, որ հեղինակի ինքնությունն այստեղ էական չէ, այն ասես պարտադիր չէ, քանի որ ի սկզբանե անեկդոտի կամ կատակի ժանրը իր նկատմամբ լուրջ վերաբերմունք չի ենթադրում: Այն էական նշանակություն չունի, այն հպանցիկ անշահախնդիր զվարճախաղ է, որը ոչ մի նպատակ չի հետապնդում, որպես պարզև բավական է նույնիսկ թեթև ժպիտը (Шмелева, Шмелев 2002):

Անշուշտ, անեկդոտներից շատերը կարող են ունենալ հասարակության լայն խավերի համընդհանուր հասցեատեր, սա-

կայն կան նաև անեկդոտներ, որոնք նախատեսված են որոշակի լսողի համար¹²:

Հաշվի առնելով անեկդոտների թեմատիկան՝ դրանք կարելի է հանդիպադրել «աբսուրդային և իրական» հատկանիշներով¹³: Աբսուրդայինը, այսինքն՝ անհեթեթը, անմիտը, հատուկ իրավիճակի հատկանիշ է, երբ ինչ-որ բան հակասում է առողջ բանականությանը, կենսափորձին, տրամաբանությանը, սակայն դրանով հանդերձ՝ համարվում է հավանական կամ իրականում գոյություն ունեցող: Կոմիկական անհեթեթության յուրահատկությունն այն է, որ, չնայած իրավիճակի անհեթեթությանը, այն չի «դիպչում» հասցեատիրոջը:

Անեկդոտը կարող է լինել հաջող կամ անհաջող, և դա մեծապես պայմանավորված է մեկնաբանողի ճաշակով ու արվեստով: Անեկդոտը չի միջամտում իրադարձությունների իրական ընթացքին, թեև խաղարկում է դրանք առանձին դրվագներով: Անեկդոտը ներքաշում է կյանքի խառնաշփոթ կողմերը, որոնք առաջանում են դրա բնական ընթացքի խաթարման հետևանքով: Այն ի ցույց է դնում ամենքին անսովոր մի դրվագ՝ առաջարկելով դա համարել սովորական: Այսինքն՝ անեկդոտը մեր իսկ հարաբերությունների, հակումների և թերությունների, մեր ամբողջ խայտաբղետ ու բազմազան կյանքի, կարծրատիպերի արտացոլումն է (Санников 1999):

Բոլոր անեկդոտները կարելի է դասակարգել տարբեր չափորոշիչների հիման վրա. առավել հաճախադեպ հատկանիշներն են թեմատիկան և աղբյուրը: Առանձնացվում են կենցաղային, քաղաքական, առողջապահական, բանակային, թատերական անեկդոտներ, հարբեցողների, անհավատարիմ ամուսինների, տարբեր ազգությունների¹⁴ և սոցիալական խմբերի ներկայացուցիչների մասին անեկդոտներ¹⁵:

«Կենցաղային» անեկդոտները գոյատևում են տասնամյակներ, հարյուրամյակներ, անգամ հազարամյակներ շարունակ և մի ժողովրդից փոխանցվում են մյուսին: Հին և նոր, կենսունակ, հավերժափոփոխ և նորացվող անեկդոտներ հավաքելը երբեք չի կարող ավարտված համարվել: «Կենցաղային» անեկդոտը դիտարկում է փաստերը, կարծրատիպերը առօրյա կյանքի կտրվածքով, որտեղ ամեն ինչ անդադար փոփոխվում է: Անեկդոտը փաստերն արժեքների չի վերածում, քանի որ այն պատմում են միայն ծիծաղեցնելու համար: Անեկդոտի գլխավոր խնդիրը ծիծաղն է և պատճառած առանձնահատուկ հաճույքը և ոչ թե նրա ճշմարիտ լինելը: Անեկդոտի համար ծիծաղը գրավական է, որը հաստատում է դրա հետագա կյանքի իրավունքը:

«Կենցաղային» անեկդոտներում ծաղրի են ենթարկվում մարդկային թուլությունները՝ հիմարությունը, ժլատությունը, սնափառությունը, զվարճալի ձևով են ներկայացվում ընտանեկան բախումները և մարդկային (մեր դեպքում՝ տղամարդկանց և կանանց) հարաբերությունները: Անեկդոտի արտահայտչաձևերն անսահմանորեն բազմազան են: Դա կարող է լինել մեկ արտահայտություն, կարող է լինել երկխոսություն, հարց ու պատասխան, սակայն հաճախ դա բառախաղ է:

Այսպիսով՝ անեկդոտը ոչ միայն երգիծական տեքստ է, այլև ժանրային նախադեպային տեքստ, որն ունի յուրօրինակ կառուցվածք և երգիծական տպավորության իրացման զանազան ձևեր: Անեկդոտները տեքստեր են, որոնք խտացնում են հանրամշակութային կարծրատիպերը և կենցաղային գնահատողականությունը:

2.2. ԵՐԳԻԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԸ ԱՆԵԿԴՈՏԻ ԺԱՆՐՈՒՄ

Անեկդոտը զանգվածային մշակույթի վառ երևույթներից է, որը նաև մարդկանց միջանձնային հաղորդակցության էական միջոց է: Անեկդոտի ամբողջ իմաստը, դրա ամբողջական երգիծական տպավորությունը իրացվում է բանավոր վերարտադրությամբ, պատմելով, թատերականացված խաղարկումով: Իհարկե, անեկդոտի հաջողությունը մեծապես կախված է պատմողի վարպետությունից, ծիծաղելի երկխոսությունը դիմախաղով ներկայացնելու, գործող անձանց զավեշտորեն պատկերելու, անհրաժեշտ դադար պահելու և վերջաբանը տպավորիչ ներկայացնելու ունակությունից (Шмелева, Шмелев 2002:17-20):

Հասարակության մեջ անեկդոտի ժանրի հանրահայտությունը պայմանավորված է տարբեր գործառույթների բազմազանությամբ, որոնք այն կատարում է: Բացի բնութագրական և կայուն կերպով ամեն ինչ փոխակերպելու գործառույթից, կարելի է առանձնացնել մի շարք հանրամշակութային և հաղորդակցային գործառույթներ, որոնք բավարարում է տվյալ ժանրը (Лихачев, Панченко 1976): Հաղորդակցային գործընթացում այն կատարում է հիմնականում խոսքարկման գործառույթ՝ նպաստելով շփում հաստատելուն և պահպանելուն: Անեկդոտի գործաբանական իմաստը շրջապատողներին զվարճացնելն է: Վերլուծելով անեկդոտի հաղորդակցային գործառույթը՝ հարկավոր է տարբերակել «առիթով» ներկայացված, այսինքն՝ շփման համատեքստի հետ թեմատիկ կապ ունեցող անեկդոտները և «անառիթ» անեկդոտները (Седов 1998): Անեկդոտը «տեղին» պատմելը, բացի շփումը պահպանելու խոսքարկման գործառույթից, իրականացնում է նաև տեղեկատու գործառույթ, քանի որ արտահայ-

տում է խոսողի վերաբերմունքը այն իրավիճակի նկատմամբ, որին համադրում է անեկդոտը: Անեկդոտ պատմողը «գիտի» ոչ միայն բովանդակությունը, այլև «պատասխան-ծիծաղը», հենց այդ պատճառով էլ, եթե դիմացինը չի ծիծաղում, նշանակում է՝ չի հասկացել անեկդոտը: Անեկդոտը միշտ գաղտնախորհուրդ պատմություն է. պատմելու սկզբունքային պայմանը մարդկանց միջև որոշակի փոխըմբռնումն է, կա՛մ դրա առկայության հարցում սուբյեկտիվ վստահությունը, կա՛մ շփման խոչընդոտը հաղթահարելու ցանկությունը: Անեկդոտ պատմելը ենթադրում է սակավաձանոթ մարդկանց միջև հեռավորության վերացում, վստահության մթնոլորտի ստեղծում (Лихачев, Панченко 1976): Այն բազմիցս վերարտադրվում է, փոխանցվում մի պատմողից մյուսին: Որպես կանոն՝ անեկդոտները պատմում են զանազան տարբերակներով. մի դեպքում տարբերակը ձևավորվում է որպես բովանդակության բանավոր փոխանցման արգասիք, մյուս դեպքում՝ պատմողի ստեղծագործական մոտեցմամբ, երբ վերջինս փորձում է հարմարեցնել անեկդոտը առկա իրավիճակին (Бергсон 1992):

Անգլիական լեզվամշակույթում գոյություն ունեն իրավիճակներ, որոնք կարող են բնութագրվել որպես անեկդոտների արտատեքստային գործառության նախատիպեր¹⁶: Արտատեքստային կիրառության հնարավորությունը անեկդոտը դարձնում է դադարը լցնելու իդեալական միջոց, երբ շփման համար տեղեկատվական հիմքը բացակայում է, իսկ ընդհատել հաղորդակցումը անհնար է քաղաքավարական կամ այլ պատճառներով: Անեկդոտը պահանջված է նաև որպես ընդհարումը հարթելու միջոց: Անհրաժեշտ է նաև տարբերակել անեկդոտ պատմելու և անեկդոտը հիշեցնելու ժանրերը: Դա թույլ կտա նախ՝ տնտեսել ժամանակ և խոսքային ջանքեր, երկրորդ՝ անեկդոտի միջոցով

լրացուցիչ ծանրակշռություն հաղորդել սեփական տեսակետին¹⁷:

Սյուժեի սեղմությունը, առաջնային այս բնութագրի առանձնացումը անեկդոտը նմանեցնում է ծաղրանկարի՝ վերածելով այն խոսքային պատկերանկարի: Անեկդոտում երկխոսությունն է, ծաղրանկարում՝ պատկերը: Անեկդոտի պատկերավորությունը կրկնապատկվում է իր կառուցվածքի առանձնահատկությամբ: Պատմողի լրջությունը (նրա համար ծիծաղելի չէ, նա գիտի անեկդոտը) ուժեղացնում է լսողի պատասխան արձագանքը: Արտաքին «թաղանթը» անեկդոտ պատմողի և լսողի միջև ձևավորում է երկխոսություն: Պատասխան արձագանքի կանխորոշվածությունն ապահովում է պատմողի գերակա դիրքը (Седов 2003):

Անեկդոտն առկա է մարդկանց ոչ պաշտոնական շփումներում, առավել հաճախ այն օգտագործվում է իրավիճակը լիցքաթափելու, զրուցակցի հետ շփում հաստատելու, շփման ավելի մտերմիկ, վստահելի մակարդակի անցնելու, բարեկամական հարաբերություններ ձևավորելու, իր հանդեպ ուշադրություն գրավելու համար: Բնականաբար, անեկդոտը պետք է պատմել կոնկրետ իրավիճակից ելնելով, կոնկրետ իրադարձության մասին, շփման տվյալ իրավիճակի «համատեքստից» չկտրված (Бергсон 1992):

Այսպիսով՝ անեկդոտը կարելի է դիտարկել միջանձնային հաղորդակցության (ինտերակտիվ) դիտանկյունից, քանի որ այն ոչ միայն պարզապես հաղորդագրությունը ուղարկողից ստացողին հաղորդելու գործընթաց է, այլև ստացողի արձագանքն է լսած անեկդոտին: Անեկդոտների ուսումնասիրությունն անհրաժեշտություն է, քանի որ դրանցում պետության ու ժողովրդի ամբողջ պատմության, հանրամշակութային կարծրատիպերի արտացոլումն է, որը պատմում և գնահատում է հենց ժողովուրդը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Խոսույթի մասին մանրամասն տե՛ս Dijk T.A.van 1993; Карасик 2002; Гаспарян 2010 և այլն:

2. Գոյություն ունեն երգիծական խոսույթի բնութագրական հետևյալ հատկանիշները.

- արդիական հասկացությունները մեղմ ձևով վերաիմաստավորելու և տարածությունը կրճատելու ձգտումը,
- ծիծաղաշարժ վարքի որոշակի ձևանմուշների առկայությունը, որոնք ընդունված են տվյալ լեզվամշակույթում,
- շփման մասնակիցների՝ լուրջ զրույցից խուսափելու հաղորդակցային մտադրությունը (Карасик 2002:252):

3. Ցանկացած մշակույթ կամ ենթամշակույթ ստեղծում է իր արժեհամակարգը և երբեմն այն իրացնում ծիծաղաշարժ տեքստերի ձևով՝ այլ մշակութակիրների համար անհասկանալի կամ ոչ արդիական (ծիծաղ չառաջացնող):

4. Առանձնացվում է հումորի երկու հիմնական տիպ՝ **իրադրային** և **լեզվական**: Վերջինս կապված է լեզվական զանազան միջոցների հատուկ կիրառության հետ, որոնք երգիծական տպավորություն են ստեղծում: Որպես կանոն՝ այդպիսի կիրառությունն ուղեկցվում է արտահայտությունների երկիմաստությամբ, հետևաբար՝ դրա ոչ միանշանակ մեկնաբանությամբ: Բառային, բառակազմական, շարահյուսական տարբեր մակարդակների միավորներ կարող են լեզվական հումորի հիմք դառնալ:

5. Դ. Բոքսերն ու Ֆ. Կորտես-Կոնդեն առանձնացնում են կենցաղային հումորի երեք տեսակ՝ **teasing, joking about an absent other, self-denigrating joking** (Boxer, Cortes-Conde 1997):

6. Անեկդոտի՝ որպես մշակութային բացառիկ երևույթի առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալները.

- անեկդոտը շատ տարողունակ ձևով արտացոլում է իր էությունը, որի շնորհիվ էլ չի պահանջում իմացական մեծ լարվածություն,

- անեկդոտը (մասնավորապես գենդերային թեմատիկայով) ներկայացվում է խոսակցական, կենցաղային լեզվով, որի շնորհիվ հասկանալի է դառնում տարբեր սոցիալական խավերի և խմբերի համար,
- անեկդոտի շնորհիվ ծիծաղի առարկան պարզեցվում է, դառնում ավելի հասկանալի, մատչելի, բացատրելի, որը մի կողմից վերացնում է լարվածությունը առարկայի նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ անկասկած ամրապնդում գոյություն ունեցող կարծրատիպը,
- անեկդոտն առաջ է բերում հաճելի հուզական արձագանք՝ ծիծաղ, որով էլ բացատրվում է դրա գոյության երկարատևությունը,
- անկախ տարիքից, սոցիալական կարգավիճակից, սեռական պատկանելությունից՝ յուրաքանչյուր մարդ իր և հակառակ սեռի հարաբերություններում այսպես թե այնպես ներգրավված է, հետևաբար տղամարդկանց և կանանց կենսագործունեության տարբեր կողմերի մասին անեկդոտները նրա համար արդիական կմնան;

7. XX դարի ընթացքում ի հայտ եկան **«անեկդոտ»** եզրույթի տարբեր ընկալումներ: Համաձայն պարզ ձևերի հանրագիտարանի՝ անեկդոտը **“anecdote”** կարճ, հաճախ բարոյախրատական պատմություն է նշանավոր մարդկանց մասին և ներկայացնում է անեկդոտի հերոսին՝ որպես որոշակի հանրային խմբի կամ ժամանակաշրջանի ներկայացուցիչ (Koch 1994:123-131): Իսկ ըստ գրականագիտական համառոտ հանրագիտարանի՝ անեկդոտ ասելով ենթադրվում է բազմաբովանդակ բանավոր ոչ մեծ կատակապատում՝ անսպասելի ու սրամիտ վերջաբանով (Краткая литературная энциклопедия, 1962-1978): Անեկդոտը նաև սահմանում են որպես անսպասելի սրամիտ վերջաբանով պատմություն, որտեղ մշտապես գործող անձինք բոլոր լեզվակիրների քաջաձանոթ կերպարներ են (Шмелева, Шмелев 2003:23 – 30):

8. **“Numskull tale”** եզրույթը համապատասխանում է ճանապարհորդների մասին պատմություններին: Անգլալեզու գրականության մեջ այն նաև հաճախ կիրառվում է «ազգային» անեկդոտները հետազոտե-

լիս, այսպես, օրինակ՝ լեհերը ամերիկյան անեկդոտներում: Իսկ **“ethnic slurs”** հոմանիշ եզրույթով նշվում են ինչպես տվյալ մշակութային խմբում գոյություն ունեցող կարծրատիպերը, որոնց քաջաձանթո են մշակութային այդ խմբի բոլոր անդամները, այնպես էլ տեքստերը, որոնցում այդ կարծրատիպերը կիրառվում են, ինչպես, օրինակ՝ ամերիկացիների պատկերացումներում լեհերը կեղտոտ և հիմար ազգ են (Санников 1999:427):

9. Անեկդոտը պետք է պատմել տեղին, քննարկվող կենսական իրավիճակին համահունչ: Այդ իմաստով անեկդոտը կարելի է դիտել որպես կիրառական արվեստի առանձնահատուկ ձև. դրա պատումը ներդրվում է խոսակցության թեմայի մեջ՝ իմաստավորելու ինչ-որ կենսական իրադարձություն: Առհասարակ կարծիք կա, որ անեկդոտներ պատմել սիրում են առավելապես ամաչկոտ կամ սոցիալական նույնականացման դժվարություններ ունեցող, սակայն խաղային ներըմբռնողության տեր մարդիկ: Լավ պատմողը վատ անեկդոտն է կդարձնի ծիծաղելի: Սակայն նա, ով ի վիճակի չէ հարկ եղած պահին և տեղում պատմել անեկդոտ, շատ դժվար է մերձենում միջավայրին, կոլեկտիվին, մտերմանում մարդկանց հետ: Անեկդոտներ պատմել կարողանալը նշանակում է կարողանալ շփում հաստատել զրուցակցի հետ, դրսևորել սեփական խորագիտակությունը, կարդացածությունը և իրազեկվածությունը:

10. Այս տեսանկյունից անեկդոտը ազգակից է առասպելին, լեգենդին, հեքիաթին և այլ անանուն ստեղծագործություններին: Տրամաբանորեն դա մի տեսակ նշանակությունների խաղ է, երբ դրանք ասես փոխում են տեղերը. «վսեմը» դառնում է «նսեմ», կենցաղայինը հանդես է գալիս քաղաքականի դերում և այլն: Անեկդոտը տիպականացնում է այն, ինչը դուրս է գալիս առօրյա պատկերացումների շրջանակից:

11. Օրինակ՝ անեկդոտի սկիզբը կարող է կառուցվել ավանդական հեքիաթի օրենքներով՝ իրադարձության եռակի (ըստ գործող անձանց և նրանց գործողությունների թվի) կերպափոխմամբ:

12. Ըստ տարիքի, սեռի, կրթվածության կարգավիճակային հատկանիշների՝ որպես հակադրություն կարելի է առանձնացնել անեկդոտների պիտակավորված և չպիտակավորված հերոսներին: Պիտակա-

վորված տիպը առանձնանում է, իսկ չափտակավորվածը՝ ընկալվում որպես չեզոք (Протон 1999):

13. Անեկդոտները կարող են նաև դասակարգվել. 1) ըստ խեղկատակային, կատակային, կիսալուրջ տոնայնության հատկանիշների հարաբերակցության, 2) ըստ բարեկամասիրական, բարեհաճ, անբարեհաճ, թշնամական վերաբերմունքի հատկանիշների հարաբերակցության, 3) ըստ անեկդոտի հիմքում ընկած հիմնախնդրային իրավիճակի բնույթի, 4) ըստ անեկդոտի գլխավոր գործող անձի նկատմամբ պատմողի և լսողի վերաբերմունքի, 5) ըստ խոսույթի մասնակիցների սոցիալական տիպի, որին ուղղված է տվյալ անեկդոտը (Карасик 1997):

14. Ազգային անեկդոտներում ծաղրի են ենթարկվում գործող անձանց արտասանական առանձնահատկությունները: Երգիծական տպավորություն ստեղծելու համար այդ ձևը առանձնապես հաճախ է օգտագործվում «կենցաղային» անեկդոտներում:

15. Հանրալեզվաբանության տեսանկյունից անեկդոտները կարող են հանդիպադրվել ըստ մասնակիցների կարգավիճակային հատկանիշի՝ մանկական և մեծահասակների անեկդոտներ, տղամարդկանց և կանանց մասին անեկդոտներ, կրթված և անգրագետ մարդկանց մասին անեկդոտներ, որոշակի սոցիալական խմբերին վերաբերող անեկդոտներ՝ ուսանողական, բանակային, բանտային և այլն:

16. Այսպես, օրինակ՝ անեկդոտներ հաճախ պատմվում են խնջույքներում, քանի որ ծիծաղը, առավել քան մարդկային գործունեության որևէ այլ ձև, պահանջում է միջավայր. այն կախված է միջավայրից, այդ միջավայրում տիրապետող հայացքներից, կարծրատիպերից ու պատկերացումներից: Ա. Բերգսոնը իրավացիորեն նկատում է, որ ծիծաղը կենսապայմանների փոփոխությանը հարմարվելու, ծայրահեղ իրավիճակներում գոյատևելու միջոց է (Бергсон 1992):

17. Վերջին տասնամյակները նշանավորվել են անգլալեզու հանրույթում անեկդոտի հաղորդակցային գործառության գործընթացում արմատական փոփոխություններով: Ավանդաբար անեկդոտը դիտարկվել է որպես բանավոր խոսքի ժանր: Համացանցի զարգացումը փոխեց այդ իրավիճակը: Ներկայումս գրավոր եղանակով անեկդոտներ պատմելը հաճախականությամբ առնվազն չի զիջում դրա բանավոր հա-

ղորդմանը: Ավելին, հայտնվել է անեկդոտների քանակ, որի համարժեք ընկալումը հնարավոր է միայն տեսողական մակարդակում: Անեկդոտի համակարգչայնացմանը զուգահեռ տեղի է ունենում դրա առևտրայնացում: Անեկդոտների տեքստերը, որոնք տպագրվում են ժողովածուներում, դառնում են ապրանք, որը գնահատվում է դրամական համարժեքով: Հանրահայտ թերթերի պարտադիր տարրերից է դառնում անեկդոտների սյունակը, որը կոչված է մեծացնելու դրանց վաճառքը: Անեկդոտը դուրս է գալիս միջանձնային շփման շրջանակներից, տեղի է ունենում դրա ակտիվ ներթափանցումը այլ ժանրեր: Անեկդոտները միավորվում են վեպերի, ֆիլմերի և սերիալների մեջ, ներառվում են գովազդային հոլովակներում և քաղաքական գործիչների ելույթներում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ» ԱՆԵԿԴՈՏՆԵՐՈՒՄ

3.1. ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ» ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ
ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն գլխում խնդրո առարկա է գենդերային կարծրատիպերի արտացոլումն անգլիական «կենցաղային» անեկդոտներում: Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, երգիծական խոսույթի տվյալ տարատեսակում գենդերային կարծրատիպերը բավականին հաճախ են հանդիպում: Դրանք մի կողմից հեշտացնում են հաղորդակցումը՝ մատուցելով մտածողության ստանդարտ նմուշ-օրինակներ, սակայն մյուս կողմից կարող են հանդես գալ որպես հաջող հաղորդակցությանը խոչընդոտող գործոն, քանի որ հաճախ հանգեցնում են էթնիկական խմբի վարքագծի ոչ ճիշտ մեկնաբանմանը: Հաղորդակցվողների այս կամ այն հանրային կամ ցեղային խմբին պատկանելությամբ պայմանավորված՝ կարելի է առանձնացնել կարծրատիպերի տարբեր տեսակներ՝ ազգային, տարիքային, մասնագիտական, գենդերային և այլն:

Երգիծական տեքստերը կարևորագույն դեր են խաղում հասարակության և յուրաքանչյուր անհատի գոյության ընթացքում: Աշխարհի զավեշտալի պատկերը լեզվական մակարդակում ամրակայված ժարգոնային փոխաբերություններում, շրջասություններում, իսկ տեքստային մակարդակում՝ բանահյուսական տեքստերում, առաջին հերթին՝ անեկդոտներում, արտացոլում է տվյալ հանրույթի համար առավել արդիական արժեքները: Ժա-

մանակակից քաղաքակրթության արժեքային միասնականացումը երգիծական տեքստերի մեծ մասը համընդհանուր է դարձնում:

Անեկդոտը դիտարկվում է որպես աշխարհի զավեշտալի պատկերի իրացման հիմնական ոլորտ, որը առավելագույնս ակտիվ զարգանում է ժամանակակից մշակույթում: Լեզվական հարուստ նյութի ուսումնասիրությունը օգնում է ավելի խորությամբ թափանցելու անգլիացիների հանրամշակույթ, քանի որ հումորի մեջ են դրսևորվում դրա հիմնական արժեքներն ու առաջնայնությունները: Մեր ուսումնասիրությունը օգնում է նաև վեր հանել մարդկանց հումորի զգացման վրա ազդող որոշակի գործոններ: Հումորը մարդկային հաղորդակցության կարևոր բաղկացուցիչներից է: Այն հարցը, թե այս կամ այն մարդկանց հումորի զգացման առանձնահատկությունները ինչու են պայմանավորված, առ այսօր լիարժեք պատասխան չի ստացել: Հումորն անհատական երանգավորում ունի: Ենթադրվում է նաև, որ կատակները գնահատելիս մեծ դեր է կատարում անհատի պատկանելությունը այս կամ այն մշակույթին:

Քննությունը ցույց է տալիս, որ գենդերային անեկդոտների գերակշիռ մասը սեռական ուղղվածություն ունի, այսինքն՝ բացահայտ կամ քողարկված խտրականություն է դրվում կանանց և տղամարդկանց սեռերի միջև՝ ծաղրելով նրանց վարքը՝:

Անեկդոտը նպաստում է գենդերային կարծրատիպերի ստեղծմանը, դրանց խորացմանն ու ընկալմանը: Պատմված անեկդոտին հաջորդող ծիծաղը ոչ այլ ինչ է, եթե ոչ զգացմունքների լիցքաթափում: Անեկդոտը թույլ է տալիս շրջանցել կարծրատիպերի հետ կապված գենդերային պաշտպանիչ մեխանիզմների գործողությունները: Գենդերային կողմնորոշում ունեցող տեղեկատվությունը հաճախ ահռելի դժվարությամբ է

գտնում իր ճանապարհը դեպի հարցին անպատրաստ մարդու գիտակցություն, քանի որ հակասում է կարծրատիպային պատկերացումներին: Քանի որ երգիծական տեքստերում առկա է իմաստային մեծ խտացում, ապա դրանց բովանդակությունը համարժեք կերպով հասկանալու համար անհրաժեշտ են ոչ միայն հիմնարար գիտելիքներ, այլև տեղեկատվությունը վերարտադրելու ունակություն, ենթատեքստը հասկանալու հմտություն:

Գենդերային հատկանիշով առանձնանում են **կանանց անեկդոտներ**, որոնք պատմում են կանայք և նախատեսված են նրանց համար, այսինքն՝ անեկդոտներ, որոնք առավելագույնս համապատասխանում են կնոջ և նրա վարքի մասին հասարակական կարծրատիպին: Անշուշտ, այդ կարծրատիպը բավականին պայմանական է և մեծ չափով սահմանափակված է սոցիալական հատկանիշներով: Կանանց անեկդոտները կենտրոնացած են կանանց արժանիքների շուրջ՝ գեղեցկություն, երիտասարդություն, անկեղծ զգացմունքներ, իշխանություն տղամարդկանց նկատմամբ: Այդ արժեքները ենթարկվում են երգիծական վերաիմաստավորման, ուստի ծաղրի են ենթարկվում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են դրության տերը ներկայանալու տղամարդկանց փորձերը, նրանց բարձր զգացմունքների հավակնությունները, երբ իրականում դրանք գոյություն չունեն:

Տղամարդկանց անեկդոտները կատակներ են համարձակության թեմաներով և հաճախ վերածվում են կոպիտ ու գռեհիկ ակնարկների: Գոյություն ունեն շփման թեմաներ, որոնք առավելապես գրավում են տղամարդկանց, քան կանանց, օրինակ՝ քաղաքականությունը: Ըստ այդմ՝ քաղաքական թեմայով անեկդոտների մեծ մասը կարելի է դասել տղամարդկանց անեկդոտների շարքին: Տղամարդկանց անեկդոտները բացահայտում են տղամարդկանց աշխարհընկալումը. հենց այսպիսի անեկդոտ-

ներում կարելի է հանդիպել հիմար ամուսնու և խորամանկ սիրեկանի, չար ու կռվարար կնոջ, հավերժական թշնամու՝ զոքանչի կերպարներին:

Այսպիսով՝ անեկդոտը երգիծական խոսույթի այնպիսի տարբերակ է, որը թույլ է տալիս ներկայացնել գենդերային կարծրատիպերը:

Անեկդոտը բազմակողմ երևույթ է և, հետևաբար, նաև հանրամշակութային վերլուծության առարկա: Անեկդոտի տեքստի մակարդակում գոյություն ունեն վարքի ամրագրված նորմեր, ավանդական-աշխարհայացքային և սոցիալ-հոգեբանական ուղենիշներ և ազգային պատկերացումներ: «Կենցաղային» անեկդոտների տեքստերում գենդերային կարծրատիպերի հանրամշակութային առանձնահատկությունները բավականին ընդլայնված ու բազմազան են: Դրանք հասկանալու համար անհրաժեշտ են ընդհանուր հիմնարար գիտելիքներ շրջապատող աշխարհի կառուցվածքի մասին: Անեկդոտի լեզվական մակարդակում դրսևորվում են այս կամ այն լեզվամշակութային միջավայրի առանձնահատկությունները, ազգային խառնվածքի և հոգեկերտվածքի յուրահատկությունները, գենդերային կարծրատիպերը: Ժամանակակից հասարակությունը բավականին դանդաղ է փոփոխում գոյություն ունեցող կարծրատիպերը, դիրքորոշումները իր տարբեր կառուցվածքների, այդ թվում և այնպիսի սոցիալական խմբերի վերաբերյալ, ինչպիսին են կանայք և տղամարդիկ: Այս երևույթը կարելի է բացատրել ընդհանուր առմամբ հասարակության և մասնակիորեն նրա բազմազան հանրային գործընթացների կայունացմամբ: Գենդերային կարծրատիպերի գոյության բացառիկությունը՝ որպես կանանց կամ տղամարդկանց խմբի վերաբերյալ պարզեցված ընդհանրացումների ամբողջություն, որը թույլ է տալիս նրանց կարգադասել և կադա-

պարված ընկալել, ունի արտահայտման տարբեր ձևեր: Այսպես, մարդու նկատմամբ, ըստ սեռային հատկանիշի, կադապարված վերաբերմունքի ներկայացման ձևերից են անեկդոտները: Երբեմն մեկ անեկդոտում իրացվում են մի քանի կարծրատիպեր:

Անեկդոտների տեքստի բովանդակային վերլուծության հիման վրա վեր են հանվել այն ոլորտները, որոնցում արտացոլված են առավել տարածված կարծրատիպային պատկերացումները կանանց և տղամարդկանց բնութագրական գծերի կամ գործողությունների մասին (տե՛ս Князян 2015)²: Դրանք են.

- *ընտանեկան հարաբերություններ (ամուսնական անհավաքարմություն),*

- *հիմարություն (խելամդության պակաս),*

- *արտաքին տեսք,*


- *շափախոսություն,*

- *հարբեցողություն (ոգելից խմիչքի նկատմամբ թուլություն),*

- *փեսա - զոքանչ հարաբերություններ:*

Առկա գենդերային կարծրատիպերի վիճակագրական տվյալները ներկայացվել են գծապատկերի տեսքով (*գծապատկերը Ա.Տ. Կնյազյանի*):

Գծապատկեր 1
Գենդերային կարծրատիպերը անգլիական «կենցաղային»
անեկդոտներում



Այժմ առանձնաբար դիտարկենք անգլիական «կենցաղային» անեկդոտներում գենդերային կարծրատիպերի արտահայտման կոնկրետ առանձնահատկությունները յուրաքանչյուր ոլորտում³:

*Ընտանեկան հարաբերությունները*⁴ աշխարհի ցանկացած երկրում անեկդոտների ամենավառ թեմաներից է: Յուրաքանչյուր հանրամշակութային միջավայրում ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ անեկդոտները շատ են: Սակայն ազգային խառնվածքի յուրահատկությունից բխող տարբեր կարծրատիպերի և տարբեր հանրույթների ներկայացուցիչների լեզվամտածողության պատճառով անեկդոտներն ունեն ազգային-մշակութային յուրահատկություններ: Ընտանեկան կյանքի մասին անեկդոտներում իրացվում են հասարակության մեջ ընտանեկան կյանքի վերաբերյալ ձևավորված կարծրատիպեր:

Չնայած կնոջ հիմար լինելու մասին կարծրատիպին՝ դեռևս անտիկ շրջանից սկսած՝ կնոջը բնութագրել են որպես խելացի և խորամանկ արարած, իր մտավոր ունակություններով տղամարդուն զգալիորեն գերազանցող: Անգլիական անեկդոտներում իրենց վառ դրսևորումն են ստանում կանանց ամուսնանալու ձգտումները: Դա թերևս կապված է համընդհանուր տարածում գտած այն կարծիքի հետ, որ կինը պարտադիր պետք է իրեն դրսևորի ընտանիքում: Օրինակ՝

1) The Santa Claus at the shopping mall was very surprised when Emily, a young lady aged about 20 years old walked up and sat on his lap. Now, we all know that Santa doesn't usually take requests from adults, but she smiled very nicely

at him, so he asked her, “What do you want for Christmas?”

“Something for my mother, please,” replied Emily sweetly.

“Something for your mother? Well, that’s very loving and thoughtful of you,” smiled Santa.

“What would you like me to bring her?”

Without turning a hair Emily answered quickly, “A son-in-law”.

<<http://www.jokesgallery.com/joke.php?joke=5377&id=1>>

Կինը պատրաստ է նույնիսկ ամուսնության առաջարկ տեսնել այնտեղ, որտեղ դա անգամ չի էլ ենթադրվում: Սակայն, հասնելով իր նպատակին, կինը հասկանում է, որ ընտանեկան կյանքը այն աստիճան ռոմանտիկ չէ, որքան թվում էր նախքան ամուսնությունը, և սկսում է հեզնել կամ նույնիսկ քննադատել ամուսնուն⁵: Օրինակ՝

2) At the cocktail party, one woman said to another, “Aren’t you wearing your wedding ring on the wrong finger?” The other replied, “Yes, I am, I married the wrong man.”

<<http://www.frihost.com/forums/vt-61732.html>>

3) The bride, upon her engagement, went to her mother and said, “I’ve found a man just like father!” Her mother replied, “So what do you want from me, sympathy?”

<<http://www.matrimonialbank.com/jokes.html>>

Գենդերային կարծրատիպերի ազդեցությունն անգլերենում հատկապես ակնառու է լեզվական մի քանի բառազույգերում: Օրինակ՝ չնայած այն բանին, որ **spinster** և **bachelor** բառերը նշանակում են **“one who is not married”**, նրանց մեջ դրված է բացարձակապես հակառակ իմաստ: Եթե **bachelor**-ը չեզոք եզրույթ է և նշանակում է ազատ տղամարդ, որը կարող է ընտրություն կատարել երկրպագուի հետ բազմությունից, ապա **spinster**-ը նշանակում է պառաված օրհորդ, որը ոչ ոքի պետք է և արդեն չափազանց ծեր է իր անձնական կյանքը դասավորելու համար: Անելանելիության խուճապը շատ կանանց համակում է այն ժամանակ, երբ ընկերուհիների մեծամասնությունը արդեն ամուսնացած են լինում:

Spinster (պառաված օրհորդ) բառը անգլիական երգիծական խոսույթում օգտագործվում է բացասական իմաստով, քանի որ միայնության վախը նկատելի ազդեցություն է գործում կնոջ վարքագծի վրա: Օրինակ՝

4) *An emergency call was made to the local police station.*

*“Come quickly,” gasped the voice, “a burglar is trapped in the bedroom of an old **spinster**.”*

“We’ll be right there,” said the desk sergeant.

“May I ask who’s talking?”

“It’s me, the burglar, help!”

(Sharpe 2004:98)

5) *A frustrated old **spinster** had read in a woman’s magazine that the bigger the man’s feet, the bigger his todger. This piece of*

information was still in her mind when two days later a tramp came to the door with the biggest feet she had ever seen. Quick as a flash, she invited him in and proceeded to wine and dine him before taking him up to bed. The next day as he was leaving she shouted at him crossly, "Next time, wear shoes that fit you."

(Sharpe 2004:100)

Վերոբերյալ օրինակներում **spinster** բառը մատնանշում է չամուսնացած կնոջ, ով ընդմիշտ մենակ մնալու մտավախությամբ ունի և ի դեմս իրեն ժպտացող յուրաքանչյուր տղամարդու՝ կտեսնի իր ապագա ամուսնուն: Սակայն տղամարդիկ փորձում են շրջանցել այդպիսի կանանց:

Կինը պետք է հասարակության մեջ և ընտանիքում օժտված լինի տղամարդուն հավասար իրավունքներով, բայց մի էական վերապահումով, որ նա կոչված է ստեղծել ընտանիք, ծնել և դաստիարակել երեխաներ: Բնությունը յուրաքանչյուր սեռի օժտել է որոշակի հնարավորություններով, և հասարակության խնդիրն այն է, որ այդ հնարավորությունները առավելագույնս ներդաշնակորեն բացահայտվեն: Սակայն անգլիական երգիծական խոսույթում կնոջը որպես հասարակության իրավահավասար անդամ ընդունելու թեման առհասարակ հազվադեպ է: Կինը տղամարդուց տարբերվում է ոչ միայն սեռով, այլև փխրուն կազմվածքով, նա ոչ թե պարզապես տղամարդու թույլ նմանակն է, ինչպես սխալմամբ կարծում են շատերը, այլ նրա հակոտնյան՝ իր առանձնահատուկ կենսաբանական և հոգեբանական հատկանիշներով և կյանքում ունեցած իր դերով: Անգլիական երգիծական խոսույթում գոյություն ունի կարծրատիպ այն մասին, որ

կինը տան օջախի պահապանն է և պարտավոր է կատարել տնային ամբողջ աշխատանքը: Այս կարծրատիպի դրսևորումը հաճախ է հանդիպում անգլիական «կենցաղային» անեկդոտներում: Օրինակ՝

*6) As a boat is about to sink, a female passenger jumps up frantically and announces: "If I'm going to die, I want **to die feeling like a woman.**"*

*She removes all her clothing and asks: "Is there someone on this ship who is man enough **to make me feel like a woman?**"*

A man stands up, removes his shirt and says: "Here, iron this!"

<<http://www.homeenglish.ru/Jokes287.htm>>

Վերը նշված համեմատություններում կենտրոնական կերպարը կինն է (**to die feeling like a woman; to make me feel like a woman**): Կանանց յուրօրինակությունը ավանդական համեմատությունների օգտագործման մեջ է, որոնց օգնությամբ նրանք նկարագրում են իրենց ապրումները, արտահայտում ներքին հոգեկան աշխարհը: Ավանդական համեմատությունները հանրածանոթ են և լայն գործածություն ունեն, և կանանց խոսքում դրանց պարբերական վերարտադրությունը համեմատությանը հաճախ հաղորդում է դարձվածքային բնույթ, և դրանց պատկերային հիմքը ժամանակի ընթացքում ոչ միայն թուլանում է, այլև շատ դեպքերում՝ ընդհանրապես կորչում: Իսկ տղամարդիկ իրենց խոսքում օգտագործում են անհատական համեմատություններ, որոնք աչքի են ընկնում իմաստային երանգների

ներբությամբ, հարուստ զուգորդականությամբ, հսկայական արտահայտիչ ներուժով:

Արձանագրված օրինակներում կնոջ կողմից տնային պարտականությունները կատարելը համարվում է բնական: Հիմնվելով հասարակությունում կանանց գենդերային դերերի վրա՝ կարելի է ենթադրել, որ կինը ավելի ծանոթ է զանազան ճաշատեսակների անվանումներին, քան տղամարդը, ուստի և կանայք բավականին հաճախ են երգիծական խոսույթում օգտագործում նշյալ թեման՝ որպես փոխաբերության աղբյուր (օրինակ՝ **“salty talk;” “rotten apple”; “the bread is tough”; “sweet bird of youth;” “take the biscuit and the cookies”; “You put a lot of spices in that idea”; “He is eating his brain”; “He is a cake”; “You rotten onion!”; “Curved cucumber can never be rendered straight;” “A folded pancake”; “He is half cooked”; “Beef and turnip”; “He is a sour lemon”** և այլն): Սա ուժեղացնում և խորացնում է առարկայական տեղեկատվությունը՝ տալով նրան նոր երանգավորում՝ դրանով իսկ դարձնելով նման փոխաբերությունները սեռից կախված և շեշտելով այն կարծրատիպը, որ կանանց հիմնական խնդիրը տնային տնտեսություն վարելն է: Օրինակ՝

7) *Two women were sitting in the doctor's waiting room comparing notes on their various disorders.*

*“I want a baby more than anything in the world,” said the first, “**It's a cake with a cherry on the top for me.** But I guess it is impossible.”*

“I used to feel just the same way,” said the second. “But then everything changed. That's

why I'm here. I'm going to have a baby in three months."

"You must tell me what you did."

"I went to a faith healer."

"But I've tried that. My husband and I went to one for nearly a year and it didn't help a bit."

The other woman smiled and whispered, "Try going alone, next time, dearie."

<<http://good-jokes.com/medical-jokes.php>>

Վերոբերյալ անեկդոտի օրինակում կնոջ խոսքում օգտագործվել է փոխաբերություն (***"It's a cake with a cherry on the top for me"***), որը արտահայտչականություն է հաղորդում նրա խոսքին: Հերոսուհին նախապատվություն է տալիս իր մտքի փոխաբերական արտահայտությանը՝ շեշտադրելով իր հուզականությունը՝ կապված երեխա ունենալու իր ցանկության հետ: Այդպիսի կարծև ինքնատիպ փոխաբերական կառույցներ հանդիպում են կանանց խոսքում: Դրանք օգնում են ավելի լավ բացահայտելու նրանց ներաշխարհը: Կանանց գրույցների թեմատիկան սովորաբար ներառում է երեխաներին, տունը, ընտանիքը, խոհանոցը, մարդիկ, գնումները: Այսինքն՝ թեմաները կապված են կնոջ սոցիալական դերի բնույթի հետ (*մայր, կին, տնային տնտեսուհի*): Տղամարդկանց և կանանց խոսքային առանձնահատկությունները կարող են ճշգրտվել ոչ միայն նրանց ընտրած թեմայով, այլ նաև լեզվական միավորների գործածությամբ՝ բառային կազմ, ձևաբանական և շարահյուսական կառույցներ, ոճական երանգավորումներ (տե՛ս մանրամասն Գլուխ 6):

Ուրիշ խոսքով՝ տղամարդկանց և կանանց կողմից օգտագործված բազմազան ոճական հնարների ուսումնասիրությամբ

կարելի է բացահայտել նրանց աշխարհայացքը, անձնական որակները, հոգեբանական առանձնահատկությունները: Տղամարդիկ և կանայք ոչ միայն ընտրում են իրականության առարկաները և երևույթները, այլև դրանց մասին պատմելու ձևը: Անգլիական երգիծական խոսույթում նրանց կողմից օգտագործված արտահայտչամիջոցները արտացոլում են ոչ միայն իրականությունը, հանրամշակութային կարծրատիպերը, այլև նրանց հասարակական դիրքորոշումները: Լեզվական միջոցները երգիծական խոսույթում թույլ են տալիս բազմակողմանիորեն բնութագրել կանանց և տղամարդկանց, նրանց վերաբերմունքը նկարագրածի նկատմամբ և դրա հետ մեկտեղ արտացոլել հանրամշակութային կարծրատիպերը:

Անգլիացի տղամարդկանց մեծ մասը կարծում է, որ կինն առաջին հերթին պետք է լինի լավ տնտեսուհի. նրանք իրենց կանանց մեջ չեն ընդունում այնպիսի հատկությունների առկայությունը, ինչպիսիք են հիմարությունը, վատնողությունը, կովարարությունը, խորամանկությունը: Անգլիական անեկդոտներում առկա է կերակուր պատրաստել չկարողացող կնոջ կարծրատիպը, և այստեղ էլ շեշտը դրվում է կնոջ անպիտանիության վրա: Օրինակ՝

8) Two men are talking. The first says "I got married because I was tired of eating out, cleaning the house, doing the laundry and wearing shabby clothes."

"Amazing," said the second, "I just got divorced for the very same reasons."

<<http://thejokes.co.uk/jokes-about-marriage-2.php>>

9) **Wife to her husband:** *Wake up. Some thieves have broken into our house. I think they are now eating the food I made last night.*

Husband: *Oh! Let's better call the ambulance then.*

<<http://www.forjoke.com/thieves-in-the-kitchen>>

Տղամարդկանց և կանանց հակադրությունը պայմանավորված է ամենից առաջ այն դերերի տարբերությամբ, որ նրանց վերապահել է բնությունը: Ամուսնու դերն է՝ պահպանել, պաշտպանել կնոջը և երեխաներին: Կնոջ դերն է՝ հոգալ երեխաների և ամուսնու կարիքները, ստեղծել ջերմ, հոգևոր մերձեցման մթնոլորտ ընտանիքում:

Որպես ընդհարման պատճառ՝ ամուսնական անհավատարմության թեման անգլիական երգիծական խոսույթում հաճախ է արծարծվում: Ամուսնական անհավատարմությունը հազվադեպ է որևէ մեկին գոհունակություն պատճառում: Ընդհակառակը, ամուսիններն սկսում են միմյանց ատել բոլորակալ թուլության համար: Անգլիական անեկդոտներում անհավատարիմ ամուսնու սիրուհին, առավել ևս եթե նա ամուսնացած է, ինքն է լուծում ամուսնացած տղամարդուն առնչվող բոլոր խնդիրները: Իսկ չամուսնացած աղջիկն ամուսնացած տղամարդու հետ հարաբերություններում տառապում է անլիարժեքության հագեբանական բարդությոթվ և նախանձում է իր արդեն ամուսնացած մտերիմ ընկերուհիներին: Ամուսնական անհավատարմության իրավիճակներում առկա է այն գործոնը, որն արտացոլում է կանանց և տղամարդկանց կենսագործունեության պատմականորեն ձևավորված տիպերը: Տղամարդը միշտ դավաճանում է դրսում, ոչ

տանը: Դա կարելի է բացատրել նրանով, որ պատմականորեն տղամարդը միշտ համարվել է որսորդ և այդ պատճառով երկար ժամանակով բացակայել է՝ ընտանիքը կերակրելու համար: Սակայն, անեկդոտների բովանդակային վերլուծությունից երևում է, որ կնոջ անհավատարմությունը երեք անգամ ավելի հաճախ է հանդիպում, քան ամուսնունը: Ենթադրվում է, որ նման իրավիճակներ անեկդոտներում ստեղծվում են այն պատճառով, որ դրանք հորինողները հենց տղամարդիկ են: Քիչ չեն այն «կենցաղային» անեկդոտները, որոնցում տղամարդը բավարարված չէ ընտանեկան կյանքով և դավաճանում է կնոջը:

Օրինակ՝

10) A young couple gets married, and the groom asks his bride if he can have a dresser drawer of his own that she will never open. The bride agrees. After 30 years of marriage, she notices that his drawer has been left ajar. She peeks in and sees 3 golf balls and \$6,000. She confronts her mate with her findings, and asks for an explanation. He explains "Every time I was unfaithful to you, I put a golf ball in the drawer." She figures 3 times in 30 years isn't bad. But what about the \$6,000? He explains "Whenever I got a dozen golf balls, I sold them!"

<http://www.poddys.com/jokes/golf_024.htm>

11) Julie didn't come home one night. When Tom asked her where she "d been she said she spent the night at a girl- friend's house.

Tom was a bit suspicious she' d been "rooting around" so rang her ten closest friends, but none of them had seen her.

The following week Tom didn't come home one night. Julie asks him where he' d been. So Tom says he got a bit drunk at a mate's place and thought it was safer not to drive but crash out there.

Julie thinks he "s been "rooting around" so rings his ten best mates. In true male style - eight of them say he spent the night there and two claim he' s still there.

<http://www.guy-sports.com/months/-jokes_gender_differences.htm>

Բերված օրինակներից վերջինում ծաղրի է ենթարկվում տղամարդկային համերաշխությունը (***In true male style - eight of them say he spent the night there and two claim he' s still there***) և դրա պակասը կանանց շրջանում:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում առկա է նաև, այսպես կոչված, երկակի դավաճանության գործոնի քննարկումը, երբ դավաճանում են թե՛ կինը, թե՛ ամուսինը: Օրինակ՝

12) One day a girl brings home her boyfriend and tells her father she wants to marry him. After talking to him for a while, he tells his daughter she can't do it because he's her half brother. The same problem happens again four more times! The girl starts to get pissed off. She

goes to her mom and says, "Mom... What have you been doing all your life? Dad's been going around laying every maiden in the town and now I can't marry any of the five guys I like because they have turned out to be my half brothers !!!"
Her mom replies, "Don't worry darling, you can marry any one of them you want, he isn't really your dad."

<<http://lingualeo.com/ru/jungle/dont-worry-darling-18968>>

Քննարկենք հաջորդ «կենցաղային» անեկդոտը, որտեղ պատմողի համակրանքն ամուսնու կողմն է: Վերջինս շարունակ վիճում է կնոջ հետ այն բանի համար, որ ուշ գիշերին է վերադառնում տուն: Նա զարմացած է, թե ինչպե՞ս գողը կարող էր ներխուժել իրենց տուն՝ առանց արթնացնելու իր կնոջը (***"I need to know how he got into the house at three o'clock in the morning without making a noise and without waking my wife!"***), մի բան, որ իրեն երբեք չի հաջողվել: Այսպես՝

13) A man visiting the police station is most insistent.

"It's absolutely essential that I speak to the burglar who broke into my house last night".

"Why's that?"

Անգլերենի խոսքային-գուգորդային ցանցում առանձնահատուկ տեղ է գրավում **“mother-in-law” (զոքսնջ)** բառը: Դա թերևս կարելի է բացատրել նրանով, որ նշյալ միավորը լեզվական այլ միավորների (**brother-in-law; sister-in-law; son-in-law; daughter-in-law**) համեմատ գնահատողական իմաստի ավելի արտահայտված հատկություններ ունի:

Լեզվակիրների գիտակցության մեջ **“mother-in-law” (զոքսնջ)** բառը օժտված է հզոր բացասական երանգավորմամբ, մինչդեռ դրան իմաստով մոտ **“father-in-law, brother-in-law, sister-in-law, son-in-law, daughter-in-law”** միավորները գրեթե զուրկ են հավելյալ իմաստառճական երանգներից:

“Mother-in-law” բառույթի ներիմաստային հագեցվածությունը չի կարելի բացատրել զուտ լեզվաբանական պատճառներով (բառի ստուգաբանական վերլուծությամբ, հնչյունական անբարեհնչությամբ): Աշխարհի անգլիական պատկերի երգիծական տարբերակում **“mother-in-law”** բառը ամենաշատ գործավողներից է, որն արտացոլվում է անգլիական (բացառություն չէ նաև հայկական¹⁴) «կենցաղային» անեկդոտներում:

Ընտանեկան հարաբերությունների մասին անեկդոտներում առանձնանում են ազգականների միջև ընտանեկան վեճերի հետևյալ խմբերը. սկեսուրը վիճում է հարսի հետ, սկեսուրը

գժտեցնում է տղային կնոջ հետ, հարսները վիճում են միմյանց հետ, հարսը վիճում է ամուսնու չամուսնացած քույրերի հետ: Օրինակ՝

50) **Mother-in-law:** *If you don't like me, why do you take me on holidays with you?*

Daughter-in-law: *So I don't have to kiss you good-bye.*

<http://www.lukaroski.com/jokes/motherinlaw.asp>

51) *A grandmother is at the toy store for hours trying to find the perfect gift for her grandson for his birthday.*

She wanders the store for hours, finally she walks to the cash register with her find, a Super Deluxe Megaphone, a megaphone with a voice-changer and flashing lights which allows kids to yell in 10 different voices.

She says to the cashier, "This is the perfect birthday gift, my grandson will love it and it will drive my Daughter-in-law crazy. She'll hate it!"

<<http://www.familyfriendjokes.com/jokes/family/grandmother/>>

Սկեսուր – հարս – զոքանչ – փեսա փոխհարաբերությունները կառուցվում են տարբեր նմուշ-օրինակներով՝ ելնելով ինչպես ազգականների ավանդական դերաբաշխումից (հարսի ենթակա կարգավիճակը «օտար» տանը, փեսայի անկախ կարգավիճակը), այնպես էլ միևնույն սեռի գործող անձանց՝ միմյանց դուրս մղելու ձգտումը: Օրինակ՝

52) *A lady with a large flowery hat was stopped at the church door by the usher. "Are you a friend of the bride?" he asked.*

"Certainly not," she snapped, "I'm the groom's mother."


<http://www.best-funny-jokes.com/marriage-jokes-a-lady-with-a_6854>

Չոքանչին կարող են վերագրվել սկեսուրին բնութագրող նույն հատկանիշները. «գայթակղում» է ապագա փեսային դեպի դուստրը, մոգական հմայություններով երբեմն «բաժանում է» երիտասարդներին, սակայն, ընդհանուր առմամբ, նրան բնորոշ չեն սկեսրոջ կերպարի «դիվային» հատկանիշները: Մենք տեսնում ենք, որ առօրյա նկարագրության մեջ ընտանիքի գլխավոր ապակառուցողական տարրը **զոքանչը** չէ: Նրան ավելի քիչ բացասական գծեր են վերագրվում, քան սկեսրոջը: Այդ դեպքում ինչո՞ւ է լեզվական մակարդակում սկեսուրը հայտնվում չեզոք դիրքում, իսկ զոքանչի կարծրատիպը բացասաբար է մեկնաբանվում: Պատասխանը բխում է անեկդոտի ժանրի հանրամշակութային կարգավիճակից: Հարկավոր է անեկդոտը դիտարկել ոչ միայն որպես **“mother-in-law”** կարծրատիպի իրացման ոլորտ, այլև որպես այդ կարծրատիպը լեզվագիտակցության մեջ ձևավորող գործոն:

Ժամանակակից անգլիական հանրամշակույթի համար հատկորոշ բոլոր կապերից **mother-in-law (զոքանչ) / son-in-law (փեսա)** հարաբերություններն ամենաարդիականն են: Ընդ որում, այս զույգի անդամներից առավելագույնս շեշտադրվում է **mother-in-law-ն (զոքանչը)**, որը հաճախ խոսքային և ոչ խոսքային ագրեսիայի թիրախ է դառնում անգլիական «կենցաղային» անեկդոտներում:

Դրա մասին է վկայում ազգակցական փոխհարաբերությունների մասին վիճակագրական մշակման մեթոդի արդյունքում կազմված հետևյալ գծապատկերը (գծապատկերը Ա.Տ. Կնյազյանի):

Գծապատկեր 2
Ազրեսիան անգլիական «կենցաղային» անեկդոտներում



Այսպիսով՝ դիտարկվող անեկդոտներում կինը հանդես է գալիս երկու հիմնական գործառույթով՝ որպես չարության մարմնավորող՝ զոքանչ, և որպես կին: Կինն ու զոքանչը տղամարդու համար անհարմարավետություն ստեղծող մեկ միասնական գործոնի դեր են կատարում և ազրեսիան տարածվում է նրանց վրա հավասարաչափ:

Լեզվական նյութի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլիական «կենցաղային» անեկդոտների բավականին ծանրակշիռ մասը նվիրված է ամուսնացած կանանց, և ծաղրի են ենթարկվում առհասարակ կանանց բնութագրող առանձնահատկությունները:

Անգլիական անեկդոտներում սեռերից մեկին ներկայացվում է վարքագծային նորմերի ու սպասելիքների առանձնահատուկ ամբողջություն, որը զգալիորեն տարբերվում է մյուս սեռին ներկայացվող պահանջներից: Այդ նպատակով օգտագործվում են հատուկ եզրույթներ ու բառեր, որոնք տարակերպ են բնութագրում տղամարդկանց ու կանանց: Այդ ամենը արտացոլվում է հասարակական գիտակցության արտահայտման հատուկ ձևերում՝ կարծրատիպերում: Անգլիական անեկդոտներում ծաղրի են ենթարկվում տարբեր թերություններ, որոնցից են ազահությունը, ժլատությունը, վախկոտությունը, հիմարությունը, ծուլությունը, ամուսնական անհավատարմությունը և այլն, որոնք հակասում են տվյալ լեզվամշակութային միջավայրի հանրային բարոյական կամ ազգային արժեքներին:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում կարծրատիպերի ձևավորման հիմքում ընկած են ճանաչողական գործընթացներ: Երգիծական խոսույթում կարծրատիպերը կատարում են մի շարք ճանաչողական գործառույթներ՝ սխեմայացման, պարզեցման, խմբի գաղափարախոսության ձևավորման, պահպանման և մտածական այլ գործառույթներ: Անգլիական անեկդոտներում կարծրատիպերի հիմնական գիծը հանրամշակութային պատճառաբանվածությունն է. աշխարհի մասին մարդու պատկերացումը ձևավորվում է հանրամշակութային շրջապատի ազդեցությամբ, որտեղ ինքն ապրում է:

Այսպիսով՝ «կենցաղային» անեկդոտը հանրային սոցիալական և բարոյաէթիկական արժեքների ձև է: Այն հենվում է տարբեր պատկերացումների ու կարծրատիպերի վրա, որոնք արտացոլում են լեզվամշակութային միջավայրի ներկայացուցիչների սուբյեկտիվ ու առանձնահատուկ ընկալումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հակառակ սեռի հասցեին սրախոսությունը կարող է ոչ միայն ամրապնդել գենդերային խմբի նույնականության զգացումը և դրա մյուս անդամների հետ համերաշխությունը, այլև հանգեցնել գենդերների միջև տարբերությունների չափազանցված ընկալմանը և առաջ բերել բախումներ դրանց ներկայացուցիչների միջև (Берн 2001):

2. Այսպես, օրինակ՝ զանազան կերպարներ կիրառվում են գովազդներում, որոնք թելադրվում են կանանց և տղամարդկանց հասարակական կարծրատիպերով.

- մանկական և կենցաղային ապրանքների, սննդամթերքի գովազդում կիրառվում է մոր և կնոջ կերպարը,
- օժանդակի, հագուստի և կոշիկի գովազդում ներկայացվում է գրավիչ և գեղեցիկ կնոջ կերպարը,
- գործարար կնոջ կերպարը կիրառվում է տեխնիկայի և մեքենաների գովազդում,
- թանկարժեք ապրանքների գովազդում ներկայացվում է գործարար տղամարդու կերպարը,
- մարմնի խնամքի միջոցների գովազդում ներկայացվում է տղամարդու կերպարը,
- ընտանեկան շքեղ մեքենաների գովազդում հանդիպում է տղամարդու կերպարը:

<http://emporium.am/en/articles/2051-gender-comertial>

3. Անգլիական անեկդոտներում գենդերային խտրականությունը ստեղծվում է տղամարդկանց՝ որպես գերիշխող, և կանանց՝ որպես հնազանդվող սեռերի ներկայացման միջոցով: Հիմնական սկզբունքն այստեղ մի սուբյեկտի գերիշխումն է մյուսի նկատմամբ:

4. Կնոջ հիմնահարցը հաճախ քննարկվում է ընտանեկան հարաբերությունների դիտանկյունից: Կնոջը վերագրվում են ընտանիքում խաղացվող ավանդական դերեր, իսկ տղամարդուն, որպես կանոն, ընտանիքից դուրս (Shein 1973):

5. Տղամարդուն թերագնահատելու երևույթին կարելի է հանդիպել նաև հայկական «կենցաղային» անեկդոտներում: Օրինակ՝

-Վարդանիկը տուն է մտնում, տեսնում՝ մայրը թանկարժեք մուշտակը հագին պտտվում է հայելու դիմաց:

- Մա՛, բարով մաշես, պապան է առե՞լ:

- Հողս պապայիդ գլխին, իրա հույսին մնայի, դու էլ չէիր էղնի,- պատասխանում է մայրը:

(Գևորգյան 1990:148)

Մի գեշ կին իրեն նայում է հայելու մեջ ու ասում.

- Մարդուս տեղն ա, իրան էս էլ ա շատ:

<[http://www.status4ka.am/publ/statusner/humorain/1-](http://www.status4ka.am/publ/statusner/humorain/1-1-0-16915)

1-0-16915>

6. Հայկական անեկդոտներում տղամարդիկ նույնպես ծաղրի են ենթարկում կանանց տգեղ արտաքինը: Օրինակ՝

-Դու ու՞մ ես սիրում՝ գեղեցի՞կ, թե՞ խելացի կնոջ,-
հարցնում է կինը:

-Ոչ մեկին: Ես քեզ եմ սիրում,- պատասխանում է ամուսինը:

<<http://morfeys.do.am/index/0-12>>

-Ձեզ վրա հարձակվել են դրամի համար և ծանր վնասվածքներ հասցրել: Հիշու՞մ եք գողի դեմքը,-
հարցնում է քննիչը:

- Իհա՛րկե, ո՞վ չի հիշի իր կնոջ դեմքը:

<[http://tarm-anekdotner.do.am/board/desc_denic/12-](http://tarm-anekdotner.do.am/board/desc_denic/12-3-2)

3-2>

7. Հարկ է նշել, որ այնպիսի արատը, ինչպիսին **հարբեցողությունն է**, ծաղրի է ենթարկվում նաև հայկական «կենցաղային» անեկդոտներում, հիմնականում հեգնանքի միջոցով: Օրինակ՝

Կարոն այնքան էր խմել, որ իրենց տուն գնալու փոխարեն քայլեց հակառակ ուղղությամբ: Կինը պատուհանից տեսավ և դուրս եկավ, հասավ նրան.

- Ո՞ր կերթաս, Կարո՞:

Կարոն շաղված աչքերով նայեց կնոջն ու հարցրեց.

- Քու՛ր ջան, կրնա՞ս ըսէ՛ որտե՞ղ է Կարոյենց տունը:

(Գևորգյան 1990:163)

Լենինականցի Օնեսը գնում է Քյավառ՝ մահամերձ ընկերոջը տեսության:

- Օնո՛ ջան, որ մեռա, ընծի կթաղեք Լենինականում,

- ասում է քյավառցին:

- Էդ ընչի՞ օր...

- Թաղելուց ետև, լենինականցիք օղորմաթաս խմելուց մէ կում ներս կուտան, մնացած կթալեն վրես...

(Գևորգյան 1990:165)

Կինը՝ ամուսնուն.

- Սիրելի՛ս, երեկ ինձ այնքան հաճոյախոսություն արեցիր: Նման բան քեզանից ես կյանքում չէի լսել:

- Կներես, հարբած էի:

<<http://tarm-anekdotner.do.am/board/y-39-ntanekan/9-1-0-87>>

8. Ըստ սոցիոլոգիական բառարանի՝ **ազրեսիա** եզրույթը մեկնաբանվում է որպես թշնամական վերաբերմունք, գործողություն: Բոլոր մարդկանց ազրեսիվ վարքի հիմքում սովորաբար ընկած են մի շարք զգացմունքներ, օրինակ՝ վախ, զայրույթ (Джерн, Джери 1999):

9. Ազրեսիվ կարելի է համարել միայն այնպիսի վարքագիծը, որն ուղղված է ինչ-որ մեկին ֆիզիկական կամ հոգեբանական վնաս պատճառելուն (Берковиц 2002:24):

10. Մեր հետազոտության մեջ որպես ագրեսիայի աշխատանքային սահմանում ընդունել ենք Ռ. Բարոնի և Դ. Ռիչարդսոնի տեսակետը: Ագրեսիան վարքի ցանկացած ձև է, որը նպատակաուղղված է անարգելու և վնաս հասցնելու մեկ այլ կենդանի արարածի, որը չի ցանկանում նման վերաբերմունք իր նկատմամբ (Baron, Richardson 1994):

11. Ագրեսիայի բնութագրման փորձի հիման վրա Կ. Ֆ. Սեդովն առաջարկել է 10 հակադրությունների զույգեր. 1. *խոսքային* – *ոչ խոսքային*, 2. *ուղղակի* – *անուղղակի*, 3. *գործիքային* – *ոչ գործիքային*, 4. *նախաձեռնող* – *արձագանքող*, 5. *ակտիվ* – *պասիվ*, 6. *անմիջական* – *միջնորդավորված*, 7. *հանապարաստից* – *նախապարաստված*, 8. *հուզական* – *բանական*, 9. *ուժեղ* – *թույլ*, 10. *թշնամական* – *ոչ թշնամական*:

Խոսքային և ոչ խոսքային ագրեսիան սահմանազատելու համար հիմք է ծառայում նշանային արտահայտչամիջոցների բնույթը: Բացի բուն լեզվական միջոցներից, գոյություն ունեն ագրեսիա արտահայտելու ոչ խոսքային միջոցներ (օրինակ՝ ժեստերը, նշանակալի լուրջությունը): *Ուղղակի* ագրեսիան պարունակում է բացահայտ թշնամանք, *անուղղակին* դրսևորվում է միջնորդավորված ձևով (քմիծաղ, ծաղր, հեգնանք): *Ոչ գործիքային* ագրեսիան պարունակում է թշնամական խոսողական-կատարողական ակտ, *գործիքային* ագրեսիան՝ որևէ այլ նպատակի հասնելու ձգտում: *Նախաձեռնողական* ագրեսիան հարձակման միջոց է, իսկ *արձագանքողը*՝ պատասխան արձագանքը: *Ակտիվ* և *պասիվ* ագրեսիայի տարանջատումը հիմնվում է խոսողի դիրքորոշման վրա. կարելի է արձագանքել ագրեսիային հարձակողականությամբ, բայց կարելի է ընդունել նաև «ինձ հանգիստ թողեք» կեցվածքը: Ագրեսիայի *անմիջական* և *միջնորդավորված* տարատեսակները տարբերվում են հաղորդակցային ակտի տարածաժամանակային բնութագրերով: *Նախապարաստված* ագրեսիան մտածված հաղորդակցային ակտ է, որը թշնամանք է պարունակում: *Հանապարաստից* ագրեսիա հաճախակի կարելի է տեսնել առօրյա հաղորդակցության ընթացքում: Ագրեսիայի *հուզական* և *բանական* տարատեսակները տարբերվում են բանական հիմքի ներկայությամբ (բացակայությամբ): *Ուժեղ* և *թույլ*, ինչպես նաև

թշնամական և ոչ թշնամական ագրեսիաների առանձնացումը պայմանավորված է հաղորդակցային ակտի հուզական ներգործության ուժով և դրա ուղղվածությամբ (Седов 2003:20 - 27):

12. Հայկական անեկդոտներում կնոջը ծեծի ենթարկելը քաջալերվում է տղամարդկանց կողմից: Օրինակ՝

Կարոն ծեծում է կնոջը.

- Օգնեցե՛ք, - ճշում է կինը:

Օնեսը մոտ է վազում, ուշադիր նայում և ասում.

- Օգնելու կարիք չկա, մարդը շար սամթի էլ կծեծե:

(Գևորգյան 1990:90)

Կարոն տնից դուրս եկավ, տեսավ խմած Օնեսը ծեծում է կնոջը.

- Ա՛յ մարդ, ի՞նչ պատճառ կա, ընչի՞նչ կծեծես էդ կնոջան:

- Պատճառ էղներ կսպանեի,- պատասխանեց Օնեսը:

(Գևորգյան 1990:164)

13. Տղամարդկանց՝ հայիդյախոսությանը հակված լինելու վերաբերյալ կարծիք է հայտնել նաև Ի. Ա. Ստեռնինը: Նա տղամարդկանց հաղորդակցային վարքագծի առանձնահատկություններին նվիրված իր աշխատություններում հայիդյախոսությունը համարում է տղամարդկանց շփման էական առանձնահատկություն (Стернин 2001):

Ըստ Ի. Ա. Ստեռնինի՝ տղամարդկանց շփումներում կոպիտ բառապաշարի օգտագործումը կատարում է մի քանի գործառույթ.

- միավորական (հայիդյախոսությունն օգտագործվում է տղամարդկանց խմբում արականության մթնոլորտ ստեղծելու համար),
- սեռային պատկանելությունը ներկայացնելու (տղամարդիկ հայիդյախոսությունն օգտագործում են իրենց «տղամարդկային առաջնայնությունը», արական սեռին պատկանելությունը ցուցադրելու համար),

- հուզագնահատողական (անպարկեշտ բառը հանդես է գալիս որպես խոսելու պահին ամբողջական հույզի անմիջական ապրումների արտահայտման միջոց, որը հաճախ բացասական է, երբեմն էլ՝ դրական),
- «բարեկամական քաջալերման» (անպարկեշտ բառերը կարծես ընկերաբար, անկաշկանդ օգտագործվում են որպես զրուցակցի նկատմամբ դրական վերաբերմունքի դրսևորում),
- երրորդ անձին կշտամբելու գործառույթ՝ երկու շփվողների միջև կապ հաստատելու համար (Стернин 1999:182-189):

14. **Փեսայի** ու **զոքանչի** միջև բախումների վերաբերյալ հայկական «կենցաղային» անեկդոտներում զգալի տեղ ունեն նաև հեգնանքն ու սարկազմը: Օրինակ՝

Մեկը տանը վանդակի մեջ առյուծ ա պահում: Մի օր զանգում են գործի տեղ, ասում են.

-Ապե՛, առյուծդ վանդակից դուրս ա եկել:

-Արաաա՛: Բա էրեխե՞քս:

-Մի՛ վախեցիր. երեխաներդ դպրոցում են:

-Արաաա՛: Բա կի՞նս:

-Մի՛ վախեցիր. կինդ խանութում է:

-Բա ո՞վ կա տանը:

-ԶՈՔԱՆՉԴ:

-Արաաա՛: Առյուծս...

<<http://www.status4ka.am/board/howmorayin/4-10-2>>

Փեսան զոքանչի հետ կռվից հետո դիմում է որդուն.

-Բալե՛ս, մի հար գնա՛, տատիկի շրթունքների կրեմը բե՛ր:

-Ի՞նչ կրեմ:

-Վրեն գրված ա “Момент”:

<<http://tarm->

[anekdotner.do.am/board/zonqachneric/8](http://tarm-anekdotner.do.am/board/zonqachneric/8)>

Հայկական անեկդոտներում գերակշռում են հեգնական արտահայտություններ զոքանջի վերաբերյալ («*երաժշտություն զոքանջի թաղման ժամանակ*», «*զոքանջս թունավորվեց*» և այլն):

Զոքանջի մասին հայկական «կենցաղային» անեկդոտներում բավականին հաճախ առկա է զոքանջի մահանալու կամ վնասվելու փաստը, որը փեսան ուրախությամբ է ընդունում: Օրինակ՝

- *Օնո՛, զոքանջդ ինչի՞ մեռավ:*
- *Թունավոր սունկ էր կերել:*
- *Հըբը աչքի տակը ընչի՞ էր կապտել:*
- *Չէր ուտե, զոռով կերցրի:*

(Գևորգյան 1990:86)

Կարոյի տունը հրդեհ էր ընկել: Կարոն ներս է մտնում, վազելով դուրս գալիս, թրջվում նորից մտնում:

- *Ծո՛, ի՞նչ կենես,- հարցնում է Օնեսը:*
- *Հե՛ չ, զոքանջս վառիզը, շուռումուռ կուտամ, որ խամ տեղ չմնա:*

(Գևորգյան 1990:1)

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՏԻ ՀՈՒՋԱԶԳԱՑԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլխում քննության է առնվում լեզվական անհատը¹ «կենցաղային» անեկդոտներում գենդերային տեսանկյունից, քանի որ գենդերը՝ որպես հասարակության կողմից տղամարդու և կնոջ դերերի, վարքի, հոգեկան և զգայական բնութագրերի կառուցման հանրամշակութային բարդ գործընթաց, ամենաանմիջական ձևով կապված է կանանց և տղամարդկանց հուզականության հետ: Լեզվական անհատի տեսության հիմնադիրը իրավամբ համարվում է Յու. Ն. Կարաուլովը, թեպետ այս եզրույթը և լեզվական անհատի հասկացությունն առաջին անգամ լեզվաբանության մեջ կիրառել է Վ. Վ. Վինոգրադովը (Виноградов 1980): Լեզվական անհատ ասելով՝ Յու. Ն. Կարաուլովը հասկանում է մարդու ունակությունների և բնութագրերի համախումբը, որով պայմանավորվում է նրա կողմից լեզվական ստեղծագործությունների արարումն ու ընկալումը (Караулов 1987):

Հետազոտության են ենթարկում հաղորդակցմանը մասնակից անհատի խոսքում հուզարտահայտչական բաղադրիչի գենդերային տարբերությունները անգլիական «կենցաղային» անեկդոտներում: Մարդու հույզերը և լեզվական միջոցների օգնությամբ դրանց արտահայտման մեխանիզմները միշտ եղել են գիտական հետազոտությունների առարկա (տե՛ս Носенко 1979; Kramarae 1981; Шаховский 1995; Christie 2000): Այդ բացառիկ երևույթը հետազոտում են բազմաթիվ գիտություններ՝ հոգեբանությունը, ֆիզիոլոգիան, սոցիոլոգիան, փիլիսոփայությունը, բարոյագիտությունը, բժշկությունը, լեզվաբանությունը, գրականագիտությունը:

Սույն գլխում մենք հետազոտում ենք տղամարդկանց և կանանց խոսքի՝ անգլիական «կենցաղային» անեկդոտներում դրսևորվող հուզարտահայտչական միջոցները **շարահյուսական մակարդակում**.

- զեղչված կառույցներ,
- փոխակերպումներ,
- կրկնություն (կառույցի/բառի),
- անավարտ նախադասություններ,
- բացականչական նախադասություններ,
- հարցական նախադասություններ:

Ձևավորված կարծիք կա, որ քերականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվի նկատմամբ կիրառված տրամաբանություն (ИВИН 2008): Անկասկած, քերականական երևույթների մեծ մասն ունի առավելապես տրամաբանական բնույթ, սակայն դրանց շարքում գոյություն ունեն քերականական կարգեր, որոնք ունակ են արտահայտելու զգացմունքներ և հույզեր: Նախադասության իմաստաբանական և շարահյուսական կառուցվածքը որոշվում է ոչ միայն արտացոլվող իրադրության բնույթով, այլև խոսողի հոգեվիճակով, թե ինչպես է նա ընկալում իրավիճակը, ինչպես է արձագանքում դրան (տե՛ս Добрунова 1990):

Շարահյուսական մակարդակի հիմնական միավորները բառակապակցություններն ու նախադասություններն են: Հաճախ արտահայտության հուզականությունը ստեղծվում է շարահյուսական միավորներով: Ի տարբերություն բառապաշարի՝ այն օժտված չէ իր միավորների նույնքան հստակ ոճական երանգավորմամբ և չի պատկանում որոշակի գործառական ոճերի ու խոսքային ոլորտների: Սակայն, այդուամենայնիվ, հենց շարահյուսությունն է օժտված իմաստային նրբերանգները հաղորդելու հնարավորությամբ: Տղամարդկանց և կանաց խոսքի տարբերու-

թյունների ուսումնասիրման համար կարելի է նաև հենվել նրանց խոսքի շարահյուսության վրա, որտեղ խտացված են ոճի առավել յուրահատուկ դրսևորումները: Լեզվի և անհատի մտքի փոխադարձ կապը ավելի հեշտ է տեսնել նրա խոսքի շարահյուսության մեջ: Իմաստային բովանդակությունը կարող է ունենալ այս կամ այն գերիշխող առանձնահատկություններով շարահյուսական զանազան դրսևորումներ: Խոսքում որպես առավել ակնառու դրսևորումներ հատուկ իմաստ են ստանում բառերի շարահասությունը և նախադասության մասնատումը:

Տղամարդիկ և կանայք, ունենալով միայն իրենց հատուկ անհատական մտածողություն, իրականության իրենց ըմբռնումը, անեկդոտներում նկարագրում են շրջապատող աշխարհի անվերջանալի հարստությունն ու բազմազանությունը, դրա հետ մեկտեղ նրանց տպավորությունը յուրահատուկ է և պատկանում է միայն իրենց: Լեզվական միջոցների կիրառման մեջ որոշիչը արտահայտում է նրանց տպավորությունները, ապրումները և սկզբունքները, որոնք կուտակվում են ինչպես գիտակցաբար, այնպես էլ ենթագիտակցաբար: Անգլիական երգիծական խոսույթում տղամարդկանց խոսքում հատկանշական են անսպասելի անցումներ հաղորդակցական մի միջոցից մեկ այլի, հաճախ են նաև խախտումները արտաքին աշխարհի տրամաբանական և օբյեկտիվ նկարագրերում: Կարելի է կարծել, որ խոսքի այսպիսի բաժանումը առաջանում է այն պատճառով, որ մի կողմից տղամարդը ցանկանում է ազդել լսողի վրա, իսկ մյուս կողմից ցույց է տալիս իր սուբյեկտիվ վերաբերմունքը նկարագրվածի նկատմամբ: Հետևաբար երգիծական խոսույթի համատեքստային բաժանման հիմքում ընկած է տղամարդու կամ կնոջ սուբյեկտիվ գնահատականը, որով դրսևորվում է նրանց անհատական ոճը:

Մարդու ներաշխարհը դրսևորվում է ներքին խոսքում, և հասկանալի է, որ գենդերային տարբերությունները ուսումնասիրելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել այս գործոնը: Մեր կողմից երգիծական խոսույթի վերլուծությունը բացահայտել է, որ ներքին խոսքը առկա է տղամարդկանց խոսքում: Օրինակ՝

*53) A young couple move to a remote island off the coast of Newfoundland. They are made very welcome by the locals although the husband is teased a great deal because he is clean shaven. All the other men on the island have long beards. One night, as the couple are getting ready for bed, he has an idea. When his wife has undressed, he asks her to do a handstand in front of the mirror. Thinking it very odd, but curious to know what he's going to do, she agrees. **Then the husband puts his face between her legs and murmurs to himself. "Okay, maybe a beard won't be so bad after all. I will look as a real man".***

(Sharpe 2004:131)

Ներքին խոսքը կարելի է բնութագրել որպես խոսքն ինքն իր մասին, որի միջոցով մարդը մշակում է ստացած տեղեկությունը, հասկանում և գիտակցում է դա յուրովի, միայն իրեն բնորոշ ձևով: Բերված ներքին խոսքի օրինակը տղամարդու ապրումների և ընկալումների վառ օրինակ է, որում առկա է պարզ համեմատական կառույց (***I will look like a real man***): Կառույցի ծավալից կախված՝ տարբերում են պարզ և ծավալուն համեմատու-

թյուններ: Ծավալուն համեմատությունները ներկայացնում են համեմատովող երևույթներից մեկի ընդարձակ նկարագիրը, որի արդյունքում լսողի երևակայության մեջ ամբողջական ավարտուն պատկեր է ստեղծվում: Պարզ համեմատություններին կարելի է վերագրել պատկերավորման այն ոլորտը, որն ավելի փոքր է, ներկայացված է միայն մեկ պատկերով: Մեր նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց խոսքում գերակշռում են ծավալուն համեմատություններ, որոնց կազմի մեջ են մտնում պարագաներ, դերբայական դարձվածներ: Իսկ տղամարդկանց խոսքը, ընդհակառակը, աչքի է ընկնում նկատելի պարզությամբ և կարճությամբ: Նրանց խոսքում դիտվում են պարզ համեմատություններ, որոնք հիմնվում են շատ տորողունակ բառերի վրա և չեն պահանջում որևէ լրացում:

Հուզականությունը կարող է ուղեկցել ցանկացած հաղորդակցային տիպի նախադասության: Հուզարտահայտչական տարրեր պարունակող նախադասությունը ոչ միայն արտահայտում է զանազան հույզեր, այլև կարող է պատասխան արձագանք լինել որևէ իրադարձության կամ զրուցակցի խոսքին: Հույզը հանգեցնում է շարահյուսության մի շարք առանձնահատուկ կառույցների ձևավորմանը, որոնցից են **զեղչված կառույցները**:

Անգլիական երգիծական խոսույթում հաճախ է օգտագործվում զեղչումը, որն առաջին հերթին հատուկ է խոսակցական լեզվին: Ձեղչումը առհասարակ խոսակցական լեզվի շարահյուսության առանձնահատկությունն է: Անգլիական «կենցաղային» աննկղոտներում թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք նախընտրում են օգտագործել նման կառույցներ: Օրինակ՝

54) *Two blondes are walking along the street. Suddenly they see a mirror lying on the ground. The girls pick it up, one of them looks and says:*

*- **Seems a familiar face to me...***

The other girl catches the mirror and takes a look.

- You fool! It's me!

<<http://blog.muvienglish.ru/tag/blondes/>>

55) *“Who is he?” said a passer-by to a policeman, who was endeavouring to raise an intoxicated individual who had fallen into the gutter.*

*“**Can’t say, sir,**” replied the policeman. “He can’t give an account of himself.”*

“Of course, not,” said the other, “how can you expect an account from a man who has lost his balance.”

(English Humour 1964:60)

Վերոբերյալ «կենցաղային» անեկդոտներում արձանագրել ենք զեղչված նախադասություններ՝ *“**Can’t say, sir,**”*, *“**Seems a familiar face to me,**”*, որտեղ բացակայում են անձնական դերանուն-ենթակաները: Տվյալ անեկդոտներում զեղչումը հիմնավորվում է նրանով, որ տեքստում պակասող տեղեկատվությունը առկա է լսողի գիտակցության մեջ հիմնարար գիտելիքների տեսքով: Հուզական արդյունքի հասնել հնարավոր է զեղչման միջոցով, երկխոսության մեջ միջանկյալ կառույցների ներգրավմամբ, ընդհատվող կառույցներով: Այդ հնարները նախազգու-

շացնում են հաղորդակրի հուզվածության, անվճռականության, նրա հոգեկան արգելակման մասին:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում գեղջված նախադասությունները մեծ մասամբ տղամարդկանց խոսքում են հանդիպում (*տե՛ս աղյուսակ 4*):

Օրինակ՝

56) One Sunday morning, Satan appeared before a small town congregation. Everyone started screaming and running for the front church door, trampling each other in a frantic effort to get away.

Soon, everyone was gone, except for an elderly gentleman who sat calmly. Satan walked up to the man and said, “Don’t you know who I am?”

The man replied, “Yep, sure do.”

Satan asked, “Aren’t you going to run?”

“Nope, sure ain’t,” said the man.

Perturbed, Satan asked, “Why aren’t you afraid of me?”

*The man calmly replied, “**Been married to your sister for over 48 years.**”*

<<http://jokes.cc.com/funny-marriage-jokes/euztby/devil-in-the-church>>

Վերոբերյալ անեկդոտում հատուկ ուշադրության է արժանի **“Been married to your sister for over 48 years”** արտահայտությունը, որում բացակայում է ենթական:

Դիտարկենք ևս մի համանման «կենցաղային» անեկդոտ:

57) A new vicar had taken over at the small village church of St Gregory and he was eager to make a good impression. After the service, the congregation emerged from the church and each shook hands with the vicar.

“Lovely sermon,” said one.

“It really made me stop and think,” said another. All of a sudden, a rather scruffy man appeared and as he shuffled past he mumbled, **“Load of bollocks.”**

Determined not to be affected by this, the vicar carried on greeting his parishioners.

“Splendid sermon,” they said, “thank you very much”.

“Quite inspiring.”

The vicar beamed gratefully.

“Absolute crap, call himself a vicar?” came the mumbling of the scruffy man as he passed the vicar again. This time, the vicar was more upset and the situation worsened as the man kept appearing and making comments.

“Bored to tears”, “not worth listening to”,
“what a prat!”

The vicar could take it no longer. He turned to one of the congregation and pointed out the scruffy man.

“Oh, you mustn’t worry about old Ned, Vicar,” said a kindly old woman.

“He’s not right in the head, he just goes around repeating what everyone else has said.”

(Sharpe 2004:144-145)

Օրինակում ընդգծված են զեղչված նախադասությունները (**“Lovely sermon”; “Load of bollocks”; “Splendid sermon”; “Quite inspiring”; “Absolute crap, call himself a vicar?”; “Bored to tears”, “not worth listening to”**), որոնք ներկայացնում են նախադասության ռեման և կրողն են նոր տեղեկատվության, հանուն որի հնչել է արտահայտությունը, իսկ թեման արտաձվում է համատեքստից: Այն, ինչ ամբողջական նախադասության մեջ արտահայտվում է արտակա կերպով, զեղչված նախադասությունում հանդես է գալիս ներակա: Որպեսզի հասկանանք, թե ինչ է թաքնված զեղչված նախադասության մեջ, հարկավոր է այն դիտարկել ոչ թե առանձին, այլ ընդհանուրի համատեքստի մեջ:

Հույզը, ներգրավելով մի ամբողջ բառախումբ և հաղորդելով դրան բացականչական երանգավորում, կարող է մոռացության մատնել բառակապակցության առանձին տարրերի նշանակությունը. այդ դեպքում խոսքում կարտացոլվեն ամբողջ արտահայտության կուլմինացիոն կետերը:

Հաջորդ օրինակում հարբած տղամարդը անսպասելիությունից անկեղծ զարմանք է ապրում: Հույզը չի կարող միանգամայն համարժեքորեն արտահայտվել խոսքով: Սուբյեկտն այն ապրում է որպես հույժ անձնական, անկրկնելի մի բան: Օրինակ՝

58) A drunk barged into a man looking under the bonnet of his car.

“Anything wrong?” he mumbled.

“Piston broke,” came the reply.

“Same here,” said the drunk.

(Sharpe 2004:223)

Բերված անեկդոտում հարբած տղամարդը օգտագործում է մի քանի զեղչված նախադասություններ (***“Anything wrong?”***, ***“Piston broke”***, ***“Same here”***), որոնցում բացակայում են նախադասության գլխավոր անդամները, ինչպես նաև որոշ կառուցատարրեր (հոդեր), սակայն դրանք, շնորհիվ համատեքստի կամ իրավիճակի, կարող են հեշտությամբ վերականգնվել լիակազմ նախադասության համաբանությամբ: Նման կառույցները չեն խանգարում, որ խոսակիցները համարժեքորեն միմյանց հասկանան: Այն խոսակցություններում, որոնցում հաղորդակցվողները հաճախ են փոփոխում խոսողի ու խոսակցի դերերը, անկաշկանդ մթնոլորտը նպաստում է, որ նրանք իրենց մտքերը ձևակերպելիս խստորեն չհետևեն շարահյուսական օրենքներին:

Դիտարկենք զեղչված կառույցներ կանանց խոսքում, որտեղ ցանկացած զեղչման դեպքում մեծանում է ծանրաբեռնվածությունը պահպանված բառի վրա և այդ ծանրաբեռնվածությունը ոչ թե հաղորդակցական բնույթի է, այլ հուզարտահայտչական: Օրինակ՝

59) A man is out shopping and discovers a new brand of Olympic condoms. Clearly impressed, he buys a pack.

Upon getting home he announces to his wife the purchase he just made.

*“Olympic condoms? But you need another thing as you are becoming a little thin on top”, she blurts, “What makes these condoms so special?”
“There are three colors”, he replies, “Gold, Silver and Bronze.”
“What color are you going to wear tonight?”, she asks cheekily.*

<<http://jokideo.com/olympic-condoms/>>

60) A three-year old walks over to a pregnant lady while waiting with his mother in a doctor’s surgery.

“Why is your stomach so big?” – he asks.

“I’m in the family way” – she replies.

“Is the baby in your stomach?” – he asks, with his big eyes.

“Yes, it is.” – she says.

“Is it a good baby?” – he asks, with a puzzled look.

*“Oh, yes. **A really good baby.**” – the lady replies.*

Shocked and surprised, he asks: “Then why did you eat him.

<http://www.blossomtube.net/jokes/funny-baby-jokes/>

61) Two prostitutes talking over a cup of tea.

“I met my friend. He is always tired and emotional (drunk).

“What’s your day been like, Gloria?”

“Exhausting, but good business. I’ve climbed up and down those stairs more than 70 times today.”

“Oh, your poor feet!”

(Sharpe 2004:229)

Բերված «կենցաղային» անեկդոտներում կանանց խոսքում արձանագրված զեղչված նախադասությունները (*“Olympic condoms?”*, *“A really good baby”*, *“Exhausting, but good business”*) առանձնակի շարժունություն են հաղորդում խոսքին: Ձեղչված նախադասությունների կառուցվածքային թերատությունը նույնպես հեշտությամբ լրացվում է, քանի որ «չբավականացնող» տարրերը (ենթակա, ստորոգյալ) ենթակա են վերականգնման: Վերոբերյալ անեկդոտներում կանանց խոսքը աչքի է ընկնում *մեղմասության* ոճական հնարի կիրառության առատությամբ (*I’m in the family way (pregnant); You are becoming a little thin on top; He is always tired and emotional (drunk):* Նման հնարների կիրառությունը հնարավորություն է տալիս առավելագույնի հասցնել անեկդոտի բաղադրատարրերի հոգեբանական-հուզական ազդեցությունը թիրախային լսարանի վրա:

Քննարկենք ևս մի «կենցաղային» անեկդոտ:

62) Two men were sitting in a bar talking. “John, I’ve got a big favour to ask you. I’ve got to go away for a few days to the firm’s headquarters in Leeds and my wife will be here on her own. Although I try not to, I can’t help being suspicious that something is going on. Would you mind just keeping an eye on her while I’m gone?”

*His friend agrees and it's more than two weeks later that they meet up again, on his return. **"Anything to report, John?"** asks the suspicious husband.*

John replies hesitantly, "Well, I watched your wife every evening and on the third night, a man arrived in a sports car. They sat and had cocktails on your patio, then went skinny dipping in the pool before going inside and upstairs. They kissed passionately and he laid her down on the bed but then he closed the curtains so I didn't see any more."

"You see," says the husband sadly. "There's still no proof, only suspicions."

(Sharpe 2004:122-123)

Բերված օրինակում տղամարդը ուժեղ հույզի ազդեցությամբ չի կարողանում համապատասխան լեզվական միջոցներ գտնել իր հույզերի արտահայտման համար: Նման իրավիճակներում խոսքը հաճախ լինում է կցկտուր, սխեմատիկ, արտահայտվում են միայն գրուցակցին հետաքրքրող հիմնական պահերը (**"Anything to report, John?"**), իսկ զեղչված նախադասությունը ծառայում է խոսողի ապրումների հուզապատկերը ստեղծելուն:

Հույզը չի կարող լիովին արտահայտվել համարժեք բառով: Դա սուբյեկտը վերապրում է որպես հույժ անձնական, անկրկնելի ինչ-որ բան: Վերոնշյալ օրինակներում հաղորդակցային առումով աննշան տարրերի վերացումը հանգեցնում է նախադասության իրացվող բաղադրիչների ռեմատիզացմանը, որոնք խոսո-

դի (տվյալ դեպքում տղամարդու) համար հուզական գերակշռող հատկանիշներ են: Օրինակ՝

63) *Sitting over his pint of beer, the man looked very downcast.*

“What’s wrong?” asked the bartender.

*“I tell you what’s wrong” he said, “nobody appreciates me round here. Look what I did for the old people’s home, putting on that musical evening to raise money for their outing. But do they call me Fred the entertainer? No. Then look what I did with that piece of wasteland. **Changed it into a park for everyone to enjoy.** But did they call me Fred the landscape artist? Not bloody likely. Yet, he said, sadly taking another sip of beer, “**just one, just one bloody sheep...**”*
<[http://www.epubbud.com/read.php?g=J4DJV4G5](http://www.epubbud.com/read.php?g=J4DJV4G5&tcp=171)
&tcp=171>

64) *A local man walks into the pub knowing that the man behind the bar is short of money after spending all his wages on the horses.*

*“Hello Pete, **fancy a bet?**” says the man. “I bet you £100 that I can piss into this empty beer glass.”*

The bartender agrees, so the man drops his trousers and pisses everywhere – on the floor, the bar, the tables, even on the bartender

himself. The bartender smiles and demands his money.

*“OK, Pete, **won’t be a moment**,” says the man and he walks over to three men at the other end of the room and comes back with £300 in his hand.*

“Here you are, bartender”, and he hands over the £100.

“Just a moment,” says Pete, looking puzzled.

“What’s going on over there?”

The man smiles.

“Well, earlier today I made a bet with those three men that I could piss all over your pub and you’d still be smiling at the end of it.”

*<[http://huduku.us/jokes/display_joke.php?jcat=26
&jid=15&jtn=&logged_in_as=>](http://huduku.us/jokes/display_joke.php?jcat=26&jid=15&jtn=&logged_in_as=)*

Անգլիական «Կենցաղային» անեկդոտներում, ինչպես երևում է, զեղչված նախադասությունների հաճախակի կիրառումը տղամարդկանց խոսքում կարող է բացատրվել մի կողմից՝ խոսողի անվճռականությամբ կամ երկմտանքով, որը հանգեցնում է միտքը թերի, կցկտուր արտահայտելուն, մյուս կողմից՝ ուժերը հնարավորինս քիչ ծախսելու ձգտումով և, վերջապես, ինտենսիվ հույզի ազդեցությամբ: Ուստի, գտնվելով առանձնակի ուժեղ հույզի ազդեցության տակ, մարդը հաճախ զգում է, որ խոսքեր չի գտնում այն արտահայտելու և, անվանելով հույզի աղբյուրը, անձը, առարկան կամ այն ծնող իրավիճակը, այսինքն՝ քիչ թե շատ հասկանալի ձևակերպելով արտահայտու-

թյան թեման՝ նա չի փորձում ձևակերպել ասույթը, որի միակ բովանդակությունը պետք է դառնար հենց այդ հույզը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենահաճախադեպ հույզերը **զայրույթը, ուրախությունը և զարմանքն են**, որոնց արտահայտման ժամանակ խոսողը (հատկապես տղամարդիկ) դիմում է զեղչված կառույցների գործածությանը: Այսպիսով՝ անգլիական անեկդոտների մեր հետազոտության արդյունքների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ տղամարդկանց խոսքում մեծ քանակությամբ զեղչված կառույցներ են գործածվում, որն էլ վկայում է արական սեռի խոսքային վարքագծում հաճախ դրսևորվող հուզականության մասին:

Սակայն ուժգին հույզերը կարող են ոչ միայն նպաստել բառեր բաց թողնելուն, այլև խախտել բառերի շարահասությունը արտահայտություններում:

Ներկայումս հետազոտողներն ավելի ու ավելի հաճախ են հանգում այն հետևության, որ նախադասության մեջ բառերի շարահասության ձևավորման վճռորոշ խթան պետք է համարել հաղորդակցային-հուզական գործոնը², որում բառերի դասավորության շարժիչ ուժը ոչ թե նախադասության կառուցվածքն է, այլ բովանդակությունը:

Նախադասության մեջ թեմա-ռեմայի (ենթահիմք-ասույթ) դասավորությունը ուղղակիորեն կախված է շփման կոնկրետ իրավիճակից, խոսողի հուզավիճակից, հաղորդակցական մտադրությունից և այլ գործոններից, այսինքն՝ պայմանավորված է իրավիճակով: Բառերի դասավորությունը դիտարկվում է ոչ թե առանձին վերցրած նախադասությունում, այլ համատեքստում, այսինքն՝ հաղորդակցության գործընթացում, իսկ տեղաբաշխման ձևը էական նշանակություն ունի խոսքային արտահայտության հաղորդակցային ազդեցության համար:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում կանայք հաճախ են գործածում զանազան **փոխակերպումներ** (տե՛ս աղյուսակ 4): Սաստիկ հույզի ազդեցությամբ կանանց խոսքային վարքում տեղի է ունենում լեզվական ձևանմուշների խախտում: Օրինակ՝

65) *Having been three months up in the mountains searching for gold, the old miner suddenly struck it rich and went down into town to celebrate. He spent some time in the saloon before heading back up the main street to the local whorehouse, carrying two bottles of beer under his arm. “I’m looking for the meanest, toughest and downright roughest whore in town” he said to the Madam.*

“You’ll be wanting old Lil, then,” she replied.

“First on the right at the top of the stairs.”

So upstairs he went and banged on the door.

“Are you the meanest, toughest and downright roughest whore in town?” he yelled as he opened the door.

***“I sure am,” she said,** grinning, and with that she stripped off, bent over and grabbed her ankles.*

“Heh! How do you know that’s my favourite position?” he asked.

“I don’t,” she replied, “but I thought you might like to open those two beers first.”

(Sharpe 2004: 234-235)

66) *The big game hunter, out on safari, came across a naked woman stretched out on the ground.*

He said, "Excuse me, Miss, are you game?"

"I sure am," she said.

So he shot her.

(Sharpe 2004:271)

Նշյալ օրինակներում հետաքրքրություն է ներկայացնում կառուցվածքային հետևյալ ձևը՝ ***"I sure am"***, որտեղ նախադասության անդամների հաջորդականությունը չի համապատասխանում տվյալ հաղորդակցային տիպի բառաշարադասությամբ: Այսպիսով՝ տվյալ փոխակերպված կառույցը բնութագրվում է բուն արտահայտության ներսում տեղեկատվական նյութի տեղաշարժմամբ: Տղամարդիկ իրենց խոսքում հաճախ կիրառում են նպատակադրված շեշտեր, ընդգծելով այս կամ այն բառը, համեմատական, գերադրական աստիճանների կիրառմամբ կամ պարզապես կրկնելով միևնույն բառը՝ ***I'm looking for the meanest, toughest and downright roughest whore in town; Are you the meanest, toughest and downright roughest whore in town?:***

Հուզարտահայտչական խոսքում փոխակերպված նախադասություններին բնորոշ են կառուցվածքային սահմանափակումներ և հատուկ հնչերանգային ձևավորում: Ըստ էության, ուժգին հուզավիճակի ազդեցությամբ հաղորդակցվողը առաջին հերթին արտահայտում է ամենակարևոր և հրատապ տեղեկատվությունը (մեծ մասամբ նոր): Կախված բառերի տարբեր դասավորությունից նախադասության իմաստը և դրա հաղորդակ-

ցային նշանակությունը հաճախ տարբերվում են: Օրինակ՝ շրջադասությունը արտահայտում է խոսողի հուզական վերաբերմունքը զրուցակցին, ինքն իրեն կամ առարկային:

Մեր աշխատանքի հաջորդ փուլում նպատակահարմար ենք գտնում գենդերային տեսանկյունից քննել **անավարտ նախադասությունները** անգլիական երգիծական խոսույթում, որոնք վկայում են խոսելու պահին խոսողին համակած ուժեղ հուզապրումների մասին: Որքան ուժեղ է հույզը, որքան ավելի հուզված է խոսողը, ակներևաբար, այնքան գերզգայական կլինի անհատի խոսքը: Շփումը գրեթե միշտ անմիջական է ու հանպատրաստի. այն թույլ է տալիս խոսողներին բավարարվել անավարտ նախադասություններով: Սովորաբար արդյունքը բացասական երանգավորում է ունենում: Բառի բաց թողումը կարող է հաճախ թյուրըմբռնում առաջացնել: Ջեղչված բառով արտահայտությունը հասկանալի է միայն այն դեպքում, երբ այն մատուցվում է համատեքստում կամ ուղեկցվում է ցուցադրական ժեստով: Անավարտ նախադասությունները պայմանավորված են կոնկրետ խոսքային իրավիճակով: Օրինակ՝

67) Mrs Brown: Don't you think that man over there is the ugliest person you've ever seen?

Mrs Parr: That's my husband.

Mrs Brown: Oh dear, I'm so sorry.

*Mrs Parr: **You're sorry**!*

<http://www.guy-sports.com/funny/funny_husband_jokes.htm>

68) A little girl came home from school and said to her mother, “Mommy, today in school I was punished for something that I didn’t do.”

The mother exclaimed, “But that’s terrible! **I’m going to have a talk with your teacher about this ... by the way, what was it that you didn’t do?**” The little girl replied, “My homework.”

<http://www.learnenglishbest.com/innocent-girl.html>

69) A bloke walked into the pub and was astounded at the sight of the barman. He was built like a brick shithouse with muscles bulging out all over, tattoos everywhere, unshaven and sweaty. After a moment or two the barman became aware of the looks he was getting and said, “What the bloody hell are you looking at?”

“Sorry, mate, it’s just that you look just like someone I know.

You’re almost identical...if it wasn’t for the moustache...”

“But I haven’t got a moustache,” said the barman.

“No, but my wife has.”

(Sharpe 2004:343)

Խոսքում առկախ նախադասությունների վերոբերյալ օրինակները (**“You’re sorry!”; “I’m going to have a talk with your teacher about this ... by the way, what was it that you**

didn't do?"; "You're almost identical...if it wasn't for the moustache...) ցույց են տալիս, որ խոսողի միտքը դեռևս պատրաստ չէ, չի հասունացել, հետևաբար, չի կարողացել ստանալ համապատասխան խոսքային տեսք: Դա առավել հաճախ տեղի է ունենում այն պատճառով, որ խոսողը տվյալ պահին համակված է ինչ-որ ուժեղ հույզով, և այդ հուզավիճակը խանգարում է նրան ուշադրությունը կենտրոնացնելու բանավոր խոսքի ձևակերպման վրա: Օրինակ՝

70) The event made headline news in the local paper.

"Man of 80 marries girl of 21."

The man was in such great demand that it was arranged for him to hold a press conference when they returned from their honeymoon.

"How often do you have sex?" shouted out one of the journalists.

"Nearly every night," replied the man.

"Nearly on Monday, nearly on Tuesday, nearly on Wednesday..."

(Sharpe 2004:130)

71) A man comes home after a terrible round of golf, his worst ever. He plops down on the couch in front of the television, and tells his wife, "Get me a beer before it starts." The wife sighs and gets him a beer. Fifteen minutes later, he says, "Get me another beer before it starts." She looks cross, but fetches another beer and slams it

down next to him. He finishes that beer and a few minutes later says, “Quick, get me another beer, it’s going to start any minute.”

*The wife is furious. She yells at him “You’ve been out golfing all day! Is that all you’re going to do tonight? Drink beer and sit in front of that TV? **You’re nothing but a lazy, drunken, fat slob, and furthermore . . .**”*

The man sighs and says, “It’s started .. .”

<<http://www.golfun.net/joke 44.htm>>

Օրինակները ցույց են տալիս, որ հույզը թուլացնում է ուշադրությունը սեփական խոսքի նկատմամբ, և արտահայտության քերականական ձևակերպման նկատմամբ վերահսկողությունը դառնում է ոչ այնքան խիստ (***Nearly on Monday, nearly on Tuesday, nearly on Wednesday...; You’re nothing but a lazy, drunken, fat slob, and furthermore . . .***): Անեկդոտների վերլուծությունը ցույց է տվել նաև, որ տղամարդկանց ավելի բնորոշ է մեծ թվով ***հրամայական նախադասությունների կիրառությունը***, ինչպես երևում է վերջին անեկդոտի օրինակում (***Get me a beer before it starts; Get me another beer before it starts; Quick, get me another beer, it’s going to start any minute***):

Մեր կողմից վերլուծված անեկդոտներում անավարտ նախադասությունների գործածությունը կանանց խոսքում քանակապես գերազանցում է տղամարդկանց խոսքում եղածներին (*տե՛ս աղյուսակ 4*):

Կանանց և տղամարդկանց խոսքում տարատեսակ բառազեղումների, թերասույթների, բացթողումների, կիսատ նախադասությունների պատճառ կարող են լինել և՛ անփույթ վերաբեր-

մունքը լեզվի նկատմամբ, և՛ շտապողականությունը, խոսողի ավելորդ հուզականությունը, երբ նա չի գտնում անհրաժեշտ բաներ՝ միտքը ճշգրիտ ձևակերպելու համար:

Այժմ քննարկենք անգլիական երգիծական խոսույթում **կրկնություններին** վերաբերող գենդերային տարբերությունների հարցը: Խոսքում հույզերի արտահայտման միջոցներից մեկը կրկնությունն է³: Հուզարտահայտչական այս որոշարկիչը կարելի է դիտարկել որպես բառերի դասավորության որոշակի կարգատեսակ: Կրկնության օգնությամբ մեծանում է հուզական արտահայտչականության աստիճանը, և խոսքում իրենց արտահայտությունն են գտնում բազմաթիվ հուզավիճակներ:

Երգիծական խոսույթի նշյալ տարատեսակում տղամարդիկ օգտագործում են կրկնությունը որպես դադար՝ երկխոսության հաջորդ դրվագը մտածելու համար: Օրինակ՝

72) A man was walking along a California beach and stumbled upon an old lamp. He picked it up and rubbed it and out popped a genie. The genie said “OK. OK. You released me from the lamp, blah, blah, blah. This is the 4th time this month and I’m getting a little sick of these wishes so you can forget about three. You only get one wish! The man sat and thought about it for a while and said, “I’ve always wanted to go to Hawaii, but I’m scared to fly and I get very seasick. Could you build me a bridge to Hawaii so I can drive over there to visit?” The genie laughed and said, “That’s impossible! Think of the logistics of that! How would the supports ever reach the bottom of

*the Pacific? Think of how much concrete . . how much steel!! No, think of another wish!" The man said OK and tried to think of a really good wish. Finally, he said, "I've been married and divorced four times. My wives always said that I don't care and that I'm insensitive. So, I wish that I could understand women . . . **know how they feel inside** and what they're thinking when they give me the silent treatment . . .**know why they're crying, know what they really want when they say, "nothing'** . . . **know how to make them truly happy** ..." The genie said, "You want that bridge with two lanes or four?"*

<<http://lingualeo.com/ru/jungle/14593>>

73) The man was approached by the most beautiful sales girl he had ever seen.

*"Can I help you, Sir," she said. "**What would you like?**"*

*"**What would I like...?**" he mused. "**I would like** to take you away from all this. We would go to the most elegant restaurant in town, linger over the port and then head back to my place for soft lights, sweet music and mad passionate love."*

*He sighed, "That's **what I'd like**, but what I need is a new shirt."*

<<http://hotjokes.net/what-would-you-like/>>

Վերոբերյալ օրինակում, զգալով բառի անհամարժեքությունը անհատական զգացմունքին, խոսողը որակը փորձում է լրաց-

նել քանակով (*know how..., know why..., know what..., know how..., I would like..., what would I like?; What would you like?*): Տղամարդկանց խոսքում **շարահյուսական զուգահեռության կիրառությունը** հետաքրքիր է այն առումով, որ հասցեագրողին հաջողվում է նախ՝ կարևորություն հաղորդել իր խոսքին՝ դրանով իսկ առավելագույնս դյուրացնելով դրա ընկալումը հասցեատիրոջ կողմից, երկրորդ՝ փոքր-ինչ այլ ձևով կատարել շեշտադրումները կառույցի յուրաքանչյուր հատվածում:

Կրկնությունը, պարունակելով հուզականության մեծ լիցք, տղամարդկանց խոսքում կարող է արտահայտել բազմազան հույզեր՝ **վախ, անհանգստություն, տագնապ, զարմանք**: Օրինակ՝

74) A woman went to the doctor's complaining of a total lack of energy. After being examined, he told her she was on the edge of a nervous breakdown and should give up cigarettes, gin and sex for 3 months. But after a week, the woman returned saying she was even closer to a breakdown if she couldn't smoke."

"OK, have 5 cigarettes a day. It's never too soon, It's never too late."

Another week went by and she returned saying she missed her glass of gin so much, it helped to relax her.

"OK, just one glass a day," said the doctor.

Two weeks later she returned again and before she could say anything, the doctor quickly interrupted.

“OK, OK, but only with your husband – there must be no excitement.” (վախ)

(Sharpe 2004:128)

75) A man rushes out of his wife’s hospital room.

*“**Doctor, doctor** – my wife’s been in a coma for several months, but when I just touched her left breast, she sighed!.”*

“That’s very encouraging,” says the doctor. “Go back and touch her right breast. See if she reacts.”

A few minutes later, the man rushes out again:

“Doctor, she moaned!”

“Very good,” says the doctor. “Now try oral sex. She should certainly react to that!”

Five minutes later, the man comes out back out, white as a sheet. “Doctor – she died.”

“No! What happened?” the doctor exclaims.

“Well, doc,” the man says tearfully, “she choked. Love is an ideal thing, marriage a real thing.” (անհանգստություն)

<[http://laughter-fun-](http://laughter-fun-humor.blogspot.com/2013/06/coma-arousal.html)

humor.blogspot.com/2013/06/coma-

arousal.html>

Բերված անեկդոտներում կրկնությունները կապված են ուղեղի մտավոր գործունեության խախտումների և դրանից ծագող բարդությունների հետ՝ ընտրելու խոսքի հաջորդող բաղադրիչները: Կրկնությունները (**OK, OK; Doctor, doctor; Nothing, nothing**) վերոբերյալ անեկդոտներում հնարավորություն են

ընձեռում խոսողին հավաքելու մտքերը, մասամբ լրացնելու անվճռականության դադարները: Վերոբերյալ անեկդոտներում տղամարդկանց խոսքում օգտագործվում են **հակադրություններ** (*Love is an ideal thing, marriage a real thing; It's never too soon, It's never too late*)՝ նկարագրվող իրադարձության հակադիր բնութագիրը ստեղծելու նպատակով: Այդ հնարի բառային հիմքը կազմում են հականիշները, իսկ շարահյուսական հիմքը՝ զուգահիռ կառույցները: Տղամարդկանց խոսքում հակադրությունը լայնորեն կիրառվում է հուզական-հոգեբանական ներգործությունը ուժեղացնելու նպատակով:

Դիտարկենք անեկդոտներ, որոնցում կրկնությունը կիրառվում է այնպիսի իրավիճակներում, երբ խոսողը գիտակցաբար կամ անգիտակցաբար կրկնում է այն տարրերը, որոնք իր համար հուզական առումով գերիշխող են: Օրինակ՝

76) A man goes to the surgery feeling sick, but the doctor is unable to diagnose what's wrong with him, so he takes some blood tests and tells him to return the following week.

However, he's too ill to leave the house so his wife goes along to get the results.

“Oh dear, oh dear,” says the doctor, shaking his head, “it seems I have two patients by the name of Jack Brown, they’ve both had blood tests this week and the tests have been muddled up. It means your husband either has VD or Alzheimer’s disease.”

The poor wife is very distressed.

“What shall I do?” she asks.

“Don’t worry, it’s quite simple,” replies the doctor.

“Take your husband on a long journey, go by bus and train, then leave him there and see if he can find his way home. If he does get home alright, then don’t let him fuck you.” (անհանգստություն)

<http://huduku.us/jokes/display_joke.php?jcat=1&jid=392&logged_in_as=_>

77) “Doctor, doctor, I’m so worried,” said the anxious man.

“Both my wife and I have black hair, but our son’s just been born with red hair. Do you think something funny has been going on?”

“Not necessarily,” replied the doctor. “How many times do you have sex?”

“About 5 times a year.”

“Well, there’s your answer then, you’re just a little rusty.” (անհանգստություն)

(Sharpe 2004:10)

Տղամարդկանց խոսքում կրկնություններ ծնող պատճառներից է նաև օգնության խնդրանքով դիմելու ցանկությունը: Օրինակ՝

78) A man was working on the sewage farm when he suddenly lost his footing and slipped in.

“Help, fire, fire, fire!” he yelled.

*In no time at all the fire engine responded.
“Where’s the fire then?” asked the chief fire officer.
“There isn’t one” replied the worker. “But if I’d shouted **“shit, shit, shit,”** no one would have rescued me.”*

(Sharpe 2004:158)

Տղամարդկանց խոսքում կրկնությունն օգտագործվում է նաև համաձայնություն հայտնելու, խոսողի կարծիքով որևէ կարևոր միտք կամ խոսքի մի հատված առանձնացնելու, շեշտելու և զրուցակցի ուշադրությունը գրավելու ձգտումը: Ինչպես նաև կարող են լինել կանխամտածված և ակամա կրկնություններ: Օրինակ՝

79) The beautiful secretary of the president of a bank goes on a sight-seeing tour with a very rich African king who was a very important client. The client out of the blue asks her to marry him. Naturally, the secretary is quite taken aback. However, she remembers what her boss told her, ...don’t reject the guy outright. So, she tries to think of a way to dissuade the businessman from wanting to marry her. So, after a few minutes, the woman says to the man, “I will only marry you under three conditions. First, I want my engagement ring to be a 75-carat diamond ring with a matching 200-carat diamond tiara.” The African king pauses for awhile. Then, he nods his

head and says, “No problem!! **I have. I have.**” Realizing her first condition was too easy the woman says to the man, “I want you to build me a 100-room mansion in New York. As a vacation home, I want a chateau built in the middle of the best wine country in France.” The African king pauses for awhile. He whips out his cellular phone and calls some brokers in New York and in France. He looks at the woman, nods his head and says, “**Okay, okay. I build. I build.**” Realizing that she only has one last condition, the secretary knows that she’d better make this a good one. She takes her time to think and finally she gets an idea. A sure-to-work condition. She squints her eyes, looks at the man and says, rather coldly, “Since I like sex, I want the man I marry to have a 14-inch penis.” The man seems a bit disturbed. He cups his face with his hands and rests his elbows on the table, all the while muttering in African dialect. Finally, after what seemed like forever, the king shakes his head, looking really sad, and says to the woman, “**Okay, okay. I cut.**”

I cut.” (համաձայնություն)

<<http://www.native-english.ru/anecdotes/1000>>

Վերը նշված օրինակում կրկնությունը հուզականության ուժգին արտահայտման շարահյուսական ձև է: Այսօրինակ նախադասություններում (**“I have. I have”**; **“Okay, okay”**; **“I build. I**

build”), որպես կանոն, առաջին պլան է մղվում տեղեկատվության հուզական կողմը, այսինքն՝ առաջին հերթին դրանցում արտահայտվում են խոսողի հուզվածությունը, նրա հուզական վերաբերմունքը և առարկաներին տված գնահատականը:

Նկատվում է նաև, որ բառերը և դրանց կրկնությունները, տղամարդկանց և կանանց կողմից օգտագործվում են համապատասխան մթնոլորտ ստեղծելու և ցանկալի ազդեցության հասնելու համար: Կանանց խոսքում մշտապես հնչում է ատելության (**hatred**) թեման: **“Hate”** բառը շարունակ կրկնվելով տարբեր ոճական հնարների միջոցով (հատկապես համեմատություններում, օրինակ՝ **hate like poison; hate is like a great grief; hate is like a death; hate is like a fire, hate is like a snake**)՝ բացահայտում է կանանց և տղամարդկանց հարաբերությունները՝ որպես չընդհատվող պայքար, որտեղ սերը հաճախ վերածվում է ատելության: Նման համեմատությունների օգնությամբ փոխանցվում են խոսողի ծանր վիճակը և նրա փոթորկվող զգացմունքները: Շնորհիվ համեմատությունների օգտագործման՝ տղամարդիկ և կանայք հաղորդում են սիրո և ատելության փոփոխական բնույթը, որը մարդկանց հարաբերությունների էությունն է: Հուզական երանգավորմամբ կրկնությունները բազմաբնույթ են. դրանք կանանց խոսքում կարող են արտահայտել ինչպես դրական, այնպես էլ բացասական հույզեր՝ անհանգստություն, ուրախություն: Օրինակ՝

80) A young boy walked into a bar and asked for a bottle of beer and 20 fags.

“Now, now,” smiled the barmaid, wagging her finger. “Do you want to get me into trouble?”

He replied, “Not at the moment, I just want my beer and fags.” (ուրախություն)

<<http://jokeforadult.blogspot.com/>>

81) Two women talking over the garden wall. The first said “It’s no good Julie, I’m at my wits end. I can’t stand the sight of George any longer. He treats me like shit, he’s never at home, he just uses the place as an hotel and I know he’s shagging everyone in sight. It’s had a terrible effect upon me, I’ve already lost stone in weight.

“Leave him Sylvia, leave him today and take him for everything you can,” replied her outraged friend.

“Oh I will, I will, but first I’ve just got to lose another half stone.” (անհանգստություն)

<<http://hotjokes.net/terrible-effect/>>

Վերոբերյալ օրինակներում գործ ունենք կանանց գերզգայական խոսքի հետ, որտեղ կրկնությունները (**“Now, now”**; **“Leave him Sylvia, leave him”**; **“Oh I will, I will”**), արտահայտելով մի ամբողջ շարք հույզեր, վկայում են խոսողի հուզավիճակի մասին և օգնում են կերպարի ենթագիտակցության մեջ բացահայտել նրբագույն, հաճախ չգիտակցված հուզավիճակներ:

Տղամարդկանց խոսքում կրկնության գործածությունը քանակապես գերազանցում է կանանց խոսքում օգտագործվածների թիվը (*տե՛ս աղյուսակ 4*), որը, մեր կարծիքով, կարող է բացատրվել հույզերի հոսքի լարվածությամբ և սեփական խոս-

քային միջոցների անվերահսկելիությամբ: Վերը նշված վերջին անեկդոտում կիրառվում է համեմատության ոճական հնարը (***He treats me like shit***)՝ իրադարձության մասնակցին պատկերավոր նկարագրելու համար: Համեմատությունը՝ որպես ոճական հնար, բավականին գործուն միջոց է՝ անգլիական երգիծական խոսույթում զանազան հույզեր արտահայտելու համար: Այդ ոճական հնարի առանձնահատկությունը անսպասելիության ու ինքնատիպության էֆեկտն է, որին խոսողը հասնում է առաջին հայացքից ընդհանուր ոչինչ չունեցող առարկաների համեմատության շնորհիվ: Անգլիական երգիծական խոսույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ոճական հնարը առավել հաճախ հանդիպում է կանանց խոսքում: Ընդ որում, տղամարդկանց խոսքում համեմատությունները օգտագործվում են ***as, as if*** շաղկապներով, իսկ կանանց խոսքում՝ ***like*** շաղկապով: ***Like*** շաղկապով համեմատությունը կարելի է բնութագրել որպես ձևով կամ հատկանիշով և իմաստով նման երևույթների անմիջական հակադրություն: ***Like*** շաղկապով կառուցվող համեմատությունների փոխարեն ***as, as...as, as if, as though, remind of, give appearance of*** և այլ համեմատական կառույցների գործածությունը մատնանշում է այն փաստը, որ համեմատվող կողմերի միջև կա միայն արտաքին որոշ նմանություն: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ նրանք պահպանում են առարկայական իմաստը, որն էլ նմանության աստիճանը թուլացնում է: Նշված համեմատական կառույցները բոլորովին այլ շարահյուսական դեր ունեն՝ ի տարբերություն ***like*** շաղկապով կազմվող նախադասությունների: Օրինակ՝ ***as if*** կառույցը սովորաբար գործածվում է գոյ.+բայ կառույցից առաջ՝ խոսքին որոշակի երանգ հաղորդելու համար: Շատ հաճախ ***as though*** կառույցը կարող է գործածվել ***as if*** կառույցի փոխարեն: Մեր կատարած վերլուծության հիման

վրա կարելի է հաստատել, որ **like** շաղկապով համեմատությունները առավել հաճախ են հանդիպում անգլիական երգիծական խոսույթում:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում խոսողի հուզավիճակի ձևավորման մեջ առանձնահատուկ տեղ ունեն նաև **բացականչական նախադասությունները**:

Ցանկացած բացականչական նախադասություն ունի առնվազն երկու փոխկապակցված խնդիր. մի կողմից՝ տեղեկություն փոխանցելը, տեղեկատվություն հայցելը, գործողության դրդելը, մյուս կողմից՝ խոսողի հուզավիճակն արտահայտելը: Բացականչական հնչերանգը հնարավորություն է տալիս արտահայտելու ոչ միայն խոսքի ընդհանուր հուզական երանգավորումը, այլև անձնական վերաբերմունքի բոլոր նրբերանգներն ու մանրամասները: Օրինակ՝

82) A couple attended marriage counseling to resolve communication problems. The fighting and bickering during the session was so bad that the counselor called for a time out and told them he was ending the session early but had an assignment for the husband.

“John,” the marriage counselor said, “you’re an athletic guy... here’s what I want you to do. I want you to jog 10 miles everyday for the next 30 days. At the end of the 30 days call me and let me know how things are going.”

John agreed.

At the end of the 30 days, John called the marriage counselor very excited. “I did just as

you said and I have never felt better in my life!” he exclaimed over the phone.

“Great!” replied the counselor, “ And how’s your wife?”

John paused and then replied with agitated dismay, “How should I know, I’m 300 miles from home!”

<<http://www.ajokeaday.com/BuscarChiste.asp?palabra=exclaimed>>

83) A man buys a lie detector robot that slaps people who lie. He decides to test it at dinner. He asks his son, “Son, where were you today during school hours?” “At school.” The robot slaps the son. “Okay, I went to the movies!” The father asks, “Which one?” “Harry Potter.” The robot slaps the son again. “Okay, I was watching porn!” The father replies, “What? When I was your age I didn’t even know what porn was!” The robot slaps the father. The mom chimes in, “Haha! After all, he is your son!” The robot slaps the mother...

<<http://www.laughfactory.com/jokes/family-jokes/2>>

Վերոբերյալ բացականչական նախադասությունների օրինակներում (*“I did just as you said and I have never felt better in my life!”; “Great!”; “How should I know, I’m 300 miles from home!”; “Okay, I went to the movies!”; “When I was your age I*

didn't even know what porn was!"; *"Haha! After all, he is your son!"*) արտահայտվում է խոսողի հուզական վերաբերմունքը: Հուզարտահայտչական տարրեր պարունակող նախադասությունների ընդհանուր հատկանիշը հատուկ հնչերանգն է, որը բազմակողմանի խոսքածն է և երանգավորում է հուզական խոսքը՝ թույլ տալով տարբերել այն ոչ հուզական խոսքից: Բացականչական հնչերանգը հնարավորություն է ընձեռում արտահայտելու ոչ միայն խոսքի ընդհանուր հուզական գունապնակը, այլև անձնական վերաբերմունքի բոլոր երանգները: Գրավոր խոսքում այն արտահայտվում է բացականչական նշանով: Քանի որ մեր հետազոտությունն իրականացրել ենք գրավոր անեկդոտների հիման վրա, բացականչական նշանը ծառայել է որպես նախադասության հուզարտահայտչականության գլխավոր ցուցիչ:

Հարկ է նշել, որ կանայք, գնահատելով առարկան, նախընտրում են օգտագործել *what/such* դերանուններով բացականչական արտահայտություններ, քանի որ այդպիսի կառույցներն առավել արտահայտիչ են առարկայական տիպի այլևայլ գնահատողական կառույցների շարքում: Նման գնահատականներում հատկանիշը, որպես կանոն, ուղղված է դեպի գնահատման սանդղակի դրական բևեռը, քանի որ նմանօրինակ կառույցներն ավելի շուտ ենթադրում են խոսողի դրական հույզերը: Տղամարդկանց և կանանց խոսքում *how* բառով կառույցների գործառության հետազոտությունը ցույց է տալիս, որ նման կառույցների գերակշիռ մասը իր ուրույն տեղն է գտնում կանանց երկխոսություններում: Կանանց խոսքին ավելի շատ են բնորոշ այնպիսի բացականչական արտահայտություններ, ինչպիսին են՝ *How wonderful; How beautiful; How funny; What a shame:*

Հայտնի է, որ կնոջ հագեթանությունը տարբերվում է տղամարդու հոգեթանությունից, ուստի պատահական չէ, որ նրանց

խոսքը ունի իր առանձնահատկությունը: Կինն առանձնանում է աշխարհի հանդեպ ունեցած իր հոգեբանական հայացքի ինքնատիպությամբ: Կանանց խոսքը տարբերվում է տղամարդու խոսքից միայն կանացի խառնվածքին բնորոշ զգացմունքայնությամբ, առանձնահատուկ ընկալունակությամբ: Օրինակ՝

84) On their first evening in their new home the bride went in to the kitchen to fix drinks. Five minutes later she came back into the living room in tears.

“What’s the matter, my angel?” asked her husband anxiously.

“Oh, Steven! She sobbed, “I put the ice cubes in hot water to wash them and now they’ve disappeared!” (տխրություն)

<<http://www.ajokeaday.com/Clasificacion.asp?ID=48&Pagina=24>>

*85) A man kills a deer and takes it home to cook for dinner. Both he and his wife decide that they won’t tell the kids what kind of meat it is, but will give them a clue and let them guess. The dad said, “Well it’s what Mommy calls me sometimes.” The little girl screamed to her brother, **“Don’t eat it. It’s an asshole!” (վախ)***

<<http://jokes4us.com/animaljokes/deerjokes.html>>

Վերը նշված բացականչական նախադասությունների օրինակներից (**“Oh, Steven!”**, **“I put the ice cubes in hot water to wash them and now they’ve disappeared!”**; **“Don’t eat it. It’s an**

asshole!”) կարելի է հասկանալ, որ հաղորդակցային տիպի ցանկացած նախադասության բացականչական տարբերակը կարող է արտահայտել զանազան հույզեր: Խոսողի զանազան հույզերը (**ուրախություն, զարմանք, զայրույթ, վրդովմունք, տխրություն և այլն**) արտահայտող բացականչական արտահայտություններ արձանագրվել են հատկապես կանանց խոսքում (*տե՛ս աղյուսակ 4*):

Անգլիական երգիծական խոսույթում կանայք և տղամարդիկ իրենց զայրույթը արտահայտում են հետևյալ բացականչական նախադասություններով՝ ***It's awful! (Կ); It's terrible (Կ); It's dreadful (Տ); It's horrible (Տ); It's monstrous (Տ); It's absurd (Տ); It's too awful for words (Կ); What a cheek (Տ); Such a Nosy Parker (Կ); There you go again (Տ); I like that (Տ); You are a limit (Կ); It's the last straw (Կ)*** և այլն):

Անգլիական երգիծական խոսույթում կանայք ավելի շատ են օգտագործում ***հարցական նախադասություններ*** (*տե՛ս աղյուսակ 4*): Նրանք հարցեր են տալիս, քաջալերում են զրուցակցին և խրախուսում են զրույցը հակիրճ պատասխաններով: Տղամարդիկ, ընդհակառակը, հաճախ են ընդհատում զրուցակցին, հակված են չհամաձայնելու խոսընկերոջ հետ, անտեսելու զրուցակիցների խոսքերը, ավելի խիստ են վերահսկում զրույցի թեման, հակված են ուղղակիորեն արտահայտելու իրենց կարծիքը: Կանայք խուսափում են զրույցի ընթացքում խոսքային մակարդակում բաց մրցակցությունից (որպես կանոն՝ նրանց մրցակցությունն ավելի քողարկված է), սպասում են քաջալերման կամ հավանության նշանների, քանի որ իրենք էլ են հետաքրքրության և ուշադրության նշաններ ցույց տալիս: Հարցերը, որպես կանոն, կանայք տալիս են զրույցը շարունակելու նպատակով: Զրուցակ-

ցի կարծիքի հետ անհամաձայնությունը կինը ավելի հաճախ արտահայտում է լռությամբ, այլ ոչ թե բացահայտ բարձրաձայն բողբոջում:

Անգլիական երգիծական խոսույթում կինը անհամեմատ ավելի շատ է դառնում երկխոսության նախաձեռնող, քան տղամարդը: Որպես կանոն՝ կանայք երկխոսությունը սկսում են ներածական բնույթի արտահայտություններով, որոնց նպատակը ոչ թե իրենց մտադրությունն ուղղակիորեն հայտնելն է, այլ զրուցակցի հետ հուզական շփում հաստատելը: Կանանց առաջին ռեպլիկը մեծ մասամբ հարց է պարունակում: Օրինակ՝

*86) Hillary Clinton goes to her doctor for a physical, only to find out that she's pregnant! She is furious. Here just became the senator of New York and this has happened to her. She gets Bill on the phone and immediately starts screaming: **"How could you have let this happen? Why have you done it?"***

*With all that's going on right now, you go and get me pregnant! **How could you??!!** I can't believe this! I just found out I am five weeks pregnant and it is all your fault!!! Your fault!!! Well, **what have you got to say???**"*

*There is nothing but dead silence on the phone. She screams again, **"Did you hear me??!!"** Finally she hears Bill's very, very quiet voice. In a barely audible whisper, he says, "Who is this?"*

Վերոբերյալ անեկդոտի օրինակում կնոջ հարցական հնչերանգը (**“How could you have let this happen?”; “Why have you done it?”; “How could you??!!?”; “What have you got to say???”; “Did you hear me??!!?”**) ստիպում է տղամարդուն պատասխանել՝ դրանով իսկ դուրս հանելով նրան ներքին երկխոսության վիճակից: Երկխոսություն սկսելով՝ կինն անմիջապես ի ցույց է դնում ստեղծված իրավիճակում ուղենիշներ գտնելու անհրաժեշտությունը: Կանայք իրենց խոսքի զարգացած լինելու շնորհիվ չեն ընդունում լեզվական տարրական լուծումներ և նախընտրում են փնտրել ասվածի գաղտնի ենթատեքստը, անգամ եթե այն գոյություն չունի: Երկխոսության ժամանակ կինը հետապնդում է երկու նպատակ՝ ստեղծել նախադրյալներ կոնկրետ գործնական արդյունքի հասնելու համար և կառուցել հուզական հաղորդակցման մեխանիզմ: Կանայք սկսում են խոսակցությունը ոչ թե անմիջապես գլխավորից, այլ մանր, աննշան մանրամասներից: Անգլիական երգիծական խոսույթում կանայք ավելի հաճախ դիմում են անուղղակի խնդրանքներով և, որպես կանոն, խուսափում են հրամայական նախադասություններ օգտագործել իրենց խոսքում: Նրանք հակված են ավելի մեղմ ձևերի կիրառությանը (**What about...; Let's...; I'd like...; Why don't we...; I'd prefer...; I'd rather...; Would you mind...?; Shall we... և այլն**): Իսկ տղամարդիկ իրենց խոսքում դիմում են սպառնալիքի և նախատինքի (**If you dare...; If I catch you...; Did you hear me...; I'll give it hot to you; I won't have it... և այլն**): Կանայք նաև ավելի հաճախ են ներդրություն խնդրում և ավստոսանք հայցում, նույնիսկ այնտեղ,

երբ դրա կարիքը բոլորովին չկա (*I am sorry indeed; I am really sorry; So sorry; I beg your pardon; Forgive me; Do forgive me; Give my excuses to....please; I'm afraid...; Excuse me; Sorry to interrupt (intrude, interfere), but could you ...; It's a pity; I must apologize to...* և այլն): Անգլիական երգիծական խոսույթում կանանց բնորոշ է խնդրանքի զանազան ձևերի արտահայտում (*Be so kind as to....; Be good enough to....; I should be much obliged...; Please don't...; Will (Would) you please...; Would you mind not...* և այլն): Կանանց խոսքին բնորոշ է նաև ուշադրություն գրավելու նպատակով **Yes, Well** բառերի կիրառությունը (հնարավոր է դրանք կրկնվեն նախադասության մեջ), քանի որ լինելով ուշադրություն հրավիրող պարզագույն նշաններ՝ դրանք խթանում են զրույցը: Կինը ավելի շատ է զուգակցում իր պահանջները քաղաքավարության տարբեր ձևերի կիրառությամբ: Մինչդեռ տղամարդու համար խոսակցության գլխավոր նպատակը տեղեկատվականն է, նրա համար կարևոր է, թե ինչ և ինչի մասին է ասվում, այլ ոչ թե ինչպես է ասվում, այսինքն՝ նրա համար կարևոր է զրույցի գործնական նպատակը: Տղամարդկանց խոսքն ավելի հակիրճ է, քան կանանցը, քանի որ տղամարդն ավելի կտրուկ է դատողություններում: Կանայք սիրում են նույն հարցը կրկնել և քիչ են ընդհատում զրուցակցին. նրանք հաճախ անավարտ են թողնում իրենց հարցը կամ խոսքը: Կնոջ պատմածում հիմնականը ոչ այնքան իրադարձության արտաքին, օբյեկտիվ ուրվապատկերն է, որքան իր ապրումների, հույզերի բացահայտումը: Այսինքն՝ ամբողջ խոսքը կառուցվում է այնպես, որ կինը ձգտում է ներգրավել զրուցակցին (տղամարդուն) իր հուզապրումների աշխարհ:

Անգլիական երգիծական խոսույթում տղամարդիկ հակված են մենախոսական շփման. ա) տղամարդկանց խոսքում նկատելի են մենախոսություններ սոցիալական թեմաներով, բ) գործնական-պաշտոնական շփման իրավիճակում տղամարդկանց խոսքը հակիրճ է, գ) տղամարդկանց համար մենախոսության հակիրճությունը տեղեկատվությունը գնահատելու չափանիշ է: Տղամարդկանց երկխոսությունը ևս հակիրճ է, քանի որ նրանք, որպես կանոն, զրույցի ընթացքում օգտագործում են ձևով կարճ և իմաստով տարողունակ կառույցներ: Նրանք ձգտում են արտահայտման ձևի կառուցվածքի պարզեցմանը: Նույնիսկ այն դեպքում, երբ ավելի լավ է գործածել ընդարձակ նախադասություն, տղամարդիկ այն բաժանում են մի քանի մասի: Իսկ կանանց խոսքում առկա են մեծ թվով միջանկյալ բառեր, որոշիչներ, պարագաներ, դերանվանական ենթականեր և լրացումներ: Կանանց խոսքը նաև աչքի է ընկնում բարդ նախադասությունների հաճախակի օգտագործմամբ, հարցական և բացականչական, կետադրական նշանների օգտագործման մեծ հաճախականությամբ: Կանանց հուզականությունը արտահայտվում է առաջին հերթին տեքստի շարահյուսական մակարդակում՝ նախադասության համասեռ անդամների, միակազմ անվանական նախադասությունների օգտագործմամբ, բարդ շաղկապներով կամ անշաղկապ նախադասությունների գերակշռությամբ: Կանանց խոսքի մյուս առանձնահատկությունը ընդհատ-ընդհատ շարադրանքն է և կարճ բառակապակցությունների օգտագործումը: Այդ բոլոր միջոցները կոչված են արտահայտելու կնոջ ակեկոծված, հաճախ ծայրաստիճան զգայական և հուզական վիճակը, խոսքի և գործողությունների սրընթաց հոսքը, նրա՝ իր պատմածի մեջ ինչ-որ կարևոր բան բաց թողնելու մտավախությունը:

Տղամարդկանց խոսքը ավելի գրքային է, քան կանանց խոսքը, ավելի բարդ է շարահյուսորեն և ավելի հագեցած մտավոր առումով, բայց ոչ հուզականորեն: Տղամարդիկ իրենց խոսքում ավելի հաճախ կիրառում են ստորադասական, քան թե համադասական շարահյուսական կապակցություններ: Ընդ որում, նրանք ավելի հաճախ են գործածում ժամանակի, տեղի ու նպատակի պարագաներ, մինչդեռ կանանց խոսքում հիմնականում գերակշռում են աստիճանի ու զիջման պարագաներ: Տղամարդկանց նախադասությունները սովորաբար ունենում են ներածական մաս, հստակորեն շարադրվում է էությունը և ներկայացվում հետևություններ: Կինն իր խոսքը առաջ է տանում մի քանի ուղիով, նրա խոսքի կառուցվածքը բազմապլան է: Կանայք սկսում են պատմությունը ոչ թե գլխավորից, այլ մանր, աննշան մանրամասներից, ինչը տղամարդուն հաճախ նյարդայնացնում է:

Խոսողի կամ գրողի սեռը անդրադառնում է խոսքային միջոցների գործածության վրա: Կյանքի նկատմամբ իր հայեցակետը արտահայտելով՝ խոսողը իր խոսքում ամբողջովին բացահայտում է իրեն: Խոսողի աշխարհայացքը բնութագրվում է որպես նրա գաղափարական, գեղագիտական, գիտակցական դիրքորոշում: Ձգտելով հասկանալ լեզվի առանձնահատկությունը՝ հետազոտողը չի կարող հաշվի չառնել խոսողի աշխարհայացքի հնարավոր ազդեցությունը, քանի որ այն արտացոլվում է պատկերավոր միջոցների ընտրության և դրանց գործածության մեջ: Հետազոտողը չի կարող նաև հաշվի չառնել ազգային ինքնատիպությունը, քանի որ խոսողի վրա ազդում է ազգային մշակույթը: Ազգային առանձնահատկությունները բնորոշում են նրա ճաշակը, նախասիրությունները, կարծրատիպերը: Իհարկե իրենց խոսքում տղամարդիկ և կանայք գործածում են իրենց մայրենի լեզուն և ազգային մշակույթի ողջ հարստությունը: Տղա-

մարդկանց և կանանց խոսքի տարբերությունների ուսումնասիրության ոչ պակաս կարևոր նախադրյալներից է նրա հասարակական նկարագիրը: Լինելով հասարակության անդամ՝ յուրաքանչյուր մարդ միշտ գտնվում է հասարակական դիրքորոշման ազդեցության տակ: Հետևաբար կասկած չի հարուցում այն փաստը, որ հատկապես սոցիալական իրականությունն է ձևավորում մարդու գաղափարական հայեցակետը: Ուստի հասկանալի է, որ մարդու կապը հասարակության, որոշակի հասարակական միջավայրի հետ չի կարող չարտահայտվել նրա խոսքում: Մարդու խոսքի վրա անդրադառնում են նաև նրա հոգեֆիզիոլոգիայից սկիզբ առնող զուտ կենսաբանական բնույթի գործոնները: Մարդու հոգեբանությունը ձևավորվում է սոցիալական կարծրատիպերի և ֆիզիոլոգիական գործոնների ազդեցությամբ: Մարդու հոգեբանական առանձնահատկությունն ուսումնասիրելիս կարևոր է հաշվի առնել նրա միջավայրի ազդեցությունը, որը միշտ հազեցած է էթնիկական բարդ ավանդույթներով, սոցիալական նորմերով և կարծրատիպերով: Եվ այս ամենը ձևավորում է մարդու հուզական բնութագիրը, որը թույլ է տալիս հասկանալ դրդապատճառների, շարժառիթների և գերակշռող պահանջմունքների ի հայտ գալը: Կանանց և տղամարդկանց աշխարհայացքների տարբերությունները զգալիորեն ազդում են հաղորդակցության վրա, որը հնարավոր չէ դիտարկել լեզվից անջատ, քանի որ լեզվի և ուղեկից այլ նշանային համակարգերի միջոցով է արտահայտվում աշխարհայացքը, հետևաբար և գենդերային առանձնահատկությունները:

Շարահյուսական մակարդակում լեզվական անհատի գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացնենք աղյուսակում (*աղյուսակը Ա.Տ. Կնյազյանի*):

Աղյուսակ 4

Շարահյուսական միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
Ձեռչված կառույցներ	30%	70%
Փոխակերպված կառույցներ	65%	35%
Անավարտ նախադասություններ	60%	40%
Կրկնություն	20%	80%
Բացականչական նախադասություններ	70%	30%
Հարցական նախադասություններ	60%	40%

Լեզվական նյութի հիման վրա կարելի է ենթադրել, որ անգլիական «կենցաղային» անեկդոտներում, ըստ գենդերային գործոնի, հուզարտահայտչական տարրեր պարունակող շարահյուսական միջոցների իրացման քանակական տարբերությունները կանանց և տղամարդկանց խոսքում մեծ են: Գենդերային հատկանիշ կրող լեզուն ամրագրում է անձի հաղորդակցային վարքագիծը՝ համաձայն տվյալ լեզվամշակույթում ընդունված և դրան բնորոշ որոշակի նորմերի և գնահատականների:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվաբանական նկարագրությամբ գենդերային չափորոշիչը հաշվի առնելը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ ինչպես լեզուն, այնպես էլ հասարակությունը: Դրա արդյունքները իրենց նպաստն են բերում գենդերի հետազոտման փոխլրացնող մեթոդաբանության համակարգված, գիտականորեն հիմնավորված համակարգի մշակմանը, նպաստում են լեզվի՝ որպես սոցիալական իրականության կառուցակցման միջոցի մասին պատկերացումների խորացմանը և գենդերային լեզվաբանության տեսական ու մե-

թողաբանական հենքի ամրապնդմանը՝ որպես լեզվի մարդակենտրոն ուսումնասիրման ամենահեռանկարային և առաջնային ուղղություններից մեկը: Սեռի գործոնը կենսաբանորեն, հոգեբանորեն, սոցիալապես և մշակութային առումով ազդում է ճանաչողական ոլորտի վրա, ինչպես և վարքագծի, ընկալման և լեզվի կիրառման վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվական անհատն այն միջանցիկ գաղափարն է, որ թափանցում է լեզվի բոլոր բնագավառները և միաժամանակ վերացնում է մարդուն ուսումնասիրող գիտակարգերի միջև սահմանները, քանի որ անհնար է ուսումնասիրել մարդուն նրա լեզվից դուրս (Karaylov 1987:3):

2. Վ. Գ. Գակը, առանձնացնելով նախադասության մեջ բառերի շարադասության իմաստաբանական, շարակարգային և իմաստատարբերակիչ գործառույթները, տարբերակում է նաև հուզարտահայտչական գործառույթը, որի դեպքում առաջին պլան է մղվում այն, ինչ հուզականորեն և հոգեբանորեն ավելի կարևոր է (Гак 2000):

3. Շ. Բալլին կրկնության դերը հուզական խոսքում կապում է հուզական ազդակների հետ, որոնք արտահայտվում են խոսքում. «այդ ազդակները արտահայտվում են այնպես, որ միտքը կրկնվում է համապատասխան քանակությամբ. որքան մղումներ կան, այնքան էլ կրկնություններ» (Балли 1961:124):

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԽՈՍՔԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԳՑՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ
ԵՐԳԻԾԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

**5.1. ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀՈՒԶԱԶԳԱՑԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԳՑՈՒԹՅԱՆ ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Հասարակության անդամների միջև հաղորդակցությունը ոչ միայն նպատակաուղղված է, այլև իրավիճակային կողմնորոշում ունի, որը կապված է խոսողի և խոսակցի անձերի հետ: Հաղորդակցման գործընթացին ամենաանմիջական մասնակցություն են ունենում բազմաթիվ գործոններ՝ բնախոսական, հանրային, որոնք լրացուցիչ տեղեկատվություն են կրում հասցեատիրոջ վերաբերյալ: Հաղորդակցությունը դիտարկվում է ոչ միայն որպես տեղեկատվության խոսքային փոխանակման գիտակցված, բանականորեն ձևակերպված ակտ, այլև անմիջական հուզական շփում մարդկանց միջև: Այսպիսով՝ հաղորդակցությունը ոչ թե զուտ լեզվական, այլ գործաբանական-հոգեկան-լեզվական կարգ է: Առանց խոսքի իրականացվող ցանկացած շփում համարվում է ոչ խոսքային և հարախոսքային հաղորդակցություն: Զգացմունքները, ինչպես տեղեկատվությունը, կարող են հաղորդվել մեկ կամ մի քանի ոչ խոսքային և հարախոսքային միջոցներով: Դա հենց հաղորդակցության այն մասն է, որը մենք չենք գիտակցում, բայց որը գլխավորն է ցանկացած շփման ժամանակ:

Սույն գլխում անգլիական «կենցաղային» անեկդոտներում հետազոտության են ենթարկվում տղամարդկանց և կանանց խոսքում հուզարտահայտչական միջոցները հետևյալ մակարդակներում.

Հաղորդակցության ոչ խոսքային մակարդակ.

- շարժաբանության (կինեմատիկ) միջոցներ (դիմախոսություն ու ժեստեր),
- շոշափողական (տակետիկա) միջոցներ (ծեռքսեղմում, համբույր, ծափ, ուսին կամ մեջքին թփթփացնել):

Հաղորդակցության հարախոսքային մակարդակ.

- ձայնի ուժգնություն (շուկ, բղավոց),
- լաց,
- լռություն, դադար,
- ծիծաղ, քմծիծաղ,
- հոգոց:

Ոչ խոսքային հաղորդակցությունը այնքան էլ կուռ կառուցվածք չունի, ինչպես խոսքայինը: Գոյություն չունեն տարածում գտած բառարաններ և ժեստերի, դիմախոսության դասավանդման կանոններ, որոնց օգնությամբ մենք ի վիճակի լինենք միանշանակորեն հաղորդելու մեր զգացմունքները: Դրանք հաղորդելը կախված է բազմաթիվ գործոններից և հաճախ տեղի է ունենում ոչ միանշանակ ձևով: Բոլոր արտալեզվական գործոնները օժանդակ դեր են կատարում շփվելիս: Հարկավոր է ոչ խոսքային լեզվին դասել նաև արտահայտչական շարժումները, որոնք խոսողի ներքին հուզավիճակի մասին են ազդարարում:

Ոչ խոսքային շփումը կարող է լրացնել կամ ուժեղացնել բանային շփումը, կամ հակասել դրան ու թուլացնել (տե՛ս Henley, La France 1984; Рюкле 1996): Թեպետ ոչ խոսքային շփումը հաճախ անգիտակցական գործընթաց է, ներկայումս այն բավականաչափ լավ ուսումնասիրված է և անհրաժեշտ արդյունքի հասնելու համար հաջողությամբ կարող է վերահսկվել:

Արտահայտչական շարժումները որոշակի անհրաժեշտ գործառույթ են կատարում, իսկ ավելի ճիշտ՝ շփման գործառույթ: Դրանք միաժամանակ հաղորդման և ներգործման միջոցներ են. դա ասես խոսք է, որը չունի բառեր, բայց լի է արտահայտչականությամբ: Արտահայտչական շարժման խորհրդանշանակությունը ի հայտ է գալիս շփման փորձի երկարատև կուտակման ընթացքում: Շարժումների ձևերն ու տեսակներն ամրագրվում են այն հասարակական միջավայրի կողմից, որին մենք պատկանում ենք: Որոշ դեպքերում շարժումները պայմանական կարգավիճակ են ձեռք բերում: Մենք անում ենք հենց այս կամ այն շարժումն այն պատճառով, որովհետև, ինչպես մենք գիտենք, այն որոշակի նշանակություն ունի մյուսների համար: Այդպիսի շարժումները լիովին հասկանալու համար պետք է կարողանանք գնահատել այն ազդեցությունների բնույթը, որոնք ներգործում են շրջապատողների վրա: Արտահայտչական շարժումները մեր վարքագծում, այլ մարդկանց կողմից ընկալվելով և մեկնաբանվելով, որոշակի նշանակություն են ձեռք բերում նրանց համար:

Հուզապրումների ժամանակ փոփոխությունների է ենթարկվում ամբողջ օրգանիզմը՝ տարածվելով դեմքի և ողջ մարմնի մկանների վրա: Առավել հաճախ, որպես արտահայտչականության ամենաէական տարրեր՝ հանդես են գալիս դիմախոսությունն և ձայնի հնչերանգը: Սովորաբար գործողությունը չի սպառվում իր արտաքին կողմով, այլ ունի նաև ներքին բովանդակություն: Դրա օգնությամբ մարդն արտահայտում է իր վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ:

Մարդկանց՝ իրար ճանաչելու գործընթացը իրականացվում է սոցիալական իրականության արտացոլման երկու մակարդակներում՝ զգայական (մարդու ընկալումը մարդու կողմից) և տրա-

մաբանական (այլ մարդու՝ որպես անհատի մասին հասկացությունը):

Գենդերային անհատի հույզերի ուսումնասիրությունը չի կարող լիարժեք համարվել առանց հիշատակելու նրանց այնպիսի կարևոր բաղկացուցիչի մասին, ինչպիսիք են ոչ խոսքային ձևերը¹:

Անկասկած, կանանց ոչ խոսքային վարքը տարբերվում է տղամարդկանց համանման վարքից: Այդ առումով առանձնապես կարևոր է հաղորդակցության ոչ խոսքային բաղադրիչների հետազոտումը, որոնք արտացոլում են մարդու հուզական արձագանքները: Ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հուզական արձագանքներն արտահայտելու համար կիրառվում են հաղորդակցության ոչ խոսքային բաղադրիչների ամենատարբեր տեսակներ:

Աշխատանքի այս բաժնում մեր խնդիրը անգլիական «կենցաղային» անեկդոտներում տղամարդու և կնոջ ոչ խոսքային վարքագծերում առկա տարբերությունները բացահայտելն է: Մեր աշխատանքում լեզվական նյութն ուսումնասիրելիս նկատել ենք, որ անգլիական անեկդոտներում ոչ խոսքային միջոցներ կիրառելիս շեշտը հիմնականում դրվում է **շարժաբանական (կինեմատիկ) բաղադրիչների (դիմախոսություն և ժեստեր)** նկարագրման վրա:

Ոչ խոսքային վարքում արտացոլվող գենդերային տարբերությունները որոշարկելիս պարզ է դառնում, որ առանձին ժեստեր կամ նույնիսկ ոչ խոսքային վարքի ամբողջական ոճեր բնորոշ են կանանց և համապատասխանաբար՝ տղամարդկանց՝ անկախ իրական սեռից և կատարողից: Այսպես, օրինակ՝ անգլիական անեկդոտներում տղամարդիկ, արտահայտելով շփոթվածություն, հաճախ ձեռքով շփում են կզակը կամ քիթը, իսկ

կանայք՝ այտերը կամ պարանոցը: Գոյություն ունեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց բնորոշ կեցվածքներ, ժեստեր, քայլվածք: Հասարակության մեջ վաղուց գոյություն ունեն ավանդական դերաբաշխում, սոցիալական ծիսակարգեր, կարծրատիպեր և գնահատականներ, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց հույզերի արտահայտչականությանը:

Մեր կողմից ուսումնասիրվող նյութը վերլուծելիս առանձնացրել ենք հաղորդակցվողների հոգեբանական վիճակը արձանագրող հետևյալ բառույթները՝ **blush, redden, flush, blanch, fade, suffocate, choke, pant, gasp, flutter, palpitate, tremble, shiver, banging heart** և այլն: Ընդ որում, անգլիական «կենցաղային» անեկդոտներում կանանց հոգեբանական վիճակը բնութագրելիս առավել գործածական են՝ **blush, flush, redden, tremble, shiver** բառույթները: Օրինակ՝

87) The traffic police flag down a car for driving erratically and ask the driver, a young girl, to step out of the car and take a breathalyser test. As they look at the results, the policeman turns to the girl and remarks severely, “You’ve had a few stiff ones tonight, Miss.”

“Oh my goodness,” she exclaims blushing. “I didn’t know it told you that as well.”

<<http://freetimejokes.com/latest-jokes/jokes/205-police-jokes/>>

88) At the end of the human biology class, the lecturer conducted a quick question and answer session to check that everyone had been listening to his lesson.

“You over there, the girl in red,” he said pointing, “which part of the body becomes 10 times its normal size under emotional stress?”

***Flushed with embarrassment**, the girl refused to answer, so another student volunteered.*

“The pupil of the eye, Sir.”

“Correct,” replied the lecturer and he turned to the girl, saying, “Young lady, your refusal to answer my question indicates three things. One, you haven’t been listening to my lecture, two, you are obsessed with sex, and three, you are going to be very disappointed.”

<<http://lingualeo.com/pt/jungle/33396>>

Անգլիական անեկդոտներում տղամարդկանց հոգեբանական վիճակը բնութագրելու համար շատ հաճախ գործածվում են **“choke, pant”** միավորները: Օրինակ՝

89) It’s been 3 months since the sailor was stranded alone on the desert island. Then without warning he sees a barrel floating to shore, carrying a gorgeous naked lady.

“I bet I can guess what you want,” she says, smiling.

*“Oh no,” he **pants** happily, “don’t tell me you’ve got rum in that barrel.”*

<http://huduku.us/jokes/display_joke.php?jcat=1&jid=432&logged_in_as=>

Հանդիպում են նաև հաղորդակցության որոշակի **ժեստային բաղադրիչներ**²: Ուսումնասիրվող նյութը վերլուծելիս ոչ խոսքային հաղորդակցության միջոցների ողջ զինանոցից, առանձնացվել են հաղորդակցության որոշակի ժեստային բաղադրիչներ, որոնք կազմել են ամենաբազմաքանակ խումբը: Ընդհանուր առմամբ տղամարդկանց և կանանց վարքին բնորոշ են տարբեր ժեստեր, սակայն մի քանիսը բնորոշ են անգլիական լեզվամշակույթին ընդհանրապես: Օրինակ՝ **“bang one’s fist on the table”**; **“clench one’s fists”** (բռնցքը սեղանին խփել, բռնցքները սեղմել), **“pull the plug”** (ծեռքը թափ տալ) ժեստերը տղամարդկանց համար բնութագրական և կարծրատիպային են, նույնը չի կարելի ասել կանանց վերաբերյալ: Օրինակ՝

90) A man suffering from constipation was given a course of suppositories by his GP. But a week later he was back complaining they hadn’t worked.

“Are you sure you’ve been taking them regularly?” asked the doctor.

“Of course I bloody well have,” he answered and pulled the plug. “What do you think I’ve been doing, sticking them up my arse?”

(Sharpe 2004:249)

Վերոնշյալ օրինակում **“pull the plug”** ժեստը օգտագործում է տղամարդը, այն արտահայտում է **քամահրանք, անհուսալիություն, նյարդայնություն, ակսոսանք**:

Տղամարդկանց բնորոշ ժեստ է **“scratch one’s head”**-ը (ծոծրակը քորել), որը արտահայտում է **զարմանք, տարակուսանք, վարանմունք**: Օրինակ՝

91) *A 20-stone man went to the doctor's complaining of a bad chest. The doctor examined him with his stethoscope and then asked the man to strip off completely.*

"Would you mind getting down on all fours and crawling over to the window for me, please?" he asked.

The man did as he was requested.

"Good, good," murmured the doctor.

"Now would you mind crawling over to the wall on your right. That's it, just between the chair and the filing cabinet."

The doctor scratched his head thoughtfully.

"Thank you very much, Mr White, you may get dressed now."

Once he'd put his clothes back on, the man asked the doctor for his verdict.

"Oh you're quite right, you've got a bad chest so I'll give you a prescription for some antibiotics."

"But doctor, how did crawling around the room help your diagnosis?"

"Oh it didn't," replied the doctor, "but I'm having a pale pink settee delivered next week and I was just interested to know where the best place to put it might be."

(Sharpe 2004:246-247)

Ծայրահեղ նյարդային վիճակում մարդը հաճախ չի կարողանում տեղը նստել և սկսում է քայլել: Անգլիական «կենցա-

ղային» անեկդոտներում զայրույթի հույզի այդքան հաճախադեպ ոչ խոսքային դրսևորում նկատել ենք միայն տղամարդկանց վարքում: Իսկ դրական սպասումները տղամարդիկ արտահայտում են **“rub one’s hands”**-ը (ծեռքերը շփել) ժեստի օգնությամբ:

Ավանդաբար աղջիկներին սովորեցնում են, որ դյուրաբորբորությունը զրկում է նրանց գրավչությունից: Սակայն ժամանակակից կանայք իրենց զայրույթն արտահայտում են նույնքան հաճախակի ու նույն սաստկությամբ և ճիշտ այնպես, ինչպես տղամարդիկ: Այսպես, օրինակ՝ **“grab someone’s hair”** ժեստը (քաշել ինչ-որ մեկի մազերը), որը կանանց բնորոշ ժեստ-ռեակցիա է, օգտագործվում է անգլիական անեկդոտներում **զայրույթի** հուզավիճակում: **“Throw up one’s hands”** (ծեռքերն իրար զարկել) ժեստը բնորոշ է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Ամենաբնութագրական հույզերը, որոնց դեպքում կիրառվում է այդ ժեստը, հետևյալներն են՝ **զարմանքը, վրդովմունքը, վախը, հուսահատությունը, ուրախությունը:**

Անգլիական անեկդոտներում **“cover one’s face with one’s hands”** (երեսը ձեռքերով փակել) ժեստը առավելապես օգտագործում են կանայք, երբ լալիս են, վշտանում, այլայլվում, ամաչում: Տվյալ ժեստը նախատեսված է հենց հույզի արտահայտման, այլ ոչ թե հույզը թաքցնելու համար. սովորաբար թաքցնում են արցունքները (որպես վշտի արտահայտություն) կամ այտերի կարմրելը (որպես ամաչելու արտահայտություն), այլ ոչ թե բուն վշտի կամ ամոթի հույզերը: Անգլիական անեկդոտներում **“bury one’s head in one’s hands”**; **“put one’s head in one’s hands”**; **“bow one’s head”** ժեստը գլխավորապես օգտագործում են տղամարդիկ: Օրինակ՝

92) *“Bob came home looking utterly wretched and **buried his head in his hands**.*

“I’ve been sacked,” he told his wife.

“After 35 years of doing the same job, day in, day out, I have been replaced by an electronic gadget the size of a torch.

And the awful thing is,” he continued, “I can’t fault it. It can do everything I can do, and do it better, and it will never wear out!”

Bob looked up for comfort but his wife had gone. She was down the shops looking to buy one.

(Sharpe 2004:353)

93) *The two men had just reached the 10th hole when a funeral procession went slowly by. The first man stopped playing, took his hat off and **bowed his head**.*

“That was very good of you,” said the second man.

“Well, it’s only right. We were married 27 years and she was a good wife to me,” he replied.

(Sharpe 2004:375)

“Wring one’s hands” (ծեռքերը կոտրատել) ժեստը սովորաբար օգտագործվում է այն իրավիճակում, երբ ժեստը ցույց տվողը շատ է ուզում, բայց ոչ մի կերպ չի կարող ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Սեփական անզորության զգացողությունը տանջալից է ժեստի հեղինակի համար: Նա ձգտում է ինչ-որ բան անել և կատարում է ժեստային շարժում: Սովորաբար

Ժեստի հեղինակը դրա հետ մեկտեղ ուժեղ բացասական հուզապրում է ունենում՝ **վիշտ, վախ ինչ-որ մեկի համար, թախիծ** և այլն: Անգլիական անեկդոտներում այդ ժեստը ավելի հաճախ օգտագործում են կանայք: Իգական սեռի ներկայացուցիչներին բնորոշ ժեստերից է նաև **“stamp one’s foot”**-ը (ոտքերով դոփել), որը նախատիպորեն կապված է քմահաճ երեխայի կամ կնոջ հետ:

Թեև **“shrug one’s shoulders”** (ուսերը թոթվել) ժեստը երկու սեռերի ներկայացուցիչներին էլ հատուկ է, սակայն տղամարդկանց վարքագծում այն օգտագործվում է **զայրույթի և զարմանքի** իրավիճակում, իսկ կանանց դեպքում՝ **անսպասելիությունը նշագծելու համար**: Օրինակ՝

*94) An attractive woman from New York was driving through a remote part of Texas when her car broke down. An Indian on horseback came along and offered her a ride to a nearby town. She climbed up behind him on the horse and they rode off. The ride was uneventful except that every few minutes the Indian would let out a whoop so loud that it would echo from the surrounding hills. When they arrived in town, he let her off at the local service station, yelled one final, “Yahoo!” and rode off. “What did you do to get that Indian so excited?” asked the service station attendant. “Nothing,” **shrugged the woman**, “I merely sat behind him on the horse, put my arms around his waist, and held onto his*

saddle horn so I wouldn't fall off.” “Lady,” the attendant said, “Indians ride bareback...

<<http://www.native-english.ru/subscribe/111>>

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում միայն կնոջն է բնորոշ (տղամարդու վարքում այն չենք արձանագրել) faint (ուշաթափվել) ժեստը՝ մի ամբողջ շարք հույզերի ազդեցությամբ՝ **ուրախության, վշտի, վախի**: Օրինակ՝

95) The wife's mother rushed into the maternity wing to find out how her daughter was progressing. As she entered the waiting room, she spotted her son-in-law. Unbeknown to her, he was listening to the cricket on his iPod.

“How's it going?” she asked anxiously.

“Not bad,” he smiled, “they've got four out and there's only one to go.”

“Aaah,” she screamed, and fainted.

(Sharpe 2004:9)

Ժեստերը չի կարելի համարել ակտիվության ինքնաբուխ դրսևորում, քանի որ մարդը, որպես անհատ ձևավորվելով կոնկրետ սոցիալական միջավայրում, յուրացնում է տվյալ հանրության հատուկ մարմնաշարժումների ձևերը, ինչպես նաև դրանք հասկանալու կանոնները:

Ոչ խուսքային հաղորդակցության ժեստային բաղադրիչների կիրառումը տեղաբաշխելով ըստ որոշակի հույզերի՝ մենք նկատում ենք, որ տղամարդկանց շրջանում առկա հույզերի մեջ քանակապես գերակշռում է **զայրույթի** հույզը, մյուս բոլոր հուզավի-

ճակներում կանայք իրենց խոսքն ավելի հաճախակի են ժեստերով ուղեկցում, իսկ **ուրախության** հույզը դրանց շարքում գենդերային առումով առաջնային է:

Անգլիական անեկդոտներում մարդու ոչ խոսքային վարքում **դիմախոսության բաղադրիչներ**³ կենտրոնական տեղ է գրավում դեմքի արտահայտությունը:

Համարվում է, որ դիմախոսության բաղադրիչները ոչ միայն արտահայտում են հույզեր, այլ հուզապրումները սաստկացնող գործոններ են: Հույզերի դիմախոսության դրսևորումը, ինչպես և հաղորդակցվողի հուզավիճակը ճանաչելու ունակությունը հույզերի ու հուզականության հետազոտման կարևոր տեսանկյունն է, քանի որ ոչ խոսքային արտահայտչաձևերը լիովին կարող են հանդես գալ որպես հույզերի օբյեկտիվ ցուցանիշներ:

Ներկայումս համընդհանուր ճանաչման է արժանացել դեմքի արտահայտություններում հիմնական հույզերի (**զայրույթ, տխրություն, վախ, ուրախություն, տհաճություն, զարմանք**) արտացոլումը⁴, և չեն ժխտվում նաև դիմախոսության միջմշակությային որոշ տարբերություններ: Դեմքը մարդկային կերպարի կարևորագույն բնութագիրն է⁵: Ջղաձգումը փոխում է դեմքի արտահայտությունը և հայտնում մարդու հոգեվիճակի մասին: Վաղուց հայտնի է, որ տղամարդու դիմախոսությունն ուժի և մտքի մարմնացում է, իսկ կնոջ դիմախոսությունը՝ թուլության ու զգայականության:

Դիմախոսությամբ դրսևորված հույզերի (**վախ, հակակրանք, ուրախություն, զայրույթ, զարմանք**) մեծ մասն առավել ճիշտ է ընկալվում կանանց դեպքում: Թաքնված ենթատեքստի նկատմամբ կանանց գերզգայունության պատճառը բնածին ոչ խոսքային ազդանշանները (դիրքերը, ժեստերը, մարմնի շարժումները) տեսնելու և վերծանելու նրանց կարողությունն է:

Դրանք տեղի են ունենում ենթագիտակցաբար և ցույց են տալիս խոսողի հոգեվիճակը:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում կանանց վարքում նկատվել է այնպիսի շարժասույթ, ինչպիսին է **“watch, listen with an open mouth”**, որը հատուկ չէ տղամարդկանց դիմախոսության դրսևորմանը:

Ոչ խոսքային վարքագծի տարրերի թվին է պատկանում նաև **աչքերի միջոցով** հաղորդակցումը⁶, որը հիմնված է նշանների օպտիկական-շարժաբանական (կինետիկ) համակարգի (կամ կինեսիկայի) վրա:

Կանանց դիմախոսական դրսևորումներում առաջատարը աչքերի այն արտահայտությունն է կամ հայացքը, որը հաղորդվում է այդ շարժասույթի հուզարտահայտչական տարբեր որոշարկիչների օգնությամբ՝ **“look down”**-ը (ցույց է տալիս **ամոթ, վարանմունք, վիշտ, դժգոհություն**), **“widen the eyes”, “flutter the eyes”**-ը (հատուկ է **վախի և զարմանքի** դեպքում): Աչքերի արտահայտությամբ կարելի է հասկանալ և վերծանել ցանկացած հուզական տեղեկատվություն:

Բացի անգլիական «կենցաղային» անեկդոտներում մեզ հանդիպած վերոհիշյալ բաղադրիչներից՝ մեր կարծիքով դիմախոսությանն են վերաբերում նաև հետևյալ շարժումները՝ **շրթունքներով (movement of lips)**, հատկապես կանանց խոսքում, **հոնքերով (frown one's brow, frown)**, **ճակատով (movement of forehead)**, հատկապես տղամարդկանց խոսքում, որոնք հաճախադեպ են բազմաբնույթ հույզեր արտահայտելու համար: Օրինակ՝

96) A cab driver reaches the pearly gates. St.
Peter looks him up in his Big Book and tells him

to pick up a gold staff and a silk robe and proceed into Heaven.

*Next in line is a preacher. **St. Peter looks him up in his Big Book, furrows his brow and says,** “OK, we’ll let you in, but take that cloth robe and wooden staff.”*

The preacher is shocked and replies, “But I am a man of the cloth. You gave that cab driver a gold staff and a silk robe. Surely I rate higher than a cabbie!”

St. Peter responds matter-of-factly, “This is Heaven and up here, we are interested in results. When you preached, people slept. When the cabbie drove his taxi, people prayed.”

<<http://unijokes.com/joke-1160/>>

Վերոշարադրյալ լեզվական փաստերը թույլ են տալիս պարզել, որ ոչ խոսքային հաղորդակցության դիմախոսության միջոցները գենդերային առումով առաջնային են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար **ուրախության** հուզապրումի դեպքում: **Ձայրույթ կամ զարմանք** արտահայտելիս տղամարդկանց համար այդ շարժասույթը գենդերային առումով տեղին է: Կանայք տղամարդկանցից ավելի հաճախ են իրենց խոսքն ուղեկցում դեմքի տարբեր արտահայտություններով՝ **տխրության ու վախի** հուզավիճակներում: Հույզերի դիմախոսական դրսևորումը առհասարակ բնորոշ է կանանց վարքագծին (*տե՛ս աղյուսակ 5*), որի հիման վրա կարելի է ենթադրել, որ կանայք չեն կառողանում թաքցնել իրենց հույզերը⁷:

Ոչ խոսքային վարքի հաջորդ բաղադրիչը, որը մենք կդիտարկենք սույն ատենախոսական աշխատանքում՝ **շոշափողական միջոցներն են (տակեսիկան)**: Անգլիական անեկդոտներում տարբերություններ նկատվում են նաև տղամարդկանց ու կանանց շոշափողական վարքում: Տակեսիկան ուսումնասիրում է շփման իրադրությունում հպումը՝ ձեռքսեղմում, համբույր, շոշափում, շոյում, վանում և այլն: Ինչպես ցույց է տվել մեր նյութի վերլուծությունը, անգլիական անեկդոտներում դիպչելու զանազան ձևերի օգնությամբ հաղորդակցության գործընթացը կարող է ստանալ տարբեր բնույթ և ընթանալ տարբեր արդյունավետությամբ: Տակեսիկան հիմնվում է երկու գլխավոր տարրերի վրա՝ ֆիզիկական շփման և տարածության մեջ մարմնի դիրքի: Ֆիզիկական շփումը (**հպում, շոշափում, համբույր, ուսին թփթփացնել**) մարդկանց միջև փոխգործակցության կարևոր միջոց է: Հպման միջոցով մարդն արտահայտում է ամենաուժեղ զգացմունքները՝ սերն ու ատելությունը: Շոշափողական վարքը, որպես ոչ խոսքային հաղորդակցության բաղկացուցիչ, ցանկացած վիճակի և հարաբերության ամենաճշգրիտ արտահայտչամիջոցներից է: Ժեստերի ու հպման միջոցով կարելի է հասկանալ անգամ մարդու այն մտքերն ու զգացմունքները, որոնք չեն բարձրաձայնվել: Անեկդոտներում կանանց և տղամարդկանց վարքի զուգահերակա համեմատությունը թույլ է տվել պարզել, որ նրանք հաղորդակցվելիս օգտագործում են իրենց զրուցակիցներին հպվելու զանազան ձևեր: Մարդիկ դիպչում են իրար տարբեր պատճառներով, տարբեր ձևերով և տարբեր վայրերում:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում մարդիկ հատկապես հիվանդագին են արձագանքում ամբարտավան շարժումներին՝ ուսին կամ մեջքին թփթփացնելուն, գլխին կամ այտին խփելուն և այլն: Ազգականների կամ մտերիմների միջև

նման ժեստերն ընկալվում են որպես համակրանքի դրսևորում: Սակայն քիչ ծանոթ մարդու կողմից նման ժեստը ընկալվում է որպես անշնորհություն:

Միմյանց դիպչելու ամենատարածված ձևը **ձեռքսեղմումն** է, որը տարբերվում է իր կատարման ձևով, ուժով և տևողությամբ: Մարդու հետ առաջին հանդիպման ժամանակ ձեռքսեղմման միջոցով փոխանցվում է հնարավոր փոխհարաբերությունների երեք տիպերից մեկը՝ *գերազանցությունը/ենթարկվողությունը, զիջողամտությունը և հավասարությունը*: Այս տեղեկատվությունն անգիտակցաբար հաղորդվում է, սակայն այս կամ այն ձեռքսեղմումը նպատակաուղղված կիրառելու դեպքում մարդկանց վրա կարելի է անմիջական ազդեցություն գործել: Օրինակ՝

*97) A young man hired by a supermarket reported for his first day of work. The supermarket manager **greeted him with a warm handshake** and a smile, and then gave him a brush, saying: “Welcome to our supermarket. Here is a brush - your first job is to sweep the floor.” “But I’m a university graduate,” the young man replied indignantly. “Oh, I’m sorry. I didn’t realize that you are a university graduate,” the manager said, “give me the brush and I’ll show you how to do it.*

<<http://www.native-english.ru/anecdotes/209>>

Չափից ավելի ուժեղ ձեռքսեղմումը տղամարդկանց տարբերակիչ առանձնահատկությունն է. այդպես են վարվում միտում-

նավոր՝ ցանկանալով շեշտել իրենց ուժը: Ձեռքսեղմման ամենաազդեհիվ ձևը օգտագործում են տղամարդիկ (*տե՛ս աղյուսակ 6*): Այն բնորոշ է ազդեհիվ, իշխող տղամարդուն, որն էլ միշտ ձեռքսեղմման նախաձեռնողն է (***take/squeeze one's hand firmly; shake hands with smb.; clasp/grab/grasp smb.'s hand***): Սակայն կանայք երբեմն ստիպված են ցուցադրել ամուր ձեռքսեղմում՝ տղամարդկանցից պաշտպանվելու համար:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում հաղորդակցվելիս ***շոյեղը, համբուրելը*** կատարում են խրախուսական, հուզական աջակցության գործառույթ: Համբույրը, որպես հավիղական ժեստի տարատեսակ, լայնորեն կիրառվում է մարդու կյանքի բոլոր բնագավառներում: Կոնկրետ առարկայով պայմանավորված՝ փոխվում է համբույրի բնույթը: Մայրը զավակին համբուրում է քնքշորեն և սիրով, իրար սիրող մարդկանց դեպքում դրանք կարող են լինել շուրթերի թեթև հպումից մինչև կրքոտ համբույրներ: Համբույրները կարող են լինել ինչպես զգացմունքների անկեղծ դրսևորում, այնպես էլ ձևական: Համբույրը՝ որպես ֆիզիկական շփման տարր, անգլիական անեկդոտներում կանանց վարքում դիտվում է միայն մտերմիկ հարաբերությունների դեպքում. ***kiss the guy on the cheek; kiss his hand; kiss him gently on the forehead; kiss him long and passionately; throw a kiss; give him a kiss; kiss the back of his neck***: Օրինակ՝

98) “Hello, Colin, what are you doing riding around on that woman’s bicycle?”

“Well, it’s a long story,” replied Des. “I was on my way into town when this lady passes me on a bicycle. She stops, waits for me to catch up, ***gives me a kiss*** and then takes her clothes off!”

“You can have anything you want,” she says, so I took the bicycle... Well, I’m not a pervert, I don’t wear women’s clothes.”

(Sharpe 2004:52)

*99) “Oh my darling, do you always **kiss** with your eyes closed?” whispered the smitten young man.*

*“Only when I have to **kiss you**,” she replied.*

(Sharpe 2004:59)

Ոչ խոսքային հաղորդակցման այնպիսի միջոց, ինչպիսին **գրկելն է (hug smb.; hug smb. from behind)**, ավելի հաճախ հանդիպում է թույլ սեռի ներկայացուցիչների շփումներում, տղամարդկանց շրջանում այն անհամեմատ քիչ է հանդիպում (*տե՛ս աղյուսակ 6*): Օրինակ՝

100) Three beautiful young girls are walking along the beach when they come across a man sunbathing. He has no arm sor legs.

*The first girl goes up to him and says, “Have you ever been hugged?”The man shakes his head, so she bends down and **gives him a big hug**. The second girl asks him if he has ever been kissed. Again he shakes his head so she bends down and gives him a long lingering kiss. Then the third girl asks him if he has ever been fucked.*

“No, no,” he stammers, his face lighting up in anticipation.

“Well, you are now,” she replies “the tide’s coming in.”

(Sharpe 2004:64)

Գրկախառնության բնույթով, ուժով, տևողությամբ որոշվում է մարդու արտահայտած զգացմունքների նշանակությունը (***embrace smb. tightly; give a hug; carefully embrace smb.; hold smb. in a tender embrace; put smb.’s arm around smb):***

Օրինակ՝

101) When Samantha was expecting twins she interrupted a burglary and got shot twice in the stomach. Fortunately, the babies were delivered safely but the bullets were never recovered. Seventeen years went by, when one day her daughter came to her in great distress.

“Oh mum, I just been to do a wee and all of a sudden, out popped a bullet.”

*Samantha told her it was nothing to worry about and explained what had happened all those years ago. A little later she caught sight of her son, sitting down with his head in his hands. She went up to him, **put her arms round his shoulders** and said, “Don’t worry, I think I can guess what happened. You went to the toilet and a bullet came out.”*

“Oh no, mum, it wasn’t like that. I was having a wank and I shot the dog.”

(Sharpe 2004:310)

Մտերիմ բարեկամները, երկար ժամանակ իրարից հեռու լինելով, հանդիպելիս իրար խեղդելու չափ ամուր գրկախառնվում են: Սիրահարները գրկում են իրար քնքշորեն ու տևական ժամանակ: Հեռավոր ազգականների միջև գրկախառնությունները, նախկինում եղած հարաբերություններով պայմանավորված, կարող են լինել ինչպես զուսպ, սառը, այնպես էլ խանդավառ:

Ուսին կամ մեջքին թփթփացնելը հիմնականում բնորոշ է տղամարդկանց (*տե՛ս աղյուսակ 6*): Այս ոչ խոսքային ժեստերը (***pat smb. on the head; pat smb.'s head; pat smb. on the arm; pat smb.'s hand; pat smb. on the back; tap smb. on the knee; tap/ dab smb. on the shoulder; hit smb. on the upper arm***) մեկնաբանվում են որպես բարեկամական վերաբերմունքի, մասնակցության կամ խրախուսման արտահայտություն: Այս ոչ խոսքային ժեստերը գործնականում առկա են բոլոր տարիքային խմբերում: Օրինակ՝

102) A sleazy man ran a pet shop and advertised on the front window that he had a dog for sale, specially reared for spinsters.

It wasn't long before a woman came in asking for more details.

*"I assure you, Miss, this dog will cater for all your needs," he said and **patted her on the arm**. Soon he brought out a huge Alsatian for her to inspect. The woman bought the dog and they went home. However, a week later, he received an angry phone call from her, complaining that the dog was not satisfactory.*

“My sincere apologies,” simpered the man. “I’ll come round and see you straight away.”

When the man arrived, he found the woman in bed and the dog asleep on the carpet.

“Watch carefully, Brutus,” he said to the dog as he took his clothes off. “I’m only going to show you one more time.”

(Sharpe 2004:303-304)

Վերոբերյալ անեկդոտում ուսին թփթփացնելն (***patted her on the arm***) ասես ի ցույց է դնում տղամարդկային ուժը և օգնության հասնելու պատրաստականությունը:

Ոչ խոսքային ժեստերը՝ ***tap smb. on the knee; tap/dab smb. on the shoulder***, օգտագործվում են նաև զրուցակցի ուշադրությունը գրավելու համար: Օրինակ՝

*103) Two men are sitting opposite each other in a railway compartment. The younger of the two asks his companion if he has the time. There is no answer. Again and again he asks but gets no reply. Eventually the man **taps him on the knee** and shouts, “Do you have the time please?”*

“Yes, it’s half past three,” replies the older man.

“Thank you, but why did you take so long to answer?”

“Well, it’s like this. Once I’d told you the time, we’d get talking, become friends, find we had something in common... then I’d invite you to visit us, you’d meet our beautiful daughter, fall in love with her and want to get married. And to

be honest with you, I don't want to have son-in-law who hasn't even got a watch."

(Sharpe 2004:281)

Հայումը լայնորեն տարածված է ոչ խոսքային հաղորդակցության մեջ: Տարաբնույթ հայումները գրուցակցի չարտահայտած զգացմունքների ցուցիչներն են (***touch smb.'s hand; touch with the tips of one's fingers; touch smb.'s elbow; touch smb.'s knees with yours; touch smb.'s chest; touch the back of smb.'s head; tip***): Դրանք կարող են լինել քնքուշ, սիրավիր, թեթև, ուժեղ, կոպիտ, վիրավորող և ավելի հաճախ նկատվում են կանանց վարքում (*տե՛ս աղյուսակ 6*):

Օրինակ՝

104) *The simple man was beside himself with anger when he discovered his wife in bed with another man.*

"How could you?" he yelled, and taking a gun out of the bottom drawer of the bedside table he placed it to his head and cocked the trigger.

*"Don't Jim, please don't," **the woman sobbed and touched his elbow**, "put the gun down."*

Jim replied angrily, "Shut up and start saying your prayers, you're next."

(Sharpe 2004:335)

105) *"Oh Bob," his wife sighed and **touched his hand**. "I wish you wouldn't go down the pub*

every night. You drink far too much. Here, let me show you something.”

Bob’s wife put two glasses before him, one filled with whisky, the other with water. Into each she dropped a worm. The worm in the water swam around happily while the worm in the whisky had a fit and sank to the bottom, dead.

“There!” said the wife triumphantly. “Now what does that show you?”

Bob looked at the two glasses and replied, “It shows me that if you drink, you won’t get worms. Now I’m off to the pub.”

(Sharpe 2004:212)

Սակայն անգլիական մշակույթում զրուցակցին առանց պատճառաբանության և աներեսաբար դիպչելն անթույլատրելի է, հատկապես եթե առաջին շփումն է:

Ոչ խոսքային հաղորդակցությունը մարդկանց փոխգործակցության գործընթացում բնավ էլ վերջին տեղում չէ: Ոչ խոսքային հաղորդակցության միջոցները՝ որպես զգացմունքների յուրօրինակ լեզու, ինչպես և բառերի լեզուն, հասարակության զարգացման նույնպիսի արդյունք են: Ոչ խոսքային հաղորդակցության բոլոր ձևերը (**դիմախոսություն, ժեստեր, հայումներ** և այլն) փոխգործակցում են՝ երբեմն փոխլրացնելով, երբեմն հակասելով միմյանց:

Ոչ խոսքային մակարդակում հուզարտահայտչական միջոցների գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացնենք աղյուսակներում (*աղյուսակները Ա.Տ. Կնյազյանի*):

Աղյուսակ 5

Շարժաբանության միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
Ժեսպեր	55%	45%
Դիմախոսություն	60%	40%

Աղյուսակ 6

Շոշափողական միջոցները (տրակեսիկա) կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
Ձեռքսեղմում	30%	70%
Համբույր	60%	40%
Գրկախառնություն	75%	25%
Ուսին կամ մեջքին թփթփացնել	20%	80%
Հպում	75%	25%

Հետազոտելով գենդերային տարբերությունները ոչ խոսքային հաղորդակցության մակարդակում՝ կարելի է եզրակացնել, որ գենդերը չափազանց կարևոր դեր է կատարում: Նկարագրելով ցանկացած անհատի վարքագիծը որոշակի իրավիճակում՝ կարող ենք ճշգրտորեն որոշել, թե գենդերային որ տիպին է պատկանում տվյալ մարդը:

5.2. ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀՈՒԶԱԶԳԱՑԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում, ի շարս հաղորդակցության խոսքային և ոչ խոսքային միջոցների, օգտագործվում են հարախոսքային տարատեսակ միջոցներ⁸: Այդ միջոցները ազդում են ասույթի իմաստի վրա, հայտնում են մարդու հոյզերի, վիճակի, նրա վստահ կամ անվստահ լինելու մասին և այլն:

Հարախոսքային առանձին միջոցներ գնահատվում են որպես ավելի իզական կամ ավելի արական՝ անկախ դրանք կիրառողի իրական սեռից: Հարախոսքային հաղորդակցության ժամանակ տեղեկատվությունը հաղորդվում է ձայնային նրբերանգների միջոցով (տե՛ս Ивучкина 1996): Ուստի արտասանված բառը երբեք չեզոք չէ: Հաղորդման բովանդակությունից առավել քան կարևոր է ինչպես ենք մենք խոսում: Խոսքի իմաստը կարող է փոխվել՝ կախված այն բանից, թե ինչ հնչերանգ, դիթմ, տեմբր են օգտագործվել այն հաղորդելու համար⁹:

Դ. Կրիստալը տարբերում է «**ձայնի որակ**» և «**ձայնի որակավորում**» հասկացությունները: Նա սահմանում է ձայնի որակը (**voice qualities**) որպես հնչյուն, որն առաջանում է որոշակի ձևով ձայնալարերի թրթռման արդյունքում (սրան դասվում են շշուկը, հնչեղությունը, խռպոտությունը, շնչեղությունը, խլությունը, զրնգունությունը), իսկ ձայնի որակավորումները (**voice qualifications**) կարող են ավելանալ ձայնի վերոթվարկյալ որակների վրա (Crystal 1975):

Ձայնի որակը մարդու հուզավիճակի տեղեկատվական ցուցանիշն է¹⁰: Արտասանված բառը երբեք չեզոք չէ: Ներքին վիճակը փոփոխվելիս փոխվում են լեզվական ալիքի ֆիզիոլոգիական

չափանիշները՝ ձայնի և ձայնային ապարատի մկանների տատանումները, ձայնի հիմնական տոնի փոփոխությունը: Կարելի է առանձնացնել խոսքի հնչողության հետևյալ հատկանիշները՝ ուժգնությունը, արագությունը, ռիթմայնությունը, տեմբրը¹¹, մեղեդայնությունը, լարվածությունը: Ձայնի որակը մեզ լրացուցիչ տեղեկատվություն է հաղորդում խոսողի հուզավիճակի մասին, ձայնի որակի փոփոխության միջոցով խոսողը կարող է արտահայտել իր վերաբերմունքն ասվածին: Այլ կերպ՝ խոսքային ձայնը խոսողի անհատական հատկությունների, նրա սոցիալական պատկանելության, խոսելու պահին հոգեկան-հուզական վիճակի մասին տեղեկատվության աղբյուր է:

Ձայնի որակավորումներին են (*voice qualifications*) դասվում ծիծաղը, քմծիծաղը կամ քթի տակ ծիծաղելը, հոգոցը, դողդոջունը, ատամները սեղմելը, շուրթերը երկարաձգելը, շուրթերը փքելը: Խոսքում ձայնի որակների իրականացրած հիմնական գործառնություններին է պատկանում հուզարտահայտչական-գնահատողական բովանդակության հաղորդումը (Козырева 1986):

Անգլիական լեզվամշակույթում արական հատկանիշների գերակայությունն արտահայտվում է լեզվի հարախոսքային բնութագրերում: Անգլիացիները նախընտրում են խոսել ցածր ձայնով, միջին տեմպով, միմյանց չընդհատելով և խստորեն հետևելով խոսքահերթի (*turn-taking*) կանոնին. երկար դադարներ չեն տալիս, տանել չեն կարողանում լռությունը: Հաստատական նախադասություններում բարձրացող ձայներանգի օգտագործումն ավելի իգական բնութագիր է համարվում և դա բացատրվում է անվստահության դրսևորմամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առանձնացնենք արական և իգական հարախոսքային հիմնական միջոցները անգլիական «կենցաղային» անեկդոտներում: Անգլիական անեկդոտներում

կանայք հիվանդագին են արձագանքում խոսքի տոնայնության կտրուկ փոփոխություններին: Իսկ տղամարդիկ այդ փոփոխությունները ընկալում են առանց որևէ բացասական հույզի, հատկապես եթե դրանք տեղին են: Տղամարդկանց խոսքում առանձնապես ուժեղ հույզերի, օրինակ՝ զայրույթի արտահայտման ժամանակ նկատվում են բազմաթիվ արտասանական շեղումներ: Արական և իգական հարախոսքային հիմնական միջոցների վերլուծությունը թույլ է տալիս մեզ ուսումնասիրել տղամարդկանց և կանանց հարախոսքային առանձնահատկությունները լեզվի ու մշակույթի հարթության վրա:

Անգլիական անեկդոտներում հարախոսքային միջոցներն ավելի հուզառատ օգտագործելը բնորոշ է հենց կանանց: Արտահայտչականության և հույզերի ամենամեծ քանակությունը և՛ տղամարդկանց, և՛ կանանց խոսքում հիմնականում վերաբերում է նրանց բղավելով արված արտահայտություններին: Ընդ որում, տղամարդկանց վարքը բնութագրվում է **to roar, to bellow, to snarl, to grunt, to croak** բայերի օգնությամբ: Օրինակ՝

*106) One day a wife complained, “This wall clock almost killed my mother today. It fell only seconds after she got up from the couch.” The husband **grunted** and replied, “The darn clock always was slow.”*

<<http://www.native-english.ru/anecdotes/1866>>

107) One of the fielders got hit in the crotch by a cricket ball, the pain was so severe he collapsed unconscious on the ground and woke up in hospital.

*“Hey doc,” **he croaked**, “am I alright? Will I be able to play again?”*

The doctor replied, “Yes, you’ll be able to play again... that’s if you’ve got a women’s team at the club.”

(Sharpe 2004:267)

Բարձրաձայն խոսքը, որպես կանոն, հատուկ է **ինքնագոհությանը**, մինչդեռ ցածրաձայն խոսքը վկայում է մարդու **զուսպ, համեստ և թույլ** լինելու հանգամանքը: Ձայնի բարձրության նկատելի փոփոխությունները զրուցակցի դյուրազգացությունն ու հուզվածությունն են արտահայտում: Կանանց հարախոսքային վարքը կարելի է բնութագրել **to scream, to yell** բայերի օգնությամբ: Օրինակ՝

108) “I hope you don’t mind me asking,” said the young American girl to the Scotsman, “but I’ve often wondered what you wear under your kilt.”

The Scotsman replied that if she was really curious to know, then she could put her hand up his kilt and find out for herself.

So, a little apprehensively, she did as he suggested and put her hand under his kilt.

*“Aaagh, it’s gruesome,” **she screamed**, quickly removing her hand.*

“Aye, it is that, lass,” replied the Scotsman, “and if you put your hand up again, you’ll find it’s gruesome more.”

(Sharpe 2004:270)

Հարախոսքային հաղորդակցության բնութագրերից են ծայ-
նի նկարագրերը, որոնցով արտասանվել է այս կամ այն բանա-
վոր տեքստը, ընդ որում՝ ամենից հաճախ ուղեկցվելով **զայրույ-
թի** հույզով (**to groan loudly (S), to say affronted (S), to mutter
(S/Կ), to murmur (S), to splutter (Կ), to explode (S/Կ), to hiss
(Կ)**): Օրինակ՝

109) *It's no good, it's over" said Julie. "You are
so bad in bed."*

*"Oh come on," said the man affronted, "how
can you tell after 15 seconds?"*

*<[http://broadbandforum.co/threads/funny-videos-
images-and-jokes.75979/page-196](http://broadbandforum.co/threads/funny-videos-images-and-jokes.75979/page-196)>*

110) *Darling,' says Barry to his wife, Sarah, "I
invited a friend home for supper.'*

*"What? Are you crazy?" Sarah splutters, "The
house is a mess, I didn't go shopping, all the
dishes are dirty, and I don't much feel like
cooking a fancy meal.'*

"I know all that,' murmurs Barry.

*"Then why did you invite a friend for supper?"
explodes Sarah.*

*"Because the poor fool's thinking about getting
married,' concludes Barry.*

*<[http://www.guy-
sports.com/funny/groom_wedding_speech_jokes.
html](http://www.guy-sports.com/funny/groom_wedding_speech_jokes.html). >*

Այսպես, հույզեր առաջանալիս բավականին դժվար է ծայնի փոփոխությունները թաքցնել: Երբ մարդը վշտացած է, նրա ծայնը բարձրանում է: Վախի կամ զայրույթի դեպքում ծայնը հնչում է ավելի բարձր ու զիլ, մինչդեռ խոսելու արագությունը չի փոխվում: Ձայնի բարձրությունը և բառային բովանդակության անհամապատասխանությունը (քանի որ ծայնը ավելի դժվարությամբ է ենթարկվում գիտակցական վերահսկողության, քան արտահայտությունների բովանդակությունը) կարող է ցույց տալ, որ տվյալ անձը իր արտահայտություններում անկեղծ չէ:

Անգլիական անեկդոտներում կանանց համար բնութագրական է **ցածրաձայն, շշուկով խոսելը (to whisper)** (դե՛ս աղյուսակ 7): Օրինակ՝

111) A man was lying on his death bed, time was running out and his family were standing round about.

*“Joe, Joe,” **whispered his wife**, “is there anything I can do for you? Do you have a last wish?”*

Joe lifted his head slowly from the pillow and sniffed the air.

He could smell his wife’s baking in the oven.

“Can I have just a last slice of the wonderful cake you’re baking?” he croaked.

“I’m afraid not, Joe, that’s for the funeral.

(Sharpe 2004:375)

112) *The beautiful curvaceous blonde patient was **whispering frantically**. “Oh please kiss me again, please kiss me again.”*

“I don’t know,” replied the doctor, “it’s not right, I really shouldn’t be fucking you at all.”

<http://reallyfunnyjokes.net78.net/1_31_page-3.html>

Վերը բերված օրինակներում շշուկով խոսելը (*“Joe, Joe,” **whispered his wife; The beautiful curvaceous blonde patient was whispering frantically. “Oh please kiss me again, please kiss me again.”***), անկասկած, ունի իր գործաբանական նպատակը՝ խոսքին հաղորդել որոշակի մտերմության, խորհրդավորության կամ թախանձանքի երանգներ: Տխրության պահին կանանց խոսքը հնչում է ավելի ցածրաձայն և հանդարտ:

Կանայք ավելի հաճախ ու բարձր են ծիծաղում և, համապատասխանաբար, ավելի հաճախ լալիս: Բնական է, որ կանանց խոսքն ուղեկցող հարախոսքային հաղորդակցության ամենահաճախ կիրառվող բաղադրիչներից են ***cry; cry one’s eyes out; wail; mourn; weep; sob; be in floods of tears*** ձևերը, որոնք գործածվում են տխրություն արտահայտելիս: Օրինակ՝

113) *After a wonderful honeymoon night, the new husband wakes to **find his wife in floods of tears**.*

“Darling, what’s wrong? Was it too much for you last night?”

“Oh no, no,” sobbed the wife, “but look at it this morning, I fear we’ve used it all up.”

(Sharpe 2004:112)

114) *A little girl cuts her hand on the playground and runs crying to the teacher. She asks the teacher for a glass of cider.*

“Why do you want a glass of cider?” the teacher asks.

*“To take away the pain,” **sobs the little girl.***

“What do you mean?” the teacher asks.

*“Well,” **sobs the little girl.** “I overheard my big sister say that whenever she has a prick in her hand, she can’t wait to get it in cider.”*

<<http://jokes.cc.com/funny-jokes-about-kids/cmlldb0/in-cider>>

Տղամարդկանց վարքում նույնպես չի բացառվում, սակայն ավելի հազվադեպ է հանդիպում լաց լինելը (**to cry**): Օրինակ՝

115) *It was the funeral of John’s wife and he sat **crying his eyes out** in the front pew. He seemed inconsolable, so the Vicar decided to go over and have a word.*

“I’m so sorry, John, I know this is a difficult time for you but the pain will eventually lessen. You’re still quite a young man and maybe you’ll meet someone else one day.”

John stopped sobbing and looked up at the Vicar. “It’s alright for you to say that, Vicar,” he complained, “but where am I going to get a fuck tonight?”

(Sharpe 2004:376)

Սակայն արական սեռի անձանց համար արտասվելը նշանակում է խախտել արականության մասին պատկերացումներն ու կարծրատիպերը: Արդյունքում տղաների մեջ կարող է ձևավորվել ֆեմինֆոբիա, այսինքն՝ կանացիության արտահայտման վախ: Մեծահասակ տղամարդկանց մեջ այդ վախի դրսևորումը կարող է պայմանավորված լինել այն պատկերացումներով, որ կանացիությունը հատուկ է համասեռամուլ տղամարդկանց (O'Neil 1990):

Ծիծաղը, քմծիծաղը կամ քթի տակ ծիծաղելը (**smile, giggle, laugh**) հարախոսքային հաղորդակցության միջոցներ են, որոնք հատուկ են թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, սակայն անգլիական անեկդոտների լեզվական փաստական հարուստ նյութի քննությունը ցույց է տալիս, որ կինը ավելի հաճախ ժպտում է **ուրախության** հուզավիճակում, իսկ տղամարդկանց շուրթերին հաճախակի ժպիտ է հայտնվում բացասական հույզերի՝ **նյարդայնության, վախի, շփոթմունքի** դեպքում: Ժպիտը հաղորդում է ոչ միայն բնախոսական/հատկանշական և հաղորդակցական, այլև, որ ավելի կարևոր է, գործաբանական տեղեկատվություն, այսինքն՝ հասցեատիրոջը այդ տեղեկատվությունը հաղորդվում է գիտակցաբար: Տվյալ դեպքում ժպիտը գիտակցված է և վերահսկվող: Օրինակ՝

116) A young hitch hiker got a lift with a lorry driver but halfway through the night they found themselves stranded on top of the moors. The driver told her they'd have to wait till morning before getting help so she could have his bed in the cabin and he would sleep on the seat. After a while, the girl whispered, "It's a shame you have to give up

your bed, why don't you come in with me, there's plenty of room."

So the man got in beside her.

"It might be nice if we slept "married'," she giggled.

"Whatever you like," he said, and he turned his back to her and went to sleep.

(Sharpe 2004:58)

Ինքնագոհ ժպիտը, հեգնական ժպիտը, քմծիծաղը՝ արտահայտված **“simper, grin”** բայերով, լինելով հարախոսքային հաղորդակցության միջոցներ, հատուկ են միայն տղամարդկանց (տե՛ս աղյուսակ 7):

Օրինակ՝

*117) A man stops for the night at a country hotel and as he signs in, he notices a beautiful blonde sitting alone at the hotel bar. While the receptionist is sorting out the paperwork, he saunters over to the blonde and returns a couple of minutes later with the girl on his arm. **Grinning**, he says to the receptionist, "Would you believe it! I've just bumped into my wife, so we'd better have a double room."*

The following morning, he goes to pay his bill and discovers it's for more than \$ 2,000.

"What the hell's this for?" he splutters. "I've only been here one night."

“Of course, Sir, but your wife has been here for more than a week!”

(Sharpe 2004:288)

Դիտարկումները ցույց են տալիս, որ հաղորդակցությունն անընդմեջ ու անդադար խոսք չէ (տե՛ս De Fransisco 1991): Շատ հաճախ բանավոր շփումը ներառում է **լռություն** և որոշ դեպքերում այն ավելի բարձր է գնահատվում, քան խոսքը: Լռությունը տեղի է ունենում, երբ խոսքային որոշակի գործողություն հրատապ չէ, սակայն անգամ այդ դեպքում հաղորդակցային նպատակը պահպանվում է (Zimmermann, West 1975): Ուստի հաղորդակցային առումով նշանակալի լռությունը (**silence**) հարախոսքային վարքի ևս մեկ բաղադրիչ է: Օրինակ՝

118) WOMAN: What would you do if I died?

Would you get married again?

MAN: Definitely not!

WOMAN: Why not - don't you like being married?

MAN: Of course I do.

WOMAN: Then why wouldn't you remarry?

MAN: Okay, I'd get married again.

WOMAN: You would? (with a hurtful look on her face)

MAN: (makes audible groan)

WOMAN: Would you sleep with her in our bed?

MAN: Where else would we sleep?

WOMAN: Would you put away my pictures, and replace them with pictures of her?

MAN: *That would seem like the proper thing to do.*

WOMAN: *And would you let her use my golf clubs?*

MAN: *She can't use them; she's left-handed.*

WOMAN: - - - **silence** - - -

MAN: *Oh Shit.*

<

<http://home.globility.com/~superdog/fun/FiveQuestions.html>>

Վերը նշված անեկդոտի օրինակում լռությունը (**silence**) նշանակալի է, այն հուզական տեղեկատվություն է հաղորդում մի հաղորդակցվողից մյուսին: Համատեքստի, իրավիճակի օգնությամբ վերծանվում է հուզական տեղեկատվությունը, որի հիման վրա տեղի է ունենում շփման գործընթացը: Որպես կանոն՝ նման լռությունը կարող է առաջանալ ուժեղ հուզապրումի կամ հուզական ցնցման հետևանքով և այդ կերպ արտացոլվում է հաղորդակցվողների հարախոսքային վարքագծում: Լռությունն ընդհանրապես կարող է դիտվել նաև որպես անզորության վկայություն, իսկ ծավալուն, առատ խոսքը համազոր է գերակայությանը: Տղամարդիկ գերակայում են կանանց՝ նրանց լռեցնելով: Լռությունը կանանց դեպքում ավելի բնութագրական է **վախի և զարմանքի** հույզեր արտահայտելիս, տղամարդկանց դեպքում ավելի հաճախ հանդիպում է **զայրույթի, վախի և ուրախության** հույզեր ապրելիս:

Անգլիական անեկդոտներում տղամարդու խոսքը հնչում է ավելի ծանրակշիռ ու կտրական: Այդ տպավորությունը ստեղծելուն ինչ-որ չափով նպաստում են տեմպն ու դադարը. տղա-

մարդկանց տեմպը փոքր-ինչ դանդաղ է, հիմնականում՝ ի հաշիվ դադարների ու շարույթների տևողության մեծացման, կանանց դեպքում դադարներն ավելի քիչ են (*տե՛ս աղյուսակ 7*): Օրինակ՝

119) *Two fishing pals meet up on the riverbank.*

“Hello, Bob,” says his mate. “Long time no see, what’ve you been up to?”

Bob shakes his head sadly.

“I’ve been on my honeymoon.”

“Well, you sly old fox! You kept that quiet. I bet she’s a pretty lass.”

*“No, not at all. **In fact she’s ugly...and she’s useless in bed,**”*

Bob replies mournfully.

“But, I don’t understand. Why did you marry her then?”

“She’s got worms.”

(Sharpe 2004:182)

Հարախոսքային հաղորդակցության բնութագրերից է նաև **հոգոցը**: Կանանց խոսքում **gasp, sigh** հարախոսքային հաղորդակցության միջոցները ի հայտ են գալիս կանանց **անհանգստության և հուզմունքի**, իսկ տղամարդկանց դեպքում՝ **շփոթմունքի** հուզավիճակներում: Օրինակ՝

120) *“Oh Bob,” **sighed his wife.** “I wish you wouldn’t go down the pub every night. You drink far too much. Here, let me show you something.”*

Bob's wife put two glasses before him, one filled with whisky, the other with water. Into each she dropped a worm. The worm in the water swam around happily while the worm in the whisky had a fit and sank to the bottom, dead.

"There!" said the wife triumphantly. "Now what does that show you?"

Bob looked at the two glasses and replied, "It shows me that if you drink, you won't get worms. Now I'm off to the pub."

(Sharpe 2004:212)

Այսպիսով՝ հարախոսքային հաղորդակցությունն առավել հաճախ հանդիպում է տղամարդկանց խոսքային վարքագծում **զայրույթի** հուզավիճակում, իսկ կանանց խոսքային վարքագծում այն բնութագրական է **վախի և տխրության** հուզավիճակներին: **Տխրության** հույզի հարախոսքային արտահայտությունն ավելի տեսանելի է կանանց, քան տղամարդկանց խոսքում:

Ամենակայուն գենդերային կարծրատիպերից համարվում է կանանց մեծ զգացմունքայնությունը (տե՛ս Օժոժով, Օժոժովա 1981): Ուստի տղամարդու դերի վերաբերյալ արտահայտված ավանդական մոտեցում ունեցող տղամարդիկ համարում են, որ եթե տղամարդը զգացմունքային չպետք է լինի, ապա հարկ չկա զարգացնելու հուզարտահայտչական ունակությունները և մյուսների հույզերը հասկանալու կարողությունը: Արդյունքում տղամարդկանց և կանանց միջև եղած բնական տարբերություններն ավելի են մեծանում:

Հարախոսքային մակարդակում հուզարտահայտչական միջոցների գենդերային առանձնահատկությունների վիճակագրու-

թյունը ներկայացված է աղյուսակում (աղյուսակը Ա.Տ. Կնյազյանի):

Աղյուսակ 7

Հարախոսքային միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
Շշուկ, փսփսոց, քչիչոց	85%	15%
Քղավոց, գոռգոռոց, գոռում-գոչյուն, գոգոռոց	40%	60%
Լաց	70%	30%
Ծիծաղ, ժպիտ, քրքջոց, կշկշոց	75%	25%
Քմծիծաղ, խնդուք	25%	75%
Դադար, լռություն, անխոսություն	40%	60%
Հոգոց	65%	35%

Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ անգլիական «կենցաղային» անեկդոտների լեզվական փաստական նյութի վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու, որ գենդերային տարբերությունները առկա են նաև ոչ խոսքային և հարախոսքային մակարդակներում: Այդ տարբերությունները բացատրվում են հետևյալ պատճառներով՝ կանանց և տղամարդկանց կազմախոսական կառուցվածքի և արտաքին տեսքի ակնհայտ տարբերությամբ, հանրային տարբեր դերերի կատարումով և վարքի ու մտածողության ինքնատիպ հակվածությամբ:

Այսպիսով՝ գենդերը կարող է հանդես գալ որպես լեզվաբանական վերլուծության առարկա, եթե լեզվական նյութի հետազոտությունը ընթանում է լեզվաբանական գենդերաբանության հունով: Մեր կողմից կիրառված համալիր մոտեցումը, կարծում ենք,

հնարավորություն է ստեղծում տարբեր խոսույթներում լեզվական փաստերն ու իրողությունները դիտարկել գենդերային տեսանկյունից, ինչն էլ կարող է իր նպաստը բերել ժամանակակից լեզվագենդերաբանական հետազոտությունների տեսության և մեթոդաբանության հետագա մշակման ու զարգացման գործին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ոչ խոսքային և հարախոսքային ձևերը շփման ամենահին միջոցներն են: Մեր նախնիները միմյանց հետ շփվել են դիմախոսության, ձայնի տեմբրի և հնչերանգի, շնչառության հաճախականության, հալացքի օգնությամբ:

2. Գոյություն ունեն ժեստերի բազմաթիվ դասակարգումներ (Чанышева 1979; Горелов 1980 և այլն): Կախված կատարելիք գործառույթից՝ յուրաքանչյուր դասակարգման մեջ ներկայացված են զանազան ժեստեր, որոնք կարող են վկայել խոսողի հուզավիճակի մասին, որն էլ սույն բաժնի հետազոտության առարկան է:

3. Գոյություն ունեն առնվազն տասը հուզարտահայտչական կարգեր, որոնք կարող են արտահայտել մարդու դեմքը. դրանք են՝ **երջանկություն (ուրախություն), զարմանք, վախ, զայրույթ, թախիծ, հակակրանք, արհամարհանք, հեղաբրբրություն, շփոթմունք, վճռականություն** (Leathers 1976: 24):

4. Հույզերի դիմախոսության կողմին վերաբերող հետազոտությունները հին պատմություն ունեն: Սկսած դեռևս Չ. Դարվինից ու Վ. Մ. Բեխտերևից՝ այդ ուղղությամբ ուսումնասիրությունները ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը (Дарвин 1953; Бехтерев 1994): Դրանցից շատերը նվիրված էին այն բանի բացահայտմանը, թե մարդն ինչ չափով և արդյո՞ք ունակ է ճիշտ հասկանալու այլ մարդկանց դիմախոսական հակազդեցությունները: Չ. Դարվինի էվոլյուցիոն տեսության համաձայն՝ դիմախոսությունը (առաջին հերթին դեմքի մկանների շար-

Ժումները, որոնք հույզեր են արտահայտում) բնածին է, կախված չէ ազգությունից կամ մշակույթից և ամբողջ աշխարհում չի տարբերվում մարդկային արարածների մեջ: Դեմքի արտահայտությունը կարող է ազդարարել անգամ լեզվից զուրկ տեսականների բացասական վերաբերմունքի մասին (Дарвин 1953): Այդուհանդերձ, XX դարի առաջին կեսին առաջատար մարդամշակութաբաններից շատերը՝ ներառյալ Մ. Միդը, հայտնաբերեցին բազմաթիվ վկայություններ առ այն, որ տարբեր մշակույթների ներկայացուցիչների շրջանում առկա են արտահայտչական վարքի զգալի տարբերություններ, այդ թվում՝ դիմախոսության մեջ: Նրանց կարծիքով, տարբերությունների վեր հանումը նշանակում է, որ դիմախոսությունը ևս լեզու է, որին, ինչպես և ցանկացած այլ լեզվին, մարդը տիրապետում է հանրայնացման գործընթացում (Mead 1935): Մյուս կողմից, նախորդ դարի 60-ական թվականներին Պ. Էքմանի և Ու. Ֆրիզենի կատարած մեծ թվով փորձերը ի հայտ բերեցին տարբեր մշակույթներում դիմախոսության անփոփոխակ լինելը (Ekman, Friesen 1971): Հետագայում ստեղծվեցին նոր աշխատանքներ, որոնք կրկնեցին ու զարգացրին Պ. Էքմանի և Ու. Ֆրիզենի արդյունքները:

5. Շատ հույզեր նաև արտահայտման համակողմանի բնույթ ունեն: Օրինակ՝ ատամները սեղմելը շատ մշակույթներում զայրույթի համակողմանի արտահայտությունն է: 2. Դարվինը ենթադրում էր, որ հույզերի դրսևորման համակողմանիությունը գոյատևման համար հարմարողական նշանակություն ունի (Дарвин 1953):

6. Ամերիկացիները նայում են աչքերի մեջ միայն այն դեպքում, եթե ուզում են համոզվել, որ գրուցակիցը իրենց ճիշտ է հասկացել: Անգլիացիների համար աչքերով շփումն ավելի սովորական է. նրանք ստիպված են նայել գրուցակցին, որն ակամա թարթում է աչքերը՝ վստահեցնելու, որ ուշադիր ունկնդիր է: Սակայն Անգլիայում աչքերի մեջ սևեռուն երկար նայելը համարվում է անվայել:

7. Հարկ է նշել, որ վերլուծության արդյունքում մեր կողմից նկատվել են ժեստեր, որոնք ո՛չ այս, ո՛չ այն սեռին բնորոշ չեն:

8. Հարախոսքային հաղորդակցություն ասելով՝ հասկանում ենք հնչյունային այն ազդանշանների համախումբը, որոնք իրենց ֆիզիկա-

կան և քանակական բնութագրերով ուղեկցում են բանավոր խոսքը լրացուցիչ նշանակություններով:

9. Մի շարք հեղինակներ «*հնչերանգ*», «*առողջանություն*» և «*լեմբեր II*» եզրույթները որոշ համատեքստերում օգտագործում են որպես հոմանիշներ, իսկ մի քանիսում առանձնացվում են: Այսպես, օրինակ՝ Մ. Վ. Դավիդովը, ընդհանուր առմամբ նախընտրելով «*հնչերանգ*» եզրույթը վերհատույթային չափորոշիչների համախումբը բնորոշելու համար (օրինակ՝ «*հուզականորեն հագեցած հնչերանգ*», «*բազմանշանակ հնչերանգ*»), «*լեմբեր*» եզրույթը գործածում է այն ժամանակ, երբ ձայնի որակները առաջնային դեր են կատարում: Այնպիսի չափորոշիչ, ինչպիսին «*ձայնի որակն*» է, սերտորեն կապված է ձայնային ապարատի կարգավորման հետ (Davydov, Egorov 1971): Ինչ վերաբերում է խոսքային ձայնի բաղադրիչներին, ապա շատ հեղինակներ (Миндрул 1986; Козырева 1986) այն նեղ իմաստով համարում են հնչերանգի (այսինքն՝ բարեհնչյունության, ձայնածավալի, ուժգնության) և ձայնի որակների (օրինակ՝ շնչեղության, խոպոտության, ռնգայնության և այլն) միասնություն: Այսպիսով՝ «*խոսքային ձայն*» հասկացությունը ներառում է չափորոշիչներ, որոնք անմիջականորեն կապված են ձայնաստեղծման հետ (այսինքն՝ ձայնի բարձրակետային, դինամիկ և որակական ելևէջումները): Նշյալ սահմանման համաձայն՝ հնչյունավորման նշանակալի ընդհատումը (այսինքն՝ դադարը) և տեմպը խոսքային ձայնի անմիջական մասերը չեն, քանի որ կապված չեն ձայնակազմավորման գործընթացի հետ (Миндрул 1980):

10. Ձայնի որակը համարվում է խոսքային ձայնի առաջնային բաղադրիչներից մեկը, որը վերջին շրջանում լեզվաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում է: Մանրամասն ուսումնասիրվել է ձայնորակի կապը խոսքային օրգանների աշխատանքի հետ, որը տարբերվում է մի լեզվից մեկ այլ լեզվի, մեկ հանրային խմբից մեկ ուրիշին, մի մասնագիտության ներկայացուցիչներից մյուսին անցնելիս և այլն: Խոսքային օրգանների առանձնահատուկ կարգավորվածություն է նկատվում այն մարդկանց շրջանում, որոնք գտնվում են որոշակի հուզավիճակում, պատկանում են տարբեր սեռերի, տարիքային խմբերի և այլն:

Ձայնային ապարատի նման կարգավորումը հիմքում հատույթային չէ, սակայն այն ազդում է հնչյունակազմական բոլոր չափորոշիչների վրա, ինչպես հատույթային, այնպես էլ վերհատույթային մակարդակում: Ձայնային ապարատի յուրահատուկ կարգավորվածությունից կախված՝ տարբերակվում են ձայնային այնպիսի որակներ, ինչպիսիք են շնչեղությունը, նվնվան տեմբրը, ճղճղանությունը, շշուկը, խռպոտությունը (Davydov, Egorov 1971; Миндрул 1980):

11. «Տեմբր» եզրույթն ունի ևս երկու նշանակություն.

- ձայնի յուրատեսակ երանգավորում (խռպոտություն, ռնգայնություն, շնչեղություն և այլն),
- որպես բոլոր հնչերանգային չափորոշիչների համախումբ, որն օգտագործվում է որոշակի մետանշանային բովանդակություն հաղորդելու համար (Տեմբր II) (Davydov, Egorov 1971; Миндрул 1980):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Վևորգյան Հ.Գ.** Լենինականյան զվարճալի զրույցներ և սրամտություններ, Երևան, «Հայաստան», 1990.178 էջ:
2. **Թանաշյան Ա., Խաչատրյան Հ.** Գենդերային զգայունություն և զգայուն լրագրություն: Դասընթացի նյութերի ժողովածու: Պատրաստվել է Եվրոպական միության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ. Եր., 2011.38 էջ:
3. **Агеев В.С.** Психология межгрупповых отношений. М.: Изд-во МГУ, 1983.144 с.
4. **Алпатов В.М., Крючкова Т.Б.** О мужском и женском вариантах японского языка // Вопросы языкознания. М.,1980.№3. С. 58-69.
5. **Анастаси А.** Дифференциальная психология // Психология индивидуальных различий. Тексты / Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.Я. Романова. М.:Изд-во Моск. ун-та, 1982. С. 8-14.
6. **Анисимова Р.В.** Отражение категории времени // Текст как отображение картины мира. М., 1989. С. 66-71.
7. **Арнольдov А.И.** Введение в культурологию (новая расширенная редакция). Учеб. пособие. М.: Народная Академия культуры и общечеловеческих ценностей, 1993. 352 с.
8. **Артемова А.В.** Эмоционально-оценочная объективация концепта “женщина” в семантике фразеологических единиц (на материале английской и русской фразеологии): Автореф. дисс.... канд.филол.наук: 10.02.20. Пятигорск, 2000.16 с.
9. **Арутюнова Н.Д.** Язык и мир человека. М.: Школа Языки русской культуры, 1998. 896 с.
10. **Арутюнова Н.Д.** Введение // Логический анализ языка. Ментальные действия. М.: Наука, 1993. С. 3-6.
11. **Бабаева Е.В.** Лингвокультурологические характеристики русской и немецкой аксиологических картин мира: Автореф. дис. канд. филос. наук. Волгоград: Наука, 2004. 438 с.

12. **Бакушева Е.М.** Особенности эмоциональной речи мужчин и женщин // Язык и эмоции: сборник научных трудов. Волгоград: Перемена, 1995. С. 32-37.
13. **Балли Ш.** Французская стилистика, Перевод с франц. М.: Изд-во иностр. лит-ры, 1961. 394 с.
14. **Бартминский Е.** Этноцентризм стереотипа: Результаты исследования немецких (Бохум) и польских (Люблин) студентов в 1993-1994 годах. // Речевые и ментальные стереотипы в синхронии и диахронии: Тез. конф. М., 1995. С. 7-9.
15. **Бенвенист Э.** Общая лингвистика. М.: Прогресс. 1974. 448 с.
16. **Берковиц Л.** Агрессия: причины, последствия и контроль. М.: Олма-Пресс. 2002. 510 с.
17. **Берн Ш.** Гендерная психология., Москва.ОЛМА-ПРЕСС, 2001. 317 с.
18. **Бергсон А.** Смех. М.: Искусство, 1992. 127 с.
19. **Бехтерев В.М.** Избранные работы по социальной психологии Москва.: "НАУКА", 1994. 400 с.
20. **Брагина Н.Г.** ИмPLICITная информация и стереотипы дискурса // ИмPLICITность в языке и речи / Отв. ред. Е.Г. Борисова, Ю.С. Мартемьянов. М.: Языки русской культуры, 1999. С. 43-57.
21. **Брутян Л.Г.** Язык и гендер. Ереван: Изд-во "Международ. акад. философии", 2008. 150 с.
22. **Борисова М.А.** К вопросу о расхождениях грамматических категорий в разных языковых культурах // Вестник МГУ. Сер. 19. Лингвистика и межкультурная коммуникация, 2003. №4. С. 91-103.
23. **Вайсгербер Й.Л.** Родной язык и формирование духа. М.: Изд-во МГУ, 1993. 223 с.
24. **Вежбицкая А.** Язык. Культура. Познание. М.: Русские словари, 1997. 405 с.
25. **Вейлерт А.А.** О зависимости количественных показателей языка от пола говорящего лица // Вопросы языкознания, 1976. №5. С. 138-143.
26. **Вейнингер О.** Пол и характер. Москва: Латард, 1997. 31 с.

27. **Верма Р.Р.** Отсутствующая личность. // Феминизм: восток, запад, Россия. М.: Наука, 1993. С. 146-156.
28. **Виноградов В.В.** О языке художественной прозы. Избранные труды. М., 1980. 358 с.
29. **Винокур Т.Г.** Говорящий и слушающий: Варианты речевого поведения. М.: Наука, 1993. 176 с.
30. **Воробьев В.В.** Лингвокультурология (теория и методы). М.: Изд-во РУДН, 1997. 331 с.
31. **Воробьев В.В.** О понятии лингвокультурологии и ее компонентах // Язык и культура: Вторая международная конференция. Киев, 1993. С. 42-48.
32. **Вольф Е.М.** Субъективная модальность и семантика пропозиции// Прагматика и проблемы интенциональности: Сб. науч. трудов / ИЯ АН СССР. М., 1988. С. 124-143.
33. **Вольф Е.М.** Оценочное значение и соотношение признаков “хорошо/плохо” // Вопросы языкознания, 1986, № 5. С. 98-106.
34. **Гак В.Г.** Язык как форма самовыражения народа/ Сб. статей: Язык как средство трансляции культуры. М.: Наука, 2000. 311 с.
35. **Гаспарян С.К., Князян А.Т.** Гендерность в английской паремиологии и фразеологии. Сб. научных трудов “Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում”. Ереван, 2010. С. 49-52.
36. **Гаспарян Г. Р.** Феномен У. Сарояна в контексте межкультурного дискурса (к проблеме изучения лингвокогнитивной структуры художественного текста). Автореф. дис. доктора филологических наук. Ереван, ЕГУ, 2010.
37. **Гольдин В.Е., Сиротинина О.Б.** Внутринациональные речевые культуры и их взаимодействие // Вопросы стилистики. Саратов: Изд-во Саратовск. ун-та, 1993. С. 9-19.
38. **Гомон Т.В.** Исследование документов с деформированной внутренней структурой. Дисс. ... кандидата юридических наук. М., 1990. 182 с.

39. **Горелов И. Н.** Невербальные компоненты коммуникации. М.: Наука, 1980. 104 с.
40. **Горелов И. Н., Седов К.Ф.** Основы психолингвистики. М.: Лабиринт, 1997. 224 с.
41. **Городникова М.В.** Гендерный фактор и распределение социальных ролей в современном обществе (на материале брачных объявлений) // Гендерный фактор в языке и коммуникации: Сб. науч. трудов. Вып 446. М.: МГЛУ, 1999. С. 36 - 44.
42. **Городникова М.В.** Гендер в коммуникативной интеракции // Гендер: Язык. Культура. Коммуникация: Докл. Второй международной конф., Москва 22-23 ноября 2001. М., 2002. 70 с.
